

SIGMA ծրագիրը OECD-ի և Եվրամիության համատեղ նախաձեռնություն է, որը գլխավորապես ֆինանսավորվում է ԵՄ-ն PHARE ծրագրի կողմից



SIGMA

Support for Improvement in Governance and Management
A joint initiative of the OECD and the European Union, principally financed by the EU

Sigma Paper No. 25: Public Opinion Surveys as Input to Administrative Reform

SIGMA փաստաթուղթ No. 25՝ Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը վարչական բարեփոխումների գործընթացներում

SIGMA ծրագիր

SIGMA – կառավարման և մենեջմենթի բարելավման օժանդակություն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, Եվրամիության և OECD-ի համատեղ նախաձեռնությունն է: Այս ծրագիրը օժանդակում է անցումային շրջանում գտնվող 13 երկրներում իրականացվող վարչական բարեփոխումների գործընթացներին: Այն ֆինանսավորվում է Եվրամիության PHARE ծրագրի կողմից: OECD-ին զարգացած շուկայական տնտեսություն ունեցող 29 ժողովրդավարական երկրների միջկառավարական կազմակերպություն է:

PHARE ծրագիրը դրամաշնորհներ է տրամադրում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի գործընկեր երկրներին Եվրամիության անդամակցության պարտավորությունների ստանձնման նախապատրաստական փուլում:

PHARE և SIGMA ծրագրերը իրականացվում են Ալբանիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Բուլղարիայում, Չեխիայում, Էստոնիայում, Մակեդոնիայում, Հունգարիայում, Լատվիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Սլովակիայում և Սլովենիայում:

SIGMA ծրագիրը իրականացվում է 1992թ-ից: SIGMA-ն աշխատում է OECD-ի Պետական կառավարման ծառայության հետ, որը տրամադրում է պետական կառավարման ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն և փորձագիտական վերլուծություն քաղաքականություն մշակողներին, ինչպես նաև խթանում է պետական սեկտորի մենեջերների միջև կապը և փորձի փոխանակումը:

SIGMA-ն առաջարկում է շահառու երկրներին ներգրավել փորձառու պետական հաստատությունների ղեկավարների ցանցին, օգտվել համապատասխան տեղեկատվությունից և տեխնիկական գիտելիքներից:

SIGMA-ն նպատակաուղղված է՝

- աջակցել շահառու երկրներին կառավարման բարելավման մեջ, նպաստելով վարչական համակարգի արդյունավետ աշխատանքին և ժողովրդավարական արժեքների, էթիկայի և օրինականության գերակայության սկզբունքի պահպանմանը
- աջակցել տեղական կարողությունների զարգացմանը կառավարական մակարդակով միջազգայնացման և Եվրամիության ինտեգրման մարտահրավերներն ընդունելու համար
- աջակցել Եվրամիության և այլ դոնորների նախաձեռնություններին, օժանդակելով շահառու երկրների պետական կառավարման ոլորտի բարեփոխումների գործընթացին և մասնակցել դոնորների զարժանույթների համակարգմանը

SIGMA-ն իրականացվում է հետևյալ 5 տեխնիկական ոլորտներում՝

- Պետական կառավարման զարգացման ռազմավարություններ
- Քաղաքականության մշակում, համակարգում և կանոնակարգում

- Բյուջետավորում և ռեսուրսների բաշխում
- Պետական ծառայությունների ղեկավարում
- Վարչական հսկողություն, ֆինանսական վերահսկողություն և աուդիտ

Տեղեկատվական ծառայությունների ստորաբաժանումը տարածում է պետական կառավարման թեմայով տպագրված և ինտերակտիվ նյութեր:

Անգլերեն բնօրինակը տպագրվել է OECD-ի կողմից` Sigma Paper No. 25: Public Opinion Surveys as Input to Administrative Reform

© 1998 OECD, բոլոր իրավունքները պաշտպանված են

© 2009 Երիտակ երիտասարդական ՀԿ, Հայաստան

Տպագրությունը կատարվել է OECD-ի թույլտվությամբ

Հայերեն թարգմանության որակի և բնօրինակի տեքստի հետ համապատասխանության համար պատասխանատու է Երիտակ երիտասարդական ՀԿ-ն (www.yeritac-am.org)

Սույն փաստաթղթում շարադրված տեսակետները պատկանում են հեղինակներին և չեն արտացոլում այս ծրագրում մասնակցող Հանձնաժողովի, OECD Անդամ երկրների, կամ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների պաշտոնական կարծիքը:

Երիտակ երիտասարդական հասարակական կազմակերպությունը հայտնում է իր խորին երախտագիտությունը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Կառավարման և մենեջմենթի բարելավման օժանդակություն ծրագրին (SIGMA) սույն փաստաթուղթը հայերեն թարգմանելու և հրատարակելու թույլտվության տրամադրման համար, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետական կառավարման ինստիտուտների և դպրոցների ցանցին (NISPAcee) թարգմանությունը ու հրատարակումը ֆինանսավորելու համար:

Սույն փաստաթղթի թարգմանությունը հնարավոր է դարձել իրականացնել Տեղական կառավարություն և պետական ծառայությունների բարեփոխումներ նախաձեռնության (LGPSRI) աջակցությամբ (Բաց հասարակություն ինստիտուտ(OSI)):

Սույն փաստաթուղթը վերարտադրելու կամ մասամբ կամ ամբողջովին թարգմանելու թույլտվություն ստանալու համար դիմել`

Երիտակ երիտասարդական ՀԿ

ՀՀ Երևան 0070, Երվանդ Քոչար 5, 1h,

Կայք` www.yeritac-am.org

Էլ. փոստ` Alexander@yeritac-am.org

Նախաբան

Այս հաշվետվությունը ուսումնասիրում է հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում իրականացվող վարչական բարեփոխումների գործընթացներում: Տվյալ հաշվետվության նպատակն է ներկայացնել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի կառավարություններին և քաղձառայողներին հասարակական կարծիքի հարցումների օգտագործման կարևորությունը վարչական բարեփոխումների նախապատրաստական և կիրարկման փուլերում, ինչպես նաև խթանել դրանց օգտագործումը:

Մինչ այժմ հասարակական կարծիքի հարցումները արժանացել են գիտական հաստատությունների ուշադրությանը տվյալների հավաքագրման, վերլուծության և մեկնաբանման մեթոդոլոգիական խնդիրների պատճառով: Կա մեծ քանակությամբ գրականություն Կենտրոնական, Արևելյան և OECD երկրների վարչական բարեփոխումների վերաբերյալ: Սակայն վարչական բարեփոխումների գործընթացում հասարակական կարծիքի հարցումների օգտագործման վերաբերյալ կա շատ քիչ տեղեկատվություն: Ներկայացնելով Արևմտյան երկրներում կատարված ուսումնասիրությունները՝ Չեխիայի, Յունգարիայի և Լիտվայի հարցումները, տվյալ հաշվետվությունը կարող է նպաստել ավելի խորը գիտակցմանը, թե ինչպիսի կարևոր ներդրում կարող են ունենալ հասարակական կարծիքի հարցումները վարչական բարեփոխումների գործընթացում:

Հաշվետվությունը կազմվել է չորս աշխատությունների հեղինակների և չորս փորձագետների համատեղ ջանքերով, SIGMA-յի Պետական կառավարման զարգացման ռազմավարության բաժնի ավագ խորհրդատու՝ պրն. Ջեյ Ջեյփսի ղեկավարությամբ: Հեղինակներն են՝ Էլկե ԼՓՖերը (Պետական կառավարման ծառայություն, PUMA); Մայքլ Իլները (Չեխիայի Գիտությունների ակադեմիա); Ջուլիա Սզալայը (Յունգարիայի Գիտությունների ակադեմիա) և Ռասա Ալիսաուսկենեն (Բալթյան հարցումներ, Լիտվա): Փորձագետներն են՝ Դավիթ Ջուսմանը (Հանրային քաղաքականության Ֆորումի տնօրեն և Օտտավայի համալսարանի պրոֆեսոր, Կանադա); Ջոն Էյվինդ Կոլբերգը (Կիրառական սոցիալական հետազոտությունների ինստիտուտի հետազոտությունների գծով տնօրեն); Խուան Դիես-Նիկոլասը (պրոֆեսոր, Կոմպլուքենսե համալսարան, Մադրիդ, Իսպանիա) և Քրիստիան Հայերֆերը (Պոլ Լազարսֆելդ Գեսելշաֆթ, հետազոտությունների գծով տնօրեն, Վիեննա, Ավստրիա):

Վարչական օժանդակությունը կատարվել է Ջեյն Դելարույի կողմից: Այս հաշվետվության մեջ ներկայացված են Չեխիայի, Յունգարիայի և Լիտվայի 1997թ.-ին վերաբերող ուսումնասիրությունները: Այս հաշվետվությունը տպագրվել է OECD-ի Գլխավոր Քարտուղարի

Ուսումնասիրություն: Այն կտպագրվի նաև ֆրանսերեն լեզվով՝ Les enquêtes d'opinion au service de la réforme de l'administration publique:

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմել Ջեյ Ջեյսիսին հետևյալ հասցեով՝

SIGMA – OECD, Անդրե-Պասկալ 2, 75775 Փարիզ, Սիդերս 16, Ֆրանսիա

Հեռ. (33.1) 45.24.79.00

Ֆաքս (33.1) 45.24.13.00

Էլ.փոստ՝ sigma.contact@oecd.org

Կայք՝ www.oecd.org/puma/sigmaweb

Բովանդակություն

SIGMA Ծրագիրը -----	2
Նախաբան -----	4
Համառոտ շարադրանք-----	9
Հասարակական կարծիքի Հարցումներ և Վարչական Բարեփոխումներ - Ջեյ Ջեյփս	
1. Ներածություն-----	16
2. Ստահոգիչ խնդիրներ-----	18
3. Երաշխիքներ-----	19
4. Հաշվետվություններ-----	20
5. Անփոփում և եզրակացություններ-----	22
Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը Արևմտյան Եվրոպայի վարչական բարեփոխումների գործընթացում Էլկե LՓՖլերը	
1. Նախաբան-----	23
2. Ներածություն-----	25
3. Պետական կառավարման հաստատությունների, կառավարության և պետական կառավարման ոլորտի գործողության և դրանց ճանաչման մոնիտորինգ-----	26
4. Քաղաքականության առաջնահերթ խնդիրները-----	28
5. Եվրամիության ինտեգրման վերաբերյալ տեսակետները-----	30
6. Հասարակական կարծիքի հարցումները քաղաքական ցիկլում-----	31
6.1. Քաղաքականության ընդունումը-----	31
6.2. Քաղաքականության կիրառումը-----	33
6.3 Քաղաքականության գնահատումը-----	34
7. Պետական կառավարման հաստատությունների իմիջը-----	42
8. Վարչական համակարգում հասարակական կարծիքի հարցումներից ստացված տեղեկատվության տեղադրումը-----	44
9. Հարցումների գնահատումը որպես վարչական բարեփոխումների գործիք-----	45
Հղումներ-----	48
Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը Չեխիայի վարչական բարեփոխումների գործընթացում - Մայքլ Իլներ	
1. Ներածություն-----	51
2. Վարչական բարեփոխում-----	51
3. Հարցումների պատմությունը-----	54

4. Պետական կառավարման հաստատությունների, կառավարության և պետական կառավարման ոլորտի գործողության և դրանց ճանաչման մոնիտորինգ-----	57
5. Քաղաքականության առաջնահերթ խնդիրները-----	60
6. Եվրամիության ինտեգրման վերաբերյալ տեսակետները-----	63
7. Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը քաղաքական ցիկլում-----	64
7.1 Քաղաքականության ընդունումը-----	64
7.2 Քաղաքականության կիրառումը-----	66
7.3 Քաղաքականության գնահատումը-----	68
8. Պետական կառավարման հաստատությունների իմիջը-----	71
9. Վարչական համակարգում հասարակական կարծիքի հարցումներից ստացված տեղեկատվության տեղադրումը-----	71
10. Եզրակացություններ-----	72
Հղումներ-----	75

Հավելված՝ Պետական կառավարման ոլորտին վերաբերող հարցումներով և այդ հարցումներից ստացված տեղեկատվության արխիվացմամբ զբաղվող խոշոր հետազոտական գործակալությունների և ինստիտուտների հասցեները-----	77
--	----

Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը Հունգարիայի վարչական բարեփոխումների գործընթացում – Ջուլիա Սզալայ

1. Ներածություն-----	78
2. 1989թ-ից հետո կատարված վարչական բարեփոխումների գործընթացի առանձնահատկությունները-----	79
3. Հասարակական կարծիքի հարցումների պատմությունը և առանձնահատկությունները-----	81
4. Պետական կառավարման հաստատությունների, կառավարության և պետական կառավարման ոլորտի գործողության և դրանց ճանաչման մոնիտորինգ-----	84
5. Քաղաքականության առաջնահերթ խնդիրները՝ տեղական մակարդակով կատարված բարեփոխումների վերաբերյալ տեսակետները-----	86
6. Եվրամիության ինտեգրման վերաբերյալ տեսակետները-----	87
7. Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը քաղաքական ցիկլում-----	89
7.1. Քաղաքականության ընդունումը՝ առողջապահության ոլորտի բարեփոխումները-----	89
7.2. Քաղաքականության կիրառումը՝ բյուջետային բարեփոխումների վերաբերյալ տեսակետները-----	90
7.3 Քաղաքականության գնահատումը՝ տնտեսական բարեփոխումների ձեռքբերումների և կորուստների վերաբերյալ տեսակետները-----	92
8. Պետական կառավարման հաստատությունների իմիջը-----	94

9. Վարչական համակարգում հասարակական կարծիքի հարցումներից ստացված տեղեկատվության տեղադրումը-----	95
10. Եզրակացություններ-----	98
Հղումներ-----	99
Հավելված՝ Խոշոր հասարակական հարցումներ կատարող կենտրոնների հասցեները-----	101

Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը Լիտվայի վարչական բարեփոխումների գործընթացում – Ռասա Ալիսաուսկենե

1. Ներածություն-----	102
2. Վարչական բարեփոխումներ-----	103
2.1 Սոցիալական փոփոխությունները Բալթիայում-----	103
2.2 Վարչական բարեփոխում-----	104
3. Հարցումների պատմությունը-----	105
3.1 Քաղաքական տրամադրությունները Լիտվայում-----	108
4. Պետական կառավարման հաստատությունների, կառավարության և պետական կառավարման ոլորտի գործողության և դրանց ճանաչման մոնիտորինգ-----	109
4.1. Տնտեսական, քաղաքական և սոցիալական ինստիտուտները-----	109
4.2. Կառավարություն, պետական սեկտոր և պետական կառավարում-----	110
5. Քաղաքականության առաջնահերթ խնդիրները-----	111
6. Եվրամիության ինտեգրման վերաբերյալ տեսակետներ-----	112
7. Հասարակական կարծիքի հարցման օգտագործումը քաղաքականության մշակման ցիկլում-----	113
7.1. Քաղաքականության ընդունումը-----	113
7.2. Քաղաքականության կիրառումը-----	114
7.3. Քաղաքականության գնահատումը-----	115
8. Պետական կառավարման հաստատությունների իմիջը-----	118
9. Վարչական համակարգում հասարակական կարծիքի հարցումներից ստացված տեղեկատվության տեղադրումը-----	119
10. Եզրակացություններ-----	119
Հղումներ-----	121
Հավելված՝ Լիտվայում խոշոր հասարակական կարծիքի հարցումներ կատարող ինստիտուտների հասցեները-----	122

Համառատ Շարադրանք

Հասարակական կարծիքի հարցումները որպես տեղեկատվական գործիք կառավարության կողմից կատարվող բարեփոխումների մշակման և իրականացման գործընթացներում

Կառավարությունները արձագանքում են այն տեղեկատվության հիման վրա, որին նրանք տիրապետում են: Ներքին գործունեության և արտաքին միջավայրի մասին տեղեկատվությունը հավաքագրվում և մշակվում է պետական կառավարման ոլորտին պատկանող բոլոր կազմակերպությունների կողմից (նախարարություններ, հանձնաժողովներ, գործակալություններ և այլն): Տեղեկատվությունը ազդում է մարդկանց և կազմակերպությունների վարքագծի վրա: Այսպիսով տեղեկատվությունը կարող է հանդիսանալ վարքագծային մոդելների փոփոխման և պետական կառավարման ոլորտի բարեփոխումների իրականացման հզոր գործիք:

Ջարգացման և մոդեռնիզացիայի գործընթացները OECD անդամ երկրներում հանգեցրին ավելի պահանջկոտ հասարակության ձևավորմանը, որը ցանկանում էր ստանալ ավելի բարձր որակի ծառայություններ և ուներ իր ասելիքը ծառայությունների տեսակի և դրանց մատուցման վերաբերյալ: Հասարակության ցանկությունը ներգրավված լինելու որոշումների կայացման գործընթացին զնալով աճում էր: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում լայնատարած ընդունված է այն փաստը, որ որակյալ և արձագանքող հասարակությունը նպաստում է տնտեսական գործունեության աճին: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ են որակյալ տեղեկատվությունը և քաղաքացիների ակտիվ ներգրավվումը: Հասարակական կարծիքի հարցումները վերոնշյալ նպատակներին հասնելու ամենակարևոր միջոցներից են:

Օրինակ՝ Ապակենտրոնացումը դա այն կարևոր բարեփոխումն է, որը շատ անցումային շրջանում գտնվող երկրներ փորձել են իրականացնել կամ իրականացրել են: 1991թ-ին Չեխիայի խորհրդարանի հանձնարարությամբ անցկացված հասարակական կարծիքի հարցումները բացահայտեցին մի հետաքրքիր անհամապատասխանություն՝ հասարակությունը նախընտրում է պետության ավելի ապակենտրոնացված ձևը, սակայն չի ցանկանում ունենալ տարբեր պետական մարմինների բազմազանություն, վախենալով ֆինանսավորման խնդիրներից:

Հաշվի առնելով այն փաստը, որ այլ հարցումները նույնպես բացահայտել են հասարակության նմանատիպ վերաբերմունքը, գաղտնիք չէ, որ Չեխիայի կառավարությունը պետք է զգուշությամբ վերաբերվեր տարածքային բարեփոխումների խնդրին:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի կառավարությունները կարող են օգուտներ քաղել քաղաքացիներից ստացված տեղեկատվությունից, երբ իրականացնում են նոր քաղաքականություն կամ կիրառում արդեն իսկ փորձված քաղաքականություն կառավարման կառուցվածքներում և ինստիտուտներում բարեփոխումներ իրականացնելու, պետական ծառայությունների և ծրագրերի փոփոխման, գործակալություններ ստեղծելու կամ լուծարելու գործընթացներում:

Հարկ է նշել, որ որոշ բարեփոխումներ անդրադառնում են բոլոր քաղաքացիների վրա, սակայն կառավարության կողմից առաջարկվող փոփոխությունների մեծ մասն ազդում է որոշակի խմբերի վրա, որոնք կամա կամ ակամա դառնում են տվյալ փոփոխությունների թիրախը:

Կառավարության կողմից կատարվող վարչական բարեփոխումների մշակման գործընթացի համար շատ կարևոր է շահագրգիռ կողմերի արձագանքը: Այդ արձագանքների վրա է հիմնվում կառուցվածքային և կադրային գործառույթների մոդելը, ինչպես նաև պետական կառավարման մշակույթի սկզբունքները: Քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ կառավարության մարմինները կարող են օգուտ քաղել այսպես կոչված հաճախորդների արձագանքներից:

Անցումային փուլի ընթացքի, շուկայական տնտեսությունների և ժողովրդավարական համակարգների հիմնադրման հետ մեկտեղ աճում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի քաղաքացիների սպասելիքները իրենց կողմից ընտրված կառավարությունների նկատմամբ: Քաղաքացիները որպես հաճախորդներ նույնպես շահագրգռված են ծառայությունների որակի, հասանելիության, գնի, հարմարության և անվտանգության մեջ: Քաղաքացիները որպես հարկատուներ ունեն իրենց ասելիքը քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ:

Պետական ծառայության հաստատությունների բարեփոխումների գործընթացի մի մասը ուղղված է այդ բարեփոխումները հնարավորինս համապատասխանեցնելու քաղաքացիների շահերին: Հասարակական կարծիքի հարցումները տալիս են այն տեղեկատվությունը, որի միջոցով կարելի է չափել քաղաքացիների պահանջները գոհացնելու աստիճանը:

Վարչական բարեփոխումների արդյունավետության բարձրացումը պահանջում է ճիշտ ընտրված թիրախային խմբեր

Շատ հաճախ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները բավարար չեն համապատասխան թիրախային խմբերի խնդիրների լուծման համար, քանի որ տվյալ վարչական բարեփոխումների ռազմավարության մեջ չի նախատեսված այդ բարեփոխումների իրականացման պլանը: Իրականացման գործընթացը պետք է հիմնված լինի պետական համակարգի տվյալ փոփոխությունը ընդունել պատրաստ լինելու տեղեկատվության վրա:

Հասարակական կարծիքի հարցումները դա այն կարևոր կապն է, որը ոչ միայն ներկայացնում է տեղեկատվություն թե որքանով տվյալ բարեփոխումները կընդունվեն հասարակության կողմից, այլ նաև բացահայտում է այդ բարեփոխումները իրականացնողների պատրաստվածության աստիճանը:

Վարչական բարեփոխումը չի կարող բավարարել հասարակության բոլոր խմբերի շահերը, այսպիսով հասարակական կարծիքի հարցումների նպատակն է որոշել թե որքանով տվյալ բարեփոխումները կծառայեն տվյալ թիրախային խմբի պահանջների բավարարմանը:

Վարչական բարեփոխումների շահագրգիռ խումբ են հանդիսանում վարչական ծառայողները և վարչական էլիտան: Ինչպես ցույց է տալիս շատ բարեփոխումների անհաջող

փորձը, շատ կարևոր է պետական և վարչական բարեփոխումներ իրականացնող մարմինների համար ընդունել վարչական բարեփոխումները որպես գործընթաց և հաշվի առնել այդ բարեփոխումների ազդեցության տակ գտնվող խմբերի կարծիքները: Այլ կերպ ասած բարեփոխումներից առաջ, դրանց ժամանակ և դրանցից հետո տվյալ բարեփոխումները իրականացնող անձնակազմի հարցումները շատ կարևոր են վարչական բարեփոխումների հաջող իրականացման համար:

Օրինակ՝ բարձր պաշտոնյաների դժգոհությունները արտահայտող և իրար հաջորդող երկու սոցիոլոգիական հարցումներից հետո Կանադայի կառավարությունը սկսեց բարեփոխումների գործընթաց «Պետական ծառայություն 2000» խորագրով, որի նպատակն էր փոխել կադրային քաղաքականությունը և պետական հաստատություններում սահմանված կարգերը: Հարցումներից ստացված տվյալները խթանեցին համապատասխան բարեփոխումների գործընթացը, որը հետագայում շտկվեց բարձ պաշտոնյաների ֆոկուս խմբերից ստացված տվյալների հիման վրա:

Սակայն բավարար չէ միայն պարզել պետական կառավարման համակարգի անձնակազմի կարծիքները և վերաբերմունքը: Քանի որ պետական հաստատությունները գտնվում են տարբեր քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնների ազդեցության տակ, ապա հարցումները պետք է ընդգրկեն պետական ծառայություններ մատուցող գործակալությունների հաճախորդներին: Պետական կառավարման համակարգի հաճախորդներն են՝ պետական ծառայություններից օգտվող հաճախորդները(օրինակ՝ սոցիալական օգնություն ստացող քաղաքացիները), պետական ծառայությունները ֆինանսավորող քաղաքացիները՝ հարկատուները, քվեարկող ընտրազանգվածը և հասարակությունը:

Օրինակ՝ Լիտվայի երիտասարդների հարցերով զբաղվող պետական խորհուրդը անցկացրեց մի հարցում, որի նպատակն էր պարզել, թե որոնք են երիտասարդների կարծիքով երկրի ամենակարևոր խնդիրները: Հարցվողները նշել էին հանցագործությունը՝ գործազրկությունը որպես առավել մտահոգիչ խնդիրներ: Ստացված արդյունքները օգտագործվեցին կրթության բարեփոխումների և երիտասարդության հարցերին վերաբերող ծրագրերի մշակման համար:

Վարչական մարմինները կարող են օգտագործել հարցումներից ստացված տվյալները համալրող այլ մեխանիզմներ

Իհարկե կան տեղեկատվություն և արձագանքներ ստանալու այլ ճանապարհներ: Կան որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցության տարբեր եղանակներ: Դրանց թվում են ձևական խորհրդատվությունները, հասարակական լսումները, հանդիպումները և ֆոկուս խմբերը: Խորհրդատվությունները և տեղեկատվության հավաքագրումը կատարվում են պետական ծառայությունների բարելավման համար:

Հարցումները հանդիսանում են տեղեկատվության հավաքագրման ավելի արագ, շատ հաճախ ավելի էժան միջոց, երբ կարելի է ընդգրկել բնակչության ավելի մեծ խմբեր:

Հանդիսանալով որոշումների կայացման գործընթացի վրա անուղղակի ազդեցություն ունեցող միջոց, հարցումները ընկալվում են որպես ժողովրդավարությանը մասնակցելու հնարավորություն:

Այս մոտեցումը ավելի է կարևորվում, երբ քաղաքացիները գիտակցում են, որ իրենց տեսակետները ոչ միայն զուտ հավաքագրվում են, այլ նաև կարող են ունենալ իրենց ազդեցությունը տարբեր քաղաքականությունների ընտրության վրա: Արդյունավետ տեղեկատվության հավաքագրման հարցում կառավարությունները օգտագործում են արձագանքներ հավաքագրող տարբեր մեխանիզմներ: Կարծիքների հավաքագրման ընթացքում կառավարությունը խորհրդակցում է քաղաքացիների հետ, սակայն իրեն է վերապահում վերջնական որոշումների կայացման իրավունքը:

Օրինակ՝ 1989թ-ից սկսած Շվեդիայում գործում է «*Swedish National Satisfaction Barometer*» հասարակական կարծիքի որոշման գործիքը, որի միջոցով գնահատվում է խոշոր պետական ձեռնարկությունների ծառայություններից օգտվող քաղաքացիների գոհունակությունը: Ստացված տվյալների հիման վրա պետական ձեռնարկությունները բարելավում են ծառայությունների որակը և մատուցման եղանակները:

Հարցումներից ստացված տեղեկատվության արդյունավետ օգտագործումը պահանջում է կառավարության երաշխիքներ

Եթե կառավարությունը անցկացնում է հարցում կամ օգտագործում է հարցումից ստացված տվյալները, ապա կառավարությունը պետք է երաշխավորի հարցման հուսալի մեթոդների օգտագործումը: Կառավարությունները ստեղծում են սոցիոլոգներից կազմված հատուկ ստորաբաժանումներ, որոնք հաստատում են հարցումից ստացված տվյալների հուսալիությունը և ճշտությունը: Վարչապետի կաբինետի կամ այլ կենտրոնական գործակալության կազմում նման ստորաբաժանման ստեղծումը չի դիտվում որպես միջոցների անհիմն օգտագործում, քանի որ հաշվի են առնվում այդ ստորաբաժանումներից ստացված առավելությունները:

Օրինակ՝ Լեհաստանի վարչապետի կաբինետի կազմում գործում է նմանատիպ մի միավոր, որը կատարում է հարցումներից ստացված արդյունքների վերլուծություն և ներկայացնում է ստացված տեղեկատվությունը կառավարությանը: Կանադայի կառավարության ծառայությունների նախարարությունը ունի մի ստորաբաժանում, որը գնահատում է մինչ տեղի հայտարարելը ծառայությունների մատուցման (հարցումների կատարում) պայմանագրերը:

Չարցումներից ստացված վստահելի տվյալները նպաստում են բարեփոխումների ուղղվածության որոշմանը

Կառավարությունները կարող են ստեղծել տվյալների որակյալ հավաքագրումը երաշխավորող հատուկ ստորաբաժանումներ: Չարցումները կարող են և պետք է օգտագործվեն բարեփոխումների իրականացման բոլոր փուլերում:

Նախքան բարեփոխումների իրականացումը հարցումները կարող են հանդիսանալ իրականացվելիք բարեփոխումների վերաբերյալ քաղաքացիների հնարավոր արձագանքների և տեսակետների բացահայտման միջոց:

Բարեփոխումների իրականացման փուլում թիրախային խմբերի ներկայացուցիչները կարող են հայտնել իրենց դժգոհությունների կամ գոհունակության մասին: Բարեփոխումների ավարտից հետո ստացված տվյալները կօգտագործվեն բարեփոխումների հաջող իրականացման գնահատման, ինչպես նաև հետագա փոփոխությունների նախագծման համար:

Բարդ համակարգերի բարեփոխումների դեպքում կարևոր է գնահատել այդ համակարգի հաճախորդների տեսակետները (քաղաքացիներ, պետական ծառայողներ կամ պետական ձեռնարկություններ), քանի որ դա թույլ կտա նվազեցնել բարեփոխումների հետ կապված ծախսերը:

Չուսալի մեթոդների կիրառման արդյունքում հավաքագրված որակյալ տեղեկատվությունը թույլ է տալիս տալ ճիշտ ուղղվածություն բարեփոխումների գործընթացին:

Սոցիոլոգիական մեթոդոլոգիան պետք է հանդիսանա որպես հարցումների անցկացման ուղեցույց

Հասարակական կարծիքի հարցումները ներառում են հասարակության, պետական հաստատությունների անձնակազմի և բարձրաստիճան պաշտոնյաների (էլիտայի) հարցումները: Չարցումների կարող են ընդգրկել նաև որոշակի ծառայություններից օգտվող հաճախորդների խմբեր: Նման հարցումներ կարող են նախաձեռնվել որոշումներ կայացնողների կամ պետական ձեռնարկությունների ղեկավարների կողմից: Որպես շատ ճկուն գործիք հասարակական կարծիքի հարցումները կարող են օգտագործվել տարբեր նպատակների համար: Սակայն դրանց մշակումը և կիրառումը պետք է կատարվի սոցիոլոգիայում ընդունված մեթոդաբանության հիման վրա:

Ստանալով լայն կիրառում հասարակական կարծիքի հարցումները, այնուամենայնիվ, չեն տալիս ցանկացած քաղաքական կամ կազմակերպչական խնդրի լուծման պատասխան:

Չարցում անցկացնելուց առաջ պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝

- հարցման հետ կապված ծախսերը,

- համապատասխան մասնագիտական հմտությունների անհրաժեշտությունը արդյունավետ հարցում անցկացնելու համար,
- տվյալների հավաքագրման այլընտրանքային մեթոդների դիտարկումը, ավելի արագ, էժան համեմատական տեղեկատվություն ստանալու համար,
- արդյո՞ք կա ստացված արդյունքների հիման վրա գործելու պատրաստականություն և կարողություններ,
- հարցումների օգտագործման չարաշահումը կարող է ունենալ երկարատև բացասական ազդեցություններ:

Վստահելի արդյունքներ ստանալու համար հարցումները պետք է հիմնված լինեն հուսալի մեթոդոլոգիայի վրա: Առավել զգուշորեն պետք է որոշվեն հարցման կառուցվածքը և բովանդակությունը, ինչպես նաև հարցվողների խմբերը: Պետք է հնարավորինս խուսափել անորակ ուսումնասիրություն կատարելուց կամ սխալ ընտրանք որոշելուց, և հնարավորինս նվազեցնել տվյալների վերլուծության և մեկնաբանության անճշտությունների քանակը: Ստացված տվյալները պետք է տեղին օգտագործել որոշումների կայացման և բարեփոխումների մշակման գործընթացներում:

Հարցումները ներկայացնում են մարդկանց կարծիքները և համոզմունքները, սակայն դրանք չեն ուսումնասիրում մարդկանց սոցիալ-քաղաքական գիտակցությունը, որը կազմված է այդ կարծիքներից և համոզմունքներից:

Մի այլ խնդիր է հանդիսանում ստացված տվյալների անկայունությունը: Շարունակական հարցումների դեպքում մեծ է որակյալ վերլուծություն կատարելու հավանականությունը, դրանք թույլ են տալիս հետևել ստացված արդյունքների փոփոխություններին:

Տեղեկատվության արժեքը աճում է այն դեպքում, երբ այն հեշտ է հասկացվում և հնարավորինս մատչելի է մատուցվում:

Հարցումներից ստացված տվյալների պարզ և հեշտ ըմբռնելի եղանակով մատուցումը որոշումներ կայացնողներին և պետական կառավարման ոլորտի ղեկավարներին կարող է նպաստել հասարակական կարծիքի հարցումների դերի ամրապնդմանը բարեփոխումների գործընթացում:

Պետական հաստատությունները կարող են օգուտ քաղել հասարակական կարծիքի հարցումներից

Եվրամիությանը անդամակցելու հետ մեկտեղ ավելի են կարևորվում հասարակական կարծիքի հարցումները վերոնշյալ հարցի շուրջ: Օգտագործելով հարցումներից ստացված արդյունքները կառավարությունները կարող են գնահատել ոչ միայն հասարակության պատրաստվածության աստիճանը համապատասխան բարեփոխումների վերաբերյալ, այլ նաև

իրենց կողմից կատարված աշխատանքների որակը: Հարցումների միջոցով կարելի է գնահատել անդամակցության հնարավոր առավելությունները և դրա հետ կապված բարդությունները: Դրանք թույլ են տալիս ընդգրկել անդամ երկրների բնակչության տարբեր խավերին, ստանալով տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել տարբեր նպատակների համար:

Օրինակ՝ 1996թ-ին Հունգարիայի արտաքին գործերի նախարարությունը անցկացրեց մի հարցում, որի նպատակն էր գնահատել բնակչության գիտելիքները և դիրքորոշումները Եվրոպական ինտեգրման վերաբերյալ: Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ հունգարացիները ունեն դրական վերաբերմունք ապագա անդամակցության վերաբերյալ և որոշ չափով տեղեկացված են անդամակցության հնարավոր հետևանքների մասին: Արդյունքում կառավարությունը իրականացրեց հատուկ ծրագիր, որի նպատակն էր բարձրացնել քաղաքացիների իրազեկվածության մակարդակը Եվրամիությունում կիրառվող քաղաքականությունների վերաբերյալ:

Հարցումների արդյունավետ օգտագործումը

Հարցումները կարող են ավելի արդյունավետ օգտագործվել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում եթե՝

- հարցումներ իրականացնողները և սոցիոլոգները փոխանցեն իրենց կողմից ստացված տվյալները քաղաքական գործիչներին և քաղծառայողներին,
- հարցումներ անցկացնող գործակալությունների թվի աճը նպաստում է հուսալի տվյալների շուկայի ձևավորմանը,
- ժողովրդավարության գործընթացը առաջ է քաշում փոխադարձ կապի ստեղծման անհրաժեշտությունը,
- արդյունքները պետք է հրապարակվեն կառավարությունների կողմից,
- հարցումները պետք է օգտագործվեն ուսուցողական նպատակներով:

Հասարակական կարծիքի հարցումներ և վարչական բարեփոխումներ

Ջեյ Ջեյփս

Այս աշխատությունը կարևորում է հասարակական կարծիքի հարցումների դերը վարչական բարեփոխումների գործընթացի համար կարևոր տեղեկատվություն տրամադրելու առումով, ուշադրություն հրավիրելով որոշ մեթոդաբանական խնդիրներին: Այն ներկայացնում է 4 հաշվետվություն, որոնք տալիս են Արևմտյան Եվրոպայի երկրների, Չեխիայի, Հունգարիայի, Լիտվայի կառավարությունների կողմից կատարված հասարակական կարծիքի հարցումների կրճատ նկարագրությունը:

1. Ներածություն

Մարդիկ ունեն իրենց կարծիքը ոչ միայն այն մասին, թե ինչպես են աշխատում կառավարությունները, այլ նաև թե ինչպես պետք է աշխատեն կառավարությունները: Մարդիկ պարբերաբար ցանկանում են արտահայտել իրենց տեսակետները ոչ միայն ընտրությունների, այլ նաև հարցումների միջոցով: Քաղաքացիները ունեն ձևավորված կարծիք իրենց կյանքի վրա մեծ ազդեցություն ունեցող տնտեսության և զբաղվածության, սոցիալական ծրագրերի և քաղաքական ինստիտուտների վերաբերյալ: Որոշ հաստատություններին նրանք վստահում են ավելի շատ քան մյուսներին, նախընտրում են որոշակի սոցիալական քաղաքականություններ, ունեն իրենց տեսակետները կրթական և առողջապահական համակարգերի գործունեության վերաբերյալ: Յուրաքանչյուր անհատ ունի իր տեսակետները, սակայն սոցիոլոգիական մեթոդները թույլ են տալիս ուսումնասիրել թե որքանով են համընկնում հասարակության տարբեր խավերի տեսակետները:

Վերջին տարիներին հարցումները ավելի լայնատարած են օգտագործվում, ինչը պայմանավորված է համակարգիչների օգտագործմամբ, որոնք կարող են պահել, վերլուծել և տեստավորել տվյալների մեծ քանակություն:

Ներկայիս կարելի է տեղեկանալ հարցումներից ստացված տվյալների մասին զանգվածային լրատվամիջոցներից: Հարցումների միջոցով որոշվում են սպառողների նախընտրությունները, քաղաքական կարծիքները, հասարակության վերաբերմունքը սոցիալական խնդիրներին: Զանգվածային լրատվամիջոցները օգտագործում և տպագրում է տարբեր տեսակի հարցումներից ստացված տվյալները: Թերթերը, ամսագրերը, ռադիոն և հեռուստատեսությունը քննարկում են հարցումներից ստացված տվյալները: Կազմակերպությունները օգտագործում են հարցումները իրենց աշխատողների վերաբերմունքը աշխատանքի, կազմակերպության վերաբերյալ պարզելու, իրենց կողմից արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ սպառողների գոհունակությունը գնահատելու նպատակով: Ստացված արդյունքները

հետագայում օգտագործվում են աշխատողների գոհունակության, կազմակերպության արտադրողականության բարձրացման, ինչպես նաև ծառայությունների ավելի որակյալ մատուցման համար: Հաճախորդների և աշխատողների հարցումները ավելի են կարևորվում մասնավոր սեկտորում հաճախորդների և աշխատողների գոհունակությունը ապահովելու համար: Երբ որոշակի խնդիրներ են հայտնաբերվում, ապա հարցումների միջոցով հաջողվում է ստանալ այն կարևոր տեղեկատվությունը, որը թույլ է տալիս արագ լուծել այդ խնդիրները:

Գնալով հարցումների օգտագործման կարևորությունը ավելի է աճում, քանի որ դրանց միջոցով կառավարությունները տեղեկանում են հասարակության դիրքորոշումների մասին իրենց կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ: Վերլուծելով քաղաքացիների պատասխանները մի շարք կարևոր հարցերին ձեռք է բերվում վերոնշյալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Հարցման դասական օրինակ է հանդիսանում յուրաքանչյուր երկրում անցկացվող մարդահամարը, հինգից տասը տարին մեկ, որի միջոցով ստացվում են վիճակագրական տվյալներ բնակչության մասին:

Մամուլը հարցում է անցկացնում քաղաքացիների քաղաքական համոզմունքները և քաղաքական գործիչների նկատմամբ քաղաքացիների վստահության ցուցանիշը ուսումնասիրելու նպատակով: Կառավարությունները հետաքրքրված են պարզելու իրենց քաղաքացիների տեսակետները և քաղաքական համոզմունքները: Կենտրոնական և տեղական կառավարությունների կողմից անցկացվող հարցումների նպատակն է որոշել մատուցվող ծառայությունների նկատմամբ հասարակության գոհունակության աստիճանը: Կառավարության կողմից հարցումներ են անցկացվում, երբ կա քաղաքացիների վերաբերմունքների, համոզմունքների, ընկալումների և վարվելակերպի մասին տեղեկատվություն ստանալու անհրաժեշտությունը: Պարբերաբար կրկնելով հարցումները կարելի է որոշել, թե արդյո՞ք քաղաքացիների վերաբերմունքները և համոզմունքները փոխվում են ժամանակի ընթացքում:

Կառավարությունները կարող են օգուտներ քաղել քաղաքացիներից ստացված տեղեկատվությունից, երբ իրականացնում են նոր քաղաքականություն կամ կիրառում արդեն իսկ փորձված քաղաքականություն կառավարման կառուցվածքներում և ինստիտուտներում բարեփոխումներ իրականացնելու, պետական ծառայությունների և ծրագրերի փոփոխման, գործակալություններ ստեղծելու կամ լուծարելու գործընթացներում:

Հարկ է նշել, որ որոշ բարեփոխումներ անդրադառնում են բոլոր քաղաքացիների վրա, սակայն կառավարության կողմից առաջարկվող փոփոխությունների մեծ մասն ազդում է որոշակի խմբերի վրա, որոնք կամա կամ ակամա դառնում են տվյալ փոփոխությունների թիրախը:

Պատասխան արձագանքներ ստանալու շատ եղանակներ կան: Որոշումների կայացման գործընթացում օգտագործվում են քաղաքացիական մասնակցության տարբեր եղանակներ: Կառավարությունները օգտագործում են որպես քաղաքացիական մասնակցության մեխանիզմներ ձևական խարհրդատվությունները և քաղաքներում անցկացվող հավաքները: Հարցումները հանդիսանում են տեղեկատվության հավաքագրման արագ և էժան միջոց: Երբ հարցման հետ մեկտեղ օգտագործվում են արձագանքներ հավաքագրող այլ մեխանիզմներ, ապա հաջողվում է ավելի խորը ուսումնասիրել առկա խնդիրները և ստուգել ստացված տվյալները:

Հարցումները ընկալվում են որպես ժողովրդավարությանը մասնակցելու հնարավորություն հատկապես երբ քաղաքացիները գիտակցում են, որ իրենց դիրքորոշումները և համոզմունքները տեսակետները ոչ միայն զուտ հավաքագրվում են, այլ նաև կարող են ունենալ իրենց ազդեցությունը տարբեր քաղաքականությունների ընտրության վրա:

Հարցումների միջոցով կառավարությունները տեղեկանում են քաղաքացիների դիրքորոշումների մասին առաջարկված կամ արդեն իսկ իրականացվող քաղաքականությունների վերաբերյալ:

2. Ստահոգիչ խնդիրներ

Լայնատարած օգտագործման հետ մեկտեղ հարցումները արժանանում են լուրջ քննադատության, որի պատճառներից մեկը դրանց ոչ ճշգրիտ լինելը: Շատ հաճախ քննադատողների շարքում են այն քաղաքական գործիչները և բարձր պաշտոնյաները, որոնք չեն գոհացած ստացված տվյալներով: Քննադատությունը կարող է հիմնավորված լինել այն դեպքում, եթե տվյալ հարցումը անորակ է գիտական տեսանկյունից: Օրինակ՝ եթե ընտրանքի որոշման մեթոդը սխալ է, հարցաթերթիկի կամ հարցագրույցի կառուցվածքը թերի է, տվյալների հավաքագրումը և վերլուծությունը ոչ ճշգրիտ են: Ստացված տվյալների վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել նաև վիճակագրական սխալները: Պետք է հաշվի առնել նաև այն, որ միշտ չէ, որ հարցվողների կողմից ներկայացվող պատասխանները դրանք իրական ընկալումների անկողմնակալ ներկայացումն է: Իմիջները և տեսակետները շատ հաճախ ձևավորվում են մամուլի բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից, որոնք աշխատում են հատուկ իմիջներ կամ տեսակետներ ստեղծելու ուղղությամբ: Շատ կարևոր է նաև ուսումնասիրության կառուցվածքի, ընտրանքի որոշման մեթոդի և տվյալների վերլուծության մասին տեղեկատվությունը, քանի որ այն թույլ է տալիս գնահատել ստացված տվյալների հուսալիությունը և ճշգրտությունը: Սակայն շատ քիչ տեղեկատվություն է տրամադրվում հարցումների այս կարևոր մեթոդների վերաբերյալ: Կառավարությունների պատվերով կատարված հարցումների դեպքում կարելի է գնահատել տվյալների հուսալիությունը և ճշգրտությունը, քանի որ կառավարությանը տրամադրվում է դրա համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Տեղեկատվության ճշգրտության խնդիրը ավելի է կարևորվում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջաններում: Նախկին կոմունիստական վարչակարգի պայմաններում ապրող ժողովրդի վստահության մակարդակը կառավարության նկատմամբ միշտ ցածր է եղել: Բացի այդ ներկայացվող տեղեկատվությունը, հատկապես վիճակագրականը, թերի էր: Դա պայմանավորված էր ոչ այնքան սոցիոլոգների մասնագիտական որակավորման պակասով, որքան քաղաքական գործիչների թելադրանքով թե ինչպես պետք է գնահատել ստացված տեղեկատվությունը և ինչը կարելի է անտեսել վիճակագրական գնահատման ժամանակ: Նման վերաբերմունքը նախկին կոմունիստական երկրներում թերահավատություն էր առաջացրել մատուցվող տեղեկատվության արժեքի վերաբերյալ, հատկապես երբ այդ տեղեկատվությունը տրամադրվում էր կառավարության կողմից: Կառավարության բարձր պաշտոնյաները հակված էին չհավատալ ստացված

տվյալներին, քանի որ իրենց համոզմամբ դրանք ճշգրիտ չեն: Հասարակությունը հակված էր չվստահել կառավարությանը, հետևաբար և կառավարության կողմից անցկացված հարցումներին:

Հարցումները կարող են բացասական ազդեցություն ունենալ քաղաքական գործընթացի վրա, ազդելով քաղաքացիների քաղաքական գործիչների նկատմամբ ունեցած տեսակետների վրա: Հատկապես սա վերաբերում է քաղաքական գործիչների ժողովրդականությունը ուսումնասիրող հարցումներին, որոնք անց են կացվում ընտրությունների ժամանակ:

Հասարակական կարծիքի հարցումները հնարավորություն են տալիս քաղաքական գործիչներին և բարձրաստիճան պաշտոնյաներին ազդել հասարակության դիրքորոշումների վրա:

3. Երաշխիքներ

Հասարակության կարծիքների մասին մենք տեղեկացվում ենք մեծ մասամբ հարցումների միջոցով: Տեխնոլոգիական և տեղեկատվական զարգացումների, ինչպես նաև կրթական և վերապատրաստման նոր հնարավորությունների պայմաններում OECD Անդամ երկրների, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շուկան լի է հարցումներով զբաղվող մասնագետներով և կազմակերպություններով՝ հետազոտողներ, հետազոտական ինստիտուտներ, կառավարական հաստատություններ, մասնավոր սեկտորի ընկերություններ, շուկայի հետազոտություններով զբաղվող ընկերություններ և այլն: Շուկայի առավելություններն են՝ փորձագիտական այլընտրանքային աղբյուրների ստեղծումը, ստանդարտների և նորմերի հաստատումը, ինրպես նաև գիտականորեն հիմնավորված և որակյալ հարցումների անցկացման պահանջը:

Հարցումների լայնատարած օգտագործմանը նպաստում է նաև նոր տեխնոլոգիաների օգտագործումը և հարցումներին բնորոշ տեղեկատվության համեմատաբար էժան հավաքագրումը: Երբ մամուլը հրապարակում է որևէ հարցումից ստացված տեղեկատվություն, շատ հազվադեպ է, որ նշվում է հարցման անցկացման մեթոդաբանությունը:

Որոշ կառավարություններ ստեղծում են կենտրոնական ստորաբաժանումներ, կազմված սոցիոլոգ-խորհրդատուներից, որոնք լիազորված են հաստատելու հարցումից ստացված տեղեկատվության ճշգրտությունը և հիմնավորվածությունը: Նման ստորաբաժանումների ստեղծումը վարչապետի կաբինետի կամ այլ պետական գործակալության կազմում այնքան էլ թանկ հաճույք չէ, եթե հաշվի առնել բոլոր այն առավելությունները, որոնք տալիս են այդ ստորաբաժանումները: Օրինակ՝ Լեհաստանի վարչապետի կաբինետի կազմում կա նման ստորաբաժանում, որը վերլուծում է հարցման արդյունքները, հաստատում է դրանց ճշգրիտ լինելը և տրամադրում է արդեն իսկ թարմացված տեղեկատվությունը կառավարությանը: Որոշ երկրներում նախարարությունները ունեն հատուկ բաժիններ, որոնք պատասխանատու են հարցումների իրականացման համար: Օրինակ՝ Կանադայի Կառավարական ծառայությունների նախարարությունը ունի մի բաժին, որը գնահատում է բոլոր հասարակական կարծիքի անցկացման հետ կապված ծառայությունների մատուցման պայմանագրերը մինչև տեղեկների հայտարարումը:

4. Հաշվետվություններ

Մենք փորձեցինք գնահատել, թե որքան հաճախ են OECD Անդամ երկրների, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարությունները կիրառում հասարակական կարծիքի հարցումները վարչական կառավարման ոլորտի բարեփոխումների համար: Մեր նպատակն էր որոշել հասարակական կարծիքի հարցումների դերը և նշանակությունը վարչական բարեփոխումների զարգացման գործընթացի, կառավարության և կադրերի ղեկավարման բարելավման համար: Մենք փորձեցինք պարզել, թե որքան հաճախ են հարցումները օգտագործվում որպես տեղեկատվական գործիք բարեփոխումների գործընթացում, հատկապես անցումային շրջանի երկրներում: Օգտագործելով հաշվետվությունների տվյալները կիրառել պիլոտային գործիքներ, հետաքրքրություն առաջացնել հարցումների նկատմամբ և հնարավորության դեպքում համեմատություններ անցկացնել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների միջև:

Մեր կողմից պատվիրվեցին մի շարք հարցումներ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում: Համեմատական ուսումնասիրության համար ներառեցինք նաև OECD Անդամ երկրների ուսումնասիրությունները:

Հաշվետվություններում լուսաբանվել են հետևյալ հարցերը՝

- ինչպե՞ս են կառավարությունները օգտագործում հարցումները մոնիտորինգի և բարեփոխումների վրա ազդելու նպատակով,
- որքանո՞վ են կառավարությունները հետաքրքրված պարզելու իրենց քաղաքացիների և քաղծառայողների տեսակետները,
- արդյո՞ք կարևոր է հաճախորդների, քաղաքացիների և քաղծառայողների գոհունակությունը:

Հաշվետվությունները ունեն միանման կառուցվածք, որը լուսաբանում է մի շարք կարևոր խնդիրներ: Հաշվետվությունները ուսումնասիրում են տնտեսական, քաղաքական և սոցիալական ինստիտուտների գործունեությունների համակարգումը, գնահատում են քաղաքացիների վստահության աստիճանը տնտեսական, քաղաքական և սոցիալական հաստատությունների նկատմամբ, ինչպես նաև գնահատում են այդ հաստատությունների գործունեությունները քաղաքացիների տեսանկյունից: Վերլուծվել է նաև կառավարության, քաղծառայության, ոստիկանության, զինվորական ծառայության, խորհրդարանի, քաղաքական կուսակցությունների, դատարանների նկատմամբ քաղաքացիների վստահության աստիճանները, ինչը թույլ է տվել պարզել հետևյալը՝ հետևյալը՝ հասարակությունների տեսակետները վարչական համակարգի վերաբերյալ: Հաշվետվությունների հեղինակները ուսումնասիրում են հարցումները քաղաքականությունների առաջնահերթ խնդիրների լուծման տեսանկյունից և փորձում են պարզել, թե որոնք են բնակչության համար այն առաջնահերթ բարեփոխումները և որոնք են ըստ քաղաքացիների այդ բարեփոխումներ սկսելու գերակա խնդիրները և արդյոք կան քաղաքացիների նախասիրություններին համաձայն բարեփոխումների համար արդեն իսկ որոշված սեկտորներ (կրթական, առողջապահական, սոցիալական ապահովության համակարգեր և այլն):

Եվրամիության ինտեգրման խնդիրը քննարկվում է Կենտրոնական և Արևելյան Եվրոբարոմետր գործիքի կիրառման ներքո:

Հաշվետվություններում մեծ բաժին է հատկացվել քաղաքական ցիկլում հասարակական կարծիքի հարցումների օգտագործմանը՝ սկսած քաղաքականության ընդունումից, իրականացումից և վերջացրած քաղաքականության գնահատմամբ: Հատուկ ուշադրության են արժանացել այն հարցումները, որոնք ուսումնասիրում են քաղաքացիների տեսակետները կառավարության անձնակազմի մեծության և նախարարությունների քանակի փոփոխության վերաբերյալ:

Հաշվետվություններում ներառված են նաև քաղծառայողների կարծիքը և վարվելակերպի մոդելները ներկայացնող հարցումները, որոնք շատ կարևոր են մարդկանց գոհունակության գնահատման ուսումնասիրությունների համար: Քաղծառայության ոլորտում անցկացվող բարեփոխումների համար մեծ նշանակություն ունեն քաղծառայողների շահագրգռվածությունը, ավագ քաղծառայողների գոհունակությունը իրենց աշխատանքի և կազմակերպության նկատմամբ:

Հաշվետվությունների վերջին բաժիններում ներկայացված են կառավարությունների և պետական կառավարման ոլորտի հաստատությունների վերաբերյալ քաղաքացիների մոտ ձևավորված ընկալումները, այդ հաստատությունների ներքին (իմիջը, որը ձևավորվել է այդ հաստատությունների աշխատողների մոտ) և արտաքին (իմիջը, որը ձևավորվել է հասարակության մոտ) իմիջները: Շատ հաճախ այս երկու իմիջների միջև գոյություն ունի հսկա տարբերություն:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հաշվետվությունները ներառում են այդ երկրներում տեղի ունեցած վարչական բարեփոխումների և կատարված հարցումների պատմության կրճատ նկարագիրը: Յուրաքանչյուր երկրի համար նշված են այն հարցումներից ստացված տվյալներ տրամադրող հաստատությունների անվանումները և հասցեները:

Հաշվետվություններ ներկայացնող երկրներից Չեխիան և Հունգարիան ունեին լավ զարգացած սոցիոլոգիական ավանդույթներ և ինստիտուտներ, որոնք հարցումներ էին անցկացնում սովետական ժամանակներից և դրանից էլ առաջ: Լիտվան չունեւ այդպիսի ավանդույթներ և հարցումները մեծ մասամբ սկսվեցին 1990թ-ից: Որոշ նմանություններ նույնպես կարելի է նշել: Բոլոր երեք երկրներում հարցումներ անցկացնող մասնավոր ընկերությունների համար կառավարությունների պատվերով հարցումներ իրականացնելը բավականին բարդ էր: Շատ հազվադեպ կարելի է ստանալ վերլուծության համար անհրաժեշտ մանրամասն տվյալներ, առավել բարդ էր իմանալ, թե որոշումների կայացման գործընթացում ինչպես են օգտագործվել ստացված արդյունքները: Հասկանալի է, որ մասնավոր ընկերությունների դեպքում գործում է ստացված տեղեկատվության գաղտնիության պահպանման պայմանավորվածությունը պատվիրատուի հետ, ավելի քան բարդ է հասկանալ, թե ինչու կառավարությունները չեն հրապարակում նման տեղեկատվությունը: Տեղեկացված լինելու իրավունքի պաշտպանումը և թափանցիկության բարձրացման խիստ անհրաժեշտությունը կնպաստեն ապագայում հարցման միջոցով ստացված տվյալների ավելի ամբողջական հրապարակմանը, առավել ևս, երբ անցումային շրջանում գտնվող երկրները կառնչվեն տեղեկատվության մատչելիությանը վերաբերող խնդիրների հետ: Շատ OECD Անդամ երկրների հասարակություններին հասանելի են կառավարությունների կողմից պատվիրված

հարցումներից ստացված տվյալները: Օրինակ՝ Նորվեգիայի Սոցիոլոգիական տվյալների ծառայությունը ստանում է Նորվեգիայի վիճակագրական ծառայության կողմից անցկացված բոլոր հարցումների տվյալները: Այս տվյալները համակարգվում են և հասանելի են ոչ միայն Նորվեգիայի սոցիոլոգիական համայնքին, այլ նաև այլ երկրների հետազոտողների համար: Բացի այդ մասնավոր ընկերությունների կողմից անցկացվող հասարակական կարծիքի հարցումների տվյալները նույնպես հասանելի են ցանկացած կազմակերպության կամ անհատի համար, բացառությամբ սպառողների նախասիրությունների հետ կապված որոշ տվյալների:

Այստեղ պետք է նշել նաև մի ուրիշ խնդիր: OECD Անդամ երկրները, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում կա հարցումների միջոցով ստացված տեղեկատվության մի ահռելի քանակություն: Գիտնականները, հետազոտողները, մասնավոր սոցիոլոգիական հետազոտություններով զբաղվող գործակալությունները, վիճակագրական հաստատությունները և շատ այլ հիմնարկներ և անհատներ անցկացնում են հարցումներ, որոնց միջոցով պարզվում են քաղաքացիների դիրքորոշումները, կարծիքները և ընկալումները կառավարության կողմից կատարվող աշխատանքների նկատմամբ: Հաշվետվությունները կազմելու ընթացքում առաջ է քաշվում բազմաթիվ օրինակների միջև ընտրելու խնդիրը: Արդյունքում ընթերցողը պետք է հաշվի առնի հաշվետվություններում տրված օրինակները: Այդ օրինակները ընտրվել են հեղինակների կողմից: Ընտրությունը կատարելիս հաշվի են առնվել հարցումների գիտական հիմնավորվածությունը, հարցաթերթիկների և ուսումնասիրությունների կառուցվածքի համապատասխանությունը գիտական չափանիշներին և այն, որ դրանք իրականացվել են կառավարության պատվերով, հետապնդելով հստակորեն որոշված նպատակներ:

5. Անփոփում և եզրակացություններ

Մենք ընտրել ենք այն օրինակները, որտեղ հասարակական կարծիքի հարցումները օգտագործվել են OECD Անդամ երկրներում, որպես պետական կառավարման ոլորտի զարգացման գործիք: Ընտրված օրինակները կօգնեն նաև հասկանալ հարցումների կիրառման եղանակները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում: Համաձայն ներկայացված հաշվետվությունների անցումային շրջանում գտնվող երկրներում հասարակական կարծիքի հարցումները ունեն բավականին լայն կիրառում: Հարցումների միջոցով հավաքագրվում են քաղաքացիների տեսակետները վարչական սեկտորի վերաբերյալ: Դրանք միջոցով կարելի է պարզել, թե արդյոք քաղաքացիները վստահում են իրենց պետական կառավարման հաստատություններին, որոնք են իրենց նախընտրած քաղաքական տեսակետները և որքանով են իրենք բավարարված իրենց կառավարությունների նվաճումներով:

**Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը Արևմտյան Եվրոպայի վարչական
բարեփոխումների գործընթացում
ԵԼԿԵ ԼՓՖԼԵՐ¹**

1. Նախաբան

Այս աշխատությունը ուսումնասիրում է հասարակական կարծիքի հարցումները որպես գործիք արևմտյան երկրների վարչական բարեփոխումների գործընթացում: Հասարակական կարծիքի հարցումները ներառում են հանրության, պետական հաստատությունների ծառայողների և պետական կառավարման բարձրաստիճան պաշտոնյաների կամ էլիտայի հարցումները: Այս հարցումները անցկացվում են քաղաքականություն մշակողների և պետական հաստատությունների ղեկավարների կողմից:

Հասարակական կարծիքի հարցումները դա այն ճկուն գործիքն է, որը կարող է օգտագործվել տարբեր նպատակների համար: Չնայած նրան, որ հասարակական կարծիքի հարցումները լայնատարած օգտագործվում են, դրանք չեն կարող հանդիսանալ ցանկացած քաղաքական և կազմակերպչական խնդրի լուծման միջոց: Մինչ հարցման գործընթացը սկսելը հետևյալ գործոնները պետք է հաշվի առնվեն (Edwards, Thomas, Rosenfeld և Booth-Kewley 1997)`

1. Հարցման անցկացման ծախսերը
2. Արդյունավետ և որակյալ հարցման համար մասնագիտացված հմտությունների անհրաժեշտությունը
3. Պետք է նաև ուսումնասիրվեն տվյալների հավաքագրման այլ մեթոդներ, ավելի արագ, էժան և ավելի քիչ սոցիալական և կազմակերպչական իրարանցումների պայմաններում համեմատական տվյալներ հավաքագրելու նպատակով
4. Հարցումների օգտագործման չարաչափումը կարող է ունենալ բացասական հետևանքներ

OECD երկրներում, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում հասարակական կարծիքի հարցումները դարձել են որոշումների կայացման կարևոր գործիք:

¹ ԵԼԿԵ ԼՓՖԼԵՐ, Կառավարիչ, Բազմամակարդակ Կառավարում, Պետական կառավարման ծառայություն (PUMA), OECD, Փարիզ, Ֆրանսիա

Հասարակական կարծիքի հարցման նպատակն է նկարագրել բնակչության կամ բնակչության առանձին խմբերի կարծիքները և դիրքորոշումները քաղաքականության հետ առնչվող խնդիրների վերաբերյալ:

Հարցումները տալիս են մարդկանց կարծիքների և դիրքորոշումների կրճատ նկարագրությունը պետական քաղաքականության խնդրի շուրջ, սակայն չեն ուսումնասիրում սոցիալ-քաղաքական գիտակցության կառուցվածքային տարրերը, որոնց էլ հենց կցված են կարծիքները և դիրքորոշումները: Լայնատարած ճանաչված, շատ հաճախ նաև ակնկալվող խնդիր է հանդիսանում արդյունքների անկայունությունը՝ կախված հարցազրուցավարներից և հարցերից արդյունքները կարող են տարբերվել: Կրկնվող հարցումների արդյունքների վերլուծական եզրակացությունը ավելի արժեքավոր է քան միանգամյա հարցումներինը, քանի որ դրանք թույլ են տալիս որոշ ժամանակ անց ստանալ լրացուցիչ տեղեկատվություն հասարակական կարծիքի հարցման արդյունքների վերաբերյալ:

Հարցումների գիտականորեն հիմնավորված մեթոդաբանությունից է կախված ճշգրիտ արդյունքների ստացումը: Հարցման կառուցվածքը մշակելիս պետք է մանրամասն ուսումնասիրել ձևաչափը և բովանդակությունը, ինչպես նաև հարցվողներին (տես Czaja և Blair 1995): Մխալների մեծ մասը արվում է տվյալների վերլուծության և մեկնաբանման փուլերում (տես Klages 1997): Շատ կարևոր է նաև հարցումների ընթացքում ստացված արդյունքների տեղին օգտագործումը վարչական բարեփոխումների գործընթացի որոշումների կայացման և կառավարման փոփոխման փուլերում:

Հարցման փոխարինումը հասարակության տեսակետները ուսումնասիրող այլ միջոցներով ունի հասարակական կարծիքի վրա ազդելու նշանակություն: Մի կողմից հարցումը կարող է բացասաբար ազդել հարցվողների կարծիքների վրա, մյուս կողմից դրանք ազդում են այն մարդկանց դիրքորոշումների վրա, որոնք կարդում են հարցումների արդյունքները:

Վարչական բարեփոխումների գործընթացում հասարակական կարծիքի հարցումները շատ կարևոր են, քանի որ վարչական բարեփոխումները զուտ տեխնիկական խնդիրներ չեն: Սակայն վարչական բարեփոխումը դա զուտ քաղաքականություն չէ, որն վերաբերում է հասարակության շահերին: Սա նշանակում է, որ հասարակական կարծիքի հարցումները պետական կառավարման ոլորտում պետք է գտնեն իրենց հասցեատիրոջը:

Հասցեատերերի ամենաակնհայտ խմբերից են վարչական ծառայողները և վարչական էլիտան, որքեր ուղղակիորեն հետաքրքրված են վարչական բարեփոխումներով: Ինչպես ցույց է տալիս բոլոր վերևից ներքև անցկացվող բարեփոխումների ծախսողումը, շատ կարևոր է քաղաքական և վարչական փոփոխություններ իրականացնող անձանց համար դիտարկել վարչական բարեփոխումները, որպես գործընթաց և տեղյակ լինեն այդ բարեփոխումներով հետաքրքրված խմբերի կարծիքներից: Այլ կերպ ասած, անձնակազմի սպասվելիք, կատարվող և կատարված հարցումները կառուցվածքային և մշակութային վարչական բարեփոխումների հաջողության որոշիչ գործոնն են:

Սակայն բավարար չէ զուտ իմանալ պետական կառավարման անձնակազմի կարծիքները և դիրքորոշումները: Քանի որ պետական կազմակերպությունները գտնվում են տարբեր քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնների ազդեցության տակ, հարցումները պետք է անցկացվեն նաև պետական կառավարման հաստատությունների բազմաթիվ հաճախորդների շրջանակներում: Պետական կառավարման հաճախորդների թվում են պետական ծառայության գործակալությունների հաճախորդները (սոցիալական օգնություն ստացող քաղաքացիները), պետական ծառայությունները ֆինանսավորող քաղաքացիները (հարկատուները), քվեարկող ընտրագանգվածը և հասարակությունը:

Ընդգրկելով պետական կառավարման տարբեր թիրախային խմբեր և դիտարկելով վարչական բարեփոխումների բազմաթիվ տեսանկյուններ, սկսած կառուցվածքային փոփոխություններից վերջացրած իրավական կամ նույնիսկ կանոնադրական փոփոխություններով, հասարակական կարծիքի հարցումները ունեն իրենց իրական ներուժը վարչական բարեփոխումների գործընթացում: Մինչ այժմ հասարակական կարծիքի հարցումները արժանացել են մեծ ուշադրության գիտական շրջանակներում տվյալների հավաքագրման, վերլուծության և մեկնաբանման մեթոդաբանական խնդիրների պատճառով: OECD երկրների, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների վարչական բարեփոխումների մասին կա բավականին մեծ քանակությամբ գրականություն: Սակայն վարչական բարեփոխումների գործընթացում հասարակական կարծիքի հարցումների օգտագործման վերաբերյալ կան շատ քիչ տեղեկություններ:

2. Ներածություն

Գնալով աճում է հասարակական կարծիքի հարցումների կարևորությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների վարչական բարեփոխումների և վարչական ոլորտի հաստատությունների հիմնադրման գործընթացներում: Սոցիալական դիրքորոշումները և ընտրական նախասիրությունները ուսումնասիրող հարցումները գտնվում են մամուլի ուշադրության կենտրոնում: Պետական գործակալությունների և այլ պետական հաստատությունների կողմից հարցումները օգտագործվում են քաղծառայողների գոհունակությունը և բարոյական վիճակը ուսումնասիրելու նպատակով: Այսպիսով՝ հասարակական կարծիքի հարցումները շատ տարածված են, քանի որ որպես գործիք կարող են օգտագործվել տարբեր նպատակներով:

Նկարագրելով OECD երկրներում, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում անցկացված խոշոր հասարակական կարծիքի հարցումները այս աշխատությունը համառոտ ներկայացնում է հասարակական կարծիքի հարցումների կիրառումը վարչական բարեփոխումների իրականացման և որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերում: Շեշտը դրվում է քաղաքական և վարչական որոշումներ կայացնող պաշտոնյաների

տեղեկատվության հավաքագրման ռազմավարության, ինչպես նաև բարեփոխումների գործընթացում հարցումների դերի վրա:

3. Պետական կառավարման հաստատությունների, կառավարության և պետական կառավարման ոլորտի գործողության և դրանց ճանաչման մոնիտորինգ

Ջանգվածային հասարակական կարծիքի հարցումները գնահատում են հասարակության ընդհանուր քաղաքական դիրքորոշումները ոչ միայն կառավարության և պետական կառավարման ոլորտի նկատմամբ, այլ նաև առանձին հաստատությունների, խորհրդարանի և դատարանների նկատմամբ: Որոշումներ կայացնող պաշտոնյաների կարծիքով զանգվածային հասարակական կարծիքի հարցումները թույլ են տալիս բացահայտել տարածված դիրքորոշումները մինչ դրանց ձևավորվելը անցանկալի և վտանգավոր քաղաքական պոռթկումների:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ընտրազանգվածի և հասարակության վստահության և անվստահության գործոնները շատ կարևոր են մի կողմից ժողովրդավարության մյուս կողմից քաղաքացիական հասարակության զարգացման համար: Հետևյալում նկատվում է վարչական համակարգերում անհրաժեշտ էր բարձրացնել քաղաքացիների վստահության աստիճանը իրենց կառավարության, ինչպես նաև նախարարությունների և այլ կենտրոնական վարչական միավորների նկատմամբ: Ամեն տարի Արևելյան Եվրոպայում Նոր ժողովրդավարությունների բարոնետորը չափում էր նախկին 10 կոմունիստական երկրների հասարակության վստահության աստիճանը տարբեր հաստատությունների նկատմամբ:

Համաձայն 1995թ-ին անցկացված 4-րդ ամենամյա հարցմանը, որը կազմակերպվել էր Ավստրիական “Paul Lazarsfeld Society”-ի կողմից նախկին 10 կոմունիստական երկրներում քաղաքական հաստատությունները վստահություն չեն վայելում: Հարցվողները հակված էին լինելու ավելի շուտ անհավատ քան կասկածամիտ:

Հավատի և վստահության գնահատումը վերաբերում է քաղաքական հաստատությունների գործունեությանը և շատ հաճախ հարցումների արդյունքները ներառում են տարիների ընթացքում կառավարման համակարգի գործունեության վերաբերյալ մարդկանց կողմից տրված գնահատականները, հաշվի չառնելով տվյալ համակարգի ներկայիս ծավալած գործունեությունը: Սա կարելի է բացատրել նրանով, որ կարծիքները, դիրքորոշումները և արժեքները իրարից առանձնացված չեն, այլ բարդ փոխկապակցվածության մեջ են: Ավելին, մարդկանց կարծիքները պետական հաստատությունների, կառավարության և պետական կառավարման վերաբերյալ կարող են գտնվել ոչ միայն ավանդական անհատական համոզմունքների ազդեցության տակ, այլ նաև կարող են խեղաթյուրվել մամուլի կողմից առաջացրած և իրականությունից հեռու կերպարներով: Հետևաբար հասարակական կարծիքի հարցումների արդյունքները պետական կառավարման և քաղաքական համակարգի գործունեության մոնիտորինգի վերաբերյալ պետք է մեկնաբանվեն մեծ զգուշությամբ: Պետական հաստատությունների նկատմամբ բնակչության վստահության մակարդակի փոփոխման վերլուծությունը կարող է օգտագործվել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում որպես քաղաքական մշակույթի փոփոխության ցուցիչ, որը իր հերթին

կարող է պայմանավորել այդ երկրների պետական կառավարման ոլորտի և կառավարության գործունեության արդյունավետությունը: Բռնապետական վարչակարգից ժողովրդավարականի անցած Արևմտյան Եվրոպայի երկրների համար ինչպիսիք են Զուլուստանը, Պորտուգալիան և Իսպանիան հարցումները շատ կարևոր նշանակություն են ունեցել այդ երկրների անցումային և հետանցումային ժամանակաշրջանների համար:

Իսպանիայի քաղաքական զարգացմանը վերաբերող դիրքորոշումները

1997թ-ին Իսպանիան տոնեց իր ժողովրդավարական ընտրությունների քսաներորդ տարեդարձը: Այս իրադարձությունը խթանեց ժողովրդավարության վերաբերյալ իսպանական բնակչության դիրքորոշումները ուսումնասիրող մի շարք հասարակական կարծիքի հարցումների անցկացումը: Զարգմանը մասնակցել էին 18 տարեկանից բարձր տարիք ունեցող 1214 տղամարդ և կին: Զարգվողների 45%-ը կարծում էին, որ Իսպանիայում ընթացող զարգացումները դրական են, սակայն կան որոշ սխալներ: Զարգվողների 29%-ը կարծում են, որ Ֆրանկոյի մահից հետո տեղի ունեցած զարգացումները ավելին քան փոխհատուցում են բաց թողնված սխալները: Միայն հարցվողների 15%-ն էին կարծում, որ ընդհանուր հավասարակշռությունը բացասական է, 9%-ը նշեցին, որ բոլոր դեպքերում պետք է ընդունել առկա նվաճումները և միայն 6%-ը կարծում էին, որ քաղաքական զարգացման 20 տարիների ընթացքում կատարված սխալները գերակշռում են նվաճումները:

Նույն հարցման ընթացքում հարցվողներին առաջարկվեց նշել Ֆրանկոյի մահից հետո Իսպանիայում տեղի ունեցած ամենադրական և ամենաբացասական իրադարձությունները: 42%-ը նշեցին որպես ամենադրական իրադարձություն՝ ժողովրդավարությունը, իսկ 14%-ը ազատության վերականգնումը: Այլ քաղաքական իրադարձություններ կան քաղաքական հաստատությունների գործունեություններ նշվել են հարցվողների 5%-ի կողմից: Բացասական իրադարձությունների հետ կապված, ամենահաճախ նշվող պատասխաններն էին՝ ահաբեկչությունը, ԷՏԱ-ի ահաբեկչական գործունեությունը, սպանությունները և այլն (30%): Որպես բացասական զարգացումներ նշվել են գործազրկությունը (10%), կոռուպցիա(10%) և քաղաքներում կատարվող հանցագործությունների աճը (9%):

Այս հարցման արդյունքները հաստատվել են նաև Իսպանիայի բնակչության քաղաքական դիրքորոշումները ուսումնասիրող այլ ազգային հարցումների կողմից: Իսպանիայի հարցումներ անցկացնող երեք առաջատար կազմակերպությունների կողմից իրականացված համատեղ ծրագրի շրջանակներում հավաքագրված և վերլուծված տվյալները ներկայացնում են ժամանակակից Իսպանիայի հասարակության կարծիքը տնտեսական և քաղաքական զարգացումների վերաբերյալ:

1991-ից մինչև 1996-ը CIRES ծրագրի շրջանակներում կատարվել է իսպանացիների գոհունակության մակարդակի գնահատումը ժողովրդավարության պահպանման վերաբերյալ: Համաձայն ստացված տվյալների հարցվողների 63%-ը բավարարված են ժողովրդավարության զարգացման մակարդակով: Հարցվողների 39%-ը գոհ են ներկա կառավարության աշխատանքից, ինչը ցույց է տալիս, որ Իսպանիայի քաղաքական մշակույթը ունի ժողովրդավարության խորը արմատներ և մարդիկ հստակ տարբերում են քաղաքական համակարգի և կառավարության գործունեությունները:

1. Diez-Nicolas, Juan (1997), Commemoration of the 20th Anniversary of the First Democratic Elections, National Survey Report of the ASEP, (Análisis Sociológicos, Económicos y Políticos), Madrid
2. CIRES (1996) La Realidad Social en España, Madrid

Գերմանիայի ներքին գործերի նախարարության կողմից ֆինանսավորվող Praxis-Oriented Research (IPOS) ինստիտուտը ամեն տարի անցկացնում է հասարակական կարծիքի հարցումներ երկրում կիրառվող քաղաքականությունների տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Գերմանիայի վերամիավորման ներքո Praxis-Oriented Research (IPOS) ինստիտուտը անցկացրել էր համեմատական ուսումնասիրություն Գերմանիայի արևելյան և արևմտյան մասերում բնակվող քաղաքացիների վստահության մակարդակը քաղաքական հաստատությունների նկատմամբ պարզելու նպատակով (տես Walz 1996): Այս օրինակը ցույց տվեց, որ քաղաքական և տնտեսական խոշոր փոփոխությունների ժամանակ, քաղաքականություն մշակողները անչափ շահագրգռված են ստանալու քաղաքական հաստատությունների, կառավարության և պետական կառավարման հանդեպ հասարակության վստահության մասին տեղեկատվություն:

4. Քաղաքականության առաջնահերթ խնդիրները

Հասարակական կարծիքի հարցումների միջոցով քաղաքականություն մշակողները հնարավորություն ունեն տեղեկանալու, թե որքանով է բնակչությունը հետաքրքրված բարեփոխումներով և որովք են այդ բարեփոխումների առաջնահերթ խնդիրները: Ստացված տեղեկատվության վերլուծությունը կարող է օգտագործվել քաղաքական ոլորտին առնչվող որոշումների կայացման գործընթացում, երբ քաղաքական գործիչները կանգնած են մի քանի հնարավոր տարբերակներ ընտրելու խնդրի առջև: Բարեփոխումների առաջնահերթ խնդիրներ ուսումնասիրող հարցումները թույլ են տալիս կառավարություններին փոփոխել հասարակական կարծիքը, խուսափելով համապատասխան բարեփոխումները քաղաքացիների նախասիրություններին հարմարեցնելու խնդրից:

Առկա է քաղաքացիների իրազեկության պակասի խնդիրը, հատկապես վարչական բարեփոխումների հետ կապված, քանի որ պետական կառավարման համակարգը և վարչական բարեփոխումները չեն ներկայացնում քաղաքացիների համար կարևոր խնդիրները: Հետևաբար

հարցումները պետք է մշակվեն հաշվի առնելով այն թիրախը՝ այս դեպքում հասարակությունը, որին դրանք ուղղված են: Հաշվի առնելով վարչական բարեփոխումների հետ կապված բարդությունները, մեծ մասամբ դրանք ուղղված են լինում վարչական համակարգի որոշակի սեկտորների գործունեության բարելավմանը:

Հարցումների միջոցով կարելի է պարզել թե պետական քաղաքականության որ ուղղությունները ունեն հրատապ փոփոխությունների կարիք: Հարկ է նշել նաև, որ սահմանափակ ֆինանսական միջոցները ստիպում են կառավարություններին առանձնացնել բարեփոխումներին վերաբերող առաջնահերթ խնդիրները: Այսպիսով հասարակական կարծիքի հարցումները գնահատում են վերոնշյալ խնդիրները պետական ծախսերի տեսանկյունից:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում հարցումները օգտագործվում են որպես քաղաքականության մշակման գործընթացը լրացնող գործառույթ: Վերջին տարիներին շատ OECD երկրներում, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում հարցումները դարձել են քաղաքականության մշակման, հատկապես պետական քաղաքականության մշակման, գործընթացի սովորական գործառույթ: «British Social Attitudes» հաստատության հարցումները հանդիսանում են կրկնվող հարցումների վառն օրինակ, որոնց միջոցով համախմբվում են դիրքորոշումներ ուսումնասիրող շարունակական հարցումները և կիրառվող քաղաքականությունների խնդիրները ուսումնասիրող մեկ անգամ անցկացվող հարցումները: «British Social Attitudes» հաստատության որոշ մոդուլները ներդրվել են «Social and Community Planning Research Institute» կազմակերպության կողմից, որոշները կառավարության համապատասխան վարչությունների, տեղական կառավարման մարմինների կողմից:

Վերոնշյալ կազմակերպությունը Southampton University-ի հետ հիմնադրել է Centre for Applied Social Surveys, որի հիմնական գործունեությունն է հարցումների մեթոդաբանության թեմայով ուսուցողական դասընթացների անցկացումը և սոցիալական հարցումների էլեկտրոնային բանկի ստեղծումը և վարումը:

Բրիտանական սոցիալական պետության ապագան

1983թ-ից սկսած «British Social Attitudes» հաստատությունը հարցումներ է անցկացնում: Ամեն տարի անցկացվող հարցումների նպատակն է ուսումնասիրել բնակչության դիրքորոշումները այս կամ այն խնդրի շուրջ: Հարցումների արդյունքում ստացված գնահատականները համալրում են կառավարության կողմից անցկացվող լայնածավալ հարցումները, ինչպիսին են տնային տնտեսությունների և աշխատուժի վերաբերյալ հարցումները: Այս հարցումների նպատակն է համակարգել շարունակականության և փոփոխության տեսակները, ուսումնասիրել այն դրույքաչափերը, որոնց դեպքում քաղաքացիների դիրքորոշումները մի շարք սոցիալական

խնդիրների շուրջ փոփոխվում են ժամանակի հետ կապված: Հարցումների շարքը գնահատում է հարկերի և պետական ծախսերի վերաբերյալ Մեծ Բրիտանիայի քաղաքացիների դիրքորոշումների փոփոխման միտումները: Պետական ծախսերին վերաբերող ամենամյա հարցումների նպատակն է ցուցումներ ներկայացնել բրիտանական սոցիալական պետության ապագա դերի վերաբերյալ:

Յուրաքանչյուր ամենամյա հարցում կազմված է մեկ ժամ տևողությամբ երես առ երես հարցազրույցներից, որին հետևում է ավելի կարճ տևողությամբ մի փուլ, որի ընթացքում հարցվողը ինքնուրույն լրացնում է հարցաթերթիկը: Հարցման ընտրանքը կազմված է 3600 հոգուց: Մշակվում են հարցաթերթիկի երեք տարբերակներ, յուրաքանչյուր տարբերակ տրվում է ընտարնքի մեկ երրորդ մասին:

5. Եվրամիության ինտեգրման վերաբերյալ տեսակետներ

Կենտրոնական, Արևելյան և Արևմտյան Եվրոպայի երկրների համար Եվրամիության ինտեգրումը ամենակարևոր մարտահրավերներից մեկն է: Ակնհայտ է, որ Եվրամիության նոր Անդամ երկրները պետք է համապատասխանեցնեն իրենց քաղաքական որոշումների կայացման և իրականացման գործընթացները, ինչպես նաև կառուցվածքային համակարգերը և ընթացակարգերը Եվրամիության քաղաքական համակարգին: Եվրամիության վաղեմի Անդամ երկրները նույնպես պետք է ներգրավվեն Եվրամիության ինտեգրման գործընթացին: Եվրամիության ընդլայնումը նախատեսում է Եվրամիության ներկայիս ֆինանսական համակարգի և որոշումների կայացման գործընթացի բարեփոխումներ, ինչը իր հերթին կանդրադառնա ազգային քաղաքական և վարչական համակարգերի վրա: Եվրամիության ընդլայնումը կհանգեցնի տարածաշրջանային ինտեգրմանը, Եվրոպայի տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության խթանմանը և Եվրամիության կանոնադրության մշակմանը, որը թույլ կտա ունենալ ավելի որակյալ քաղաքական գործընթացներ:

Նույնիսկ ոչ Անդամ երկրները, օրինակ՝ Շվեյցարիան, Եվրամիության շուկա մուտք գործելու համար ստիպված կլինեն համապատասխանեցնել իրենց ազգային տնտեսական կանոնակարգերը Եվրամիության օրենսդրությանը: Արևմտյան, Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների Եվրամիության ինտեգրման գործընթացը կարելի է համարել ազգային վարչական համակարգերի «միջազգայնացման կատալիզատոր»:

Ազգային քաղաքական և վարչական համակարգերի համար մեծ նշանակություն ունեցող Եվրամիությանը ինտեգրման համատեքստում զարմանալի չէ Եվրոպական հանձնաժողովի կողմից 1970թ-ից սկսած Եվրոպական ինտեգրում և Եվրամիության խնդիրներ ուսումնասիրող հարցումների անցկացումը:

Եթե վաղ շրջաններում հարցումները մեծ մասամբ ուսումնասիրում և գնահատում էին հասարակության իրազեկվածությունը և դիրքորոշումները Եվրամիության ընդհանուր շուկայի և Եվրոպական համայնքի հաստատությունների վերաբերյալ, ապա սկսած 1973թ-ից հարցումները

ունեցան ավելի մեծ բովանդակային և աշխարհագրական ծածկույթ, ներառելով Եվրոպական հանձնաժողովի հարցումներին բնորոշ ցուցանիշները՝ մարդկանց կենսամակարդակի և գոհունակության գնահատականները:

1974թ-ից սկսած անցկացվում է Eurobarometer հարցումների շարքը, որի միջոցով կատարվում է 9 Անդամ երկրների քաղաքացիների սոցիալական և քաղաքական դիրքորոշումների մոնիտորինգը: Այս հարցումները անցկացվում են Գլխավոր տնօրինության հարցումների և հետազոտությունների ստորաբաժանման կողմից (B.X.7) տարեկան երկու անգամ՝ գարնանը և աշնանը:

Eurobarometer հարցումները ներառում են հասարակական կարծիքի, հատուկ թիրախային խմբերի և տարբեր թեմաների շուրջ անցկացված որակական հարցումները, դրանք անհրաժեշտ տեղեկատվություն են տրամադրում Եվրոպական ինտեգրման գործընթացի վերաբերյալ: Ներկայիս Eurobarometer հարցումները բաժանվում են հինգ տեսակի՝

1. Անենամյա գարնանը և աշնանը անցկացվող ավանդական Eurobarometer հարցումներ,
2. Շարունակական հարցումներ եռամսյակային հաշվետվությունների տպագրությամբ, որը կատարվում է X.A.2 վարչության կողմից,
3. Հատուկ թիրախային խմբերին ուղղված Հեռախոսային Eurobarometer հարցումներ,
4. Որոշումներ կայացնող բարձրաստիճան պաշտոնյաների Eurobarometer հարցումներ, որոնց միջոցով ուսումնասիրվում են քաղաքական և վարչական ոլորտների պաշտոնյաների, ինչպես նաև մամուլի առաջատար դեմքերի և խոշոր ձեռներեցների տեսակետները,
5. 19 երկրներում անցկացվող Կենտրոնական և Արևելյան Eurobarometer հարցումներ, որոնց միջոցով համակարգվում են տնտեսական և քաղաքական փոփոխությունները և դիրքորոշումները Եվրոպայի և Եվրամիության վերաբերյալ:

6. Հասարակական կարծիքի հարցումները քաղաքական ցիկլում

6.1. Քաղաքականության ընդունումը

Հասարակական կարծիքի զանգվածային հարցումները թույլ են տալիս վերլուծել չափահաս բնակչության դիրքորոշումները և ակնկալիքները մինչ վարչական բարեփոխումների սկսելը:

Ի տարբերություն պետական կառավարման ոլորտի կառուցվածքային հարցումների, հասարակական կարծիքի ընդհանուր հարցումները ցույց են տալիս, թե որքանով են տվյալ բարեփոխումները ընդունելի հասարակության համար ի տարբերություն վարչական անձնակազմի: Նման հարցումները ներկայացնում են բնակչության տարիքային, սեռային և սոցիալական 2 խմբեր, մի խումբը պատրաստ է աջակցել համապատասխան բարեփոխումների անցկացմանը, իսկ մյուսը՝ պատրաստ է խոչընդոտել պետական կառավարման բարեփոխումների գործընթացին:

Աշխատողների հարցումները լայնատարած օգտագործվում են վարչական բարեփոխումներից առաջ, որպես ախտորոշիչ գործիք (Klages, Gensicke and Haubner 1994): Կառուցվածքային ախտորոշումների նպատակն է ստանալ վերադասի կողմից ստեղծված աշխատանքային մթնոլորտի վերաբերյալ ստորադասի ընկալումների մասին մանրամասն տեղեկատվություն: Հետևաբար նման հարցումները որոշում են պետական հաստատությունների խնդիրները և վերլուծում են դրանց ծագման պատճառները:

Հաստատությունների աշխատողների հարցումների անցկացման ժամանակ ենթադրվում է, որ արդյունքում կստացվի տեղեկատվություն համապատասխան հաստատությունների խնդիրների և թույլ կոցների մասին և կկատարվի դրանց պատճառների վերլուծություն: Այս տիպի հարցումների դեպքում պետք է ապահովվի հարցվողների անանուն և կամավոր մասնակցությունը: Ստացված արդյունքները պետք է օգտագործվեն հաստատության հետագա կազմակերպչական զարգացման համար:

Վարչական համակարգի բարձրաստիճան ղեկավարների վերապատրաստման դասընթացներ

Բաղեն Վյուրտենբերգի ներքին գործերի նախարարությունը 1983թ-ի աշնանը անցկացրեց մի հարցում, որի նպատակն էր գնահատել աշխատողների հավանության աստիճանը կադրերի ղեկավարման ոլորտին վերաբերող վարչական բարեփոխումների նկատմամբ:

Բարեփոխումների հիմնական նպատակն էր բարելավել վարչական անձնակազմի մոտիվացիան և զարգացնել նոր կառուցվածքային մշակույթ: Հարցումն ընդգրկեց 5 պետական գործակալությունների, որոնց աշխատակիցների ընդհանուր թիվը 1000-ից ավել էր: Հարցումները տևեցին 24 ամսից ավել և կազմված էին 5 փուլերից: Կառավարության բարեփոխումների հանձնաժողովի որոշմանը համաձայն հարցման իրականացումը հանձնարարված էր մի անկախ հետազոտական ինստիտուտին:

Հարցաթերթիկը կազմված էր 29 էջից և ներառում էր աշխատանքային պայմաններին, աշխատողների մոտիվացիային, վերադասի գնահատմանը, պետական գործակալությունների հետ համագործակցության որակին, ինչպես նաև հարցվողի անձին վերաբերող հարցեր: Քանի որ ընտրված գործակալությունների աշխատողների մեծամասնությունը համաձայնվել էր մասնակցել հարցմանը, պատասխանների տոկոսը բավականին բարձր էր (54%-83%): Յուրախանչյուր պետական գործակալության համար կատարված ընդհանուր տվյալների վերլուծությունից բացի, կատարվել էր նաև հատուկ տվյալների վերլուծություն, առանձնացնելով քաղժառայության դասերը, աշխատողների տարիքային խմբերը և վարչությունները: Բոլոր 5 գործակալություններում անցկացված հարցումներում արձանագրվեցին նույն միտումները: Աշխատողներին առաջարկվեց ծանոթանալ 33 հարցի հետ և գնահատել 7 բալլանոց սանդղակին համաձայն առաջարկված հիպոթեզների համապատասխանությունը իրենց վերադասի հետ: Պարզվեց, որ համագործակցության սկզբունքի վրա հիմնված կառավարումը թերի զարգացած է:

Այս պակասը լրացնելու համար բոլոր հինգ գործակալություններում անկացվեցին ստորադասի և վերադասի միջև երկխոսությունը խթանող ուսուցման դասընթացներ: Ուսուցման դասընթացների փուլից հետո առաջնորդների պատրաստման նոր գործիքը կիրառվեց 4 պիլոտային ծրագրերում:

1. Klotz, E. & S. Mauch (1994), "Personalmanagement in Baden-Württemberg. Die Implementierung einer Konzeption in der Landesverwaltung" (Teil 3), in VOP, Vol. 16, No. 6, pp. 431-434.
2. Klotz, E. & S. Mauch (1995), "Personalmanagement in Baden-Württemberg. Die Implementierung einer Konzeption in der Landesverwaltung" (Teil 4), in VOP, Vol. 17, No. 1, pp. 28-31.
3. Klotz, E. & S. Mauch (1995), "Personalmanagement in Baden-Württemberg. Die Implementierung einer Konzeption in der Landesverwaltung" (Teil 5), in VOP, Vol. 17, No. 7, pp. 116-119.
4. Klotz, E. & S. Mauch (1995), "Personalmanagement in Baden-Württemberg. Die Implementierung einer Konzeption in der Landesverwaltung" (Schluß), in VOP, Vol. 17, No. 4, pp. 210-220.

Այսպիսով զանգվածային և կառուցվածքային հարցումները հանդիսանում են որակյալ տեղեկատվության աղբյուր, որը կարող է օգտագործվել քաղաքական և վարչական ոլորտների որոշումներ կայացնողների կողմից պետական քաղաքականության բարեփոխումների մշակման գործընթացում:

6.2. Քաղաքականության կիրառումը

Պետական քաղաքականության վերաբերյալ կատարվող հետազոտությունները վերաբերում են ընդհանուր վարչական վարքագծին և վարչական ոլորտի առանձին բարեփոխումներին և դիտվում են որպես հետադարձ կապի ստեղծման գործընթացներ վարչական հաստատությունների և վարչական կառավարման ոլորտի հիմնական մասնակիցների միջև:

Հաստատությունների հիմնական գործառույթների և մասնակիցների արձագանքների միջև փոխազդեցությունը ենթադրում է պարբերաբար կատարվող հաստատությունների վարքագծի ուսումնասիրություններ և մասնակիցների դիրքորոշումների գնահատումներ: Շատ կարևոր է հարցումներ անցկացնել բարեփոխումների իրականացման ընթացքում, ինչը թույլ է տալիս մասնակիցներին արձագանքել ընթացքում գտնվող բարեփոխումներին: Սակայն բավական չէ սկսել բարեփոխումների գործընթացը և գնահատել արդյունքները դրա ավարտից հետո:

Այսպիսով հարցումները օգտագործվում են նաև փոփոխությունների կառավարման գործընթացում: Դրանց օգտագործումը բարեփոխումների գործընթացում կարող է արագացնել կամ դանդաղեցնել բարեփոխումների ընթացքը կամ փոփոխել պլանավորված բարեփոխումների հիմնական տարրերը, եթե հետադարձ կապի ուսումնասիրման ընթացքում բացահայտվել են լուրջ խնդիրներ կամ խոչընդոտներ, որոնք կարող են ձախողել բարեփոխումների գործընթացը:

Երբ սկսվում է բարեփոխումների գործընթացը միանգամից բացահայտվում են դրանց իրականացման բոլոր խնդիրները, սակայն իրական արդյունքների, որպես կանոն, հաջողվում է հասնել քաղաքականության իրականացման ցիկլի վերջում: Հենց այս պատճառով քաղաքական և վարչական ոլորտների որոշումներ կայացնողները կարող են հանդիպել լուրջ խնդիրների հարցումներից ստացված արդյունքները հասարակությանը տրամադրելու դեպքում:

Ֆիննական տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացված որակի բարելավման պիլոտային ծրագիրը վարչական բարեփոխումների գաղափարը ոսուցողական գործընթացում օգտագործելու վառն օրինակներից է:

Ֆիննական որակի բարելավման ծրագրի նախադրյալներից մեկն էր ISO 9000 ստանդարտների լայն տարածումը մասնավոր սեկտորում: ISO 9000-ը միջազգայնորեն ճանաչված ուղենիշների հավաքածու է, որի համաձայն որոշվում և փաստաթղթերով հիմնավորվում են ապրանքների և կազմակերպության գործընթացների որակի ստանդարտները: Տեղական ինքնակառավարման մարմինների Ֆիննական ասոցիացիայի պիլոտային ծրագրի հիմնական նպատակն էր տեղափոխել որակի ստանդարտների այս համակարգը արդյունաբերության միջավայրից պետական կառավարման միջավայր (տես Աղյուսակ 4):

6.3 Քաղաքականության գնահատումը

6.3.1 Գոհունակության գնահատականները

Գոհունակության գնահատումը կարող է կատարվել հետևյալ ուղղություններով՝ քաղծառայողների գոհունակությունը աշխատանքային միջավայրով և հաճախորդների գոհունակությունը մատուցվող պետական ծառայությունների որակի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է քաղծառայողների գոհունակությունը գնահատող հարցումներին, չնայած նրան, որ այդ հարցումները անանուն են և դրանց անցկացման ժամանակ գործում է գաղտնիության պահպանման սկզբունքը, այնուամենայնիվ, աշխատողները ունենում են դատապարտված լինելու մտավախությունը: Հետևաբար ստացվում է պատասխանների ցածր տոկոս՝ 20%-30% (Klages 1997): Միջին և բարձր աստիճանի պաշտոնյաների գնահատելու պարտավորվածությունը դրական է ազդում վարչական ծառայողների և էլիտայի կողմից տրամադրած տեղեկատվության որակի և պատասխանների տոկոսի վրա: Նման պատասխանների բարձր տոկոսներ ուներ Կանադայում անկացված հարցումը:

Որակի կառավարման բարելավման հնարավորությունները Ֆիննական տեղական ինքնակառավարման մարմիններում

Տեղական ինքնակառավարման և ծառայությունների որակի բարելավման պիլոտային ծրագիրը Տեղական ինքնակառավարման մարմինների ասոցիացիայի «Որակ և Համայնքի Ծրագիր» նախադեռնության մի մասն էր, որը ներառում էր տարբեր մեծության 5 ինքնակառավարման մարմիններ Ֆինլանդիայի տարբեր շրջաններից՝ Էսպոյի սոցիալական և առողջապահական ծառայությունները (բնակչությունը՝ 186507 մարդ), Վանտայի վարչական կառավարման մարմինները (բնակչությունը՝ 164376 մարդ), Պորիի ղեկավարությունը (բնակչությունը՝ 76561 մարդ), Համենկիրոյի բնակարանային շինարարության ծառայությունը (բնակչությունը՝ 9676 մարդ) և Կաննուսի ֆինանսական վարչությունը (բնակչությունը՝ 6291 մարդ): Ծրագրի նպատակն էր ուսումնասիրել ISO 9000 ստանդարտների հավաքածուի կիրառելիության ազդեցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ծառայությունների որակի բանելավման վրա և փորձարկել այս ստանդարտների հիման վրա մշակված որակի համակարգերը:

Այս պիլոտային ծրագիրը սկսվեց 1993թ-ի գարնանը և ավարտվեց 1995թ-ի փետրվարին: Յուրաքանչյուր մասնակից մշակեց որակի իր ձեռնարկը, որից հետո մասնակիցները շարունակեցին ինքնուրույն աշխատել իրենց ստանդարտների համակարգերը զարգացնելու նպատակով: 1996թ-ի գարնանը անցկացվեց հարցում պիլոտային ծրագրի արդյունքում տեղի ունեցած առաջընթացը և ձեռքբերված փորձը գնահատելու նպատակով:

Հարցումը հիմնված էր պիլոտային ծրագրերի որակի մենեջերների և տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքապետերի հարցազրույցների վրա: Հարցաթերթիկի թեմաները ընտրվել են որակի ձեռնարկների հիման վրա: Ներառված թեմաների շարքում են բարձրաստիճան պաշտոնյաների պատրաստակամությունը և որակի համակարգի աշխատանքը, ծառայություններ մատուցելու պատրաստակամությունը, որակի աուդիտը և կադրերի վերապատրաստումը, հաճախորդների գոհունակությունը և գործընթացի ղեկավարումը:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ որակի ձեռնարկները օգտագործվել են հաստատությունների բոլոր վարչություններում և ուսումնասիրվել ղեկավարության կողմից: Հարցմանը համաձայն որակի ձեռնարկների կիրառումը դրական ազդեցություն է ունեցել հաճախորդների գոհունակության վրա:

Սակայն որակի ապահովման հետ կապված ծախսերի գնահատումը և մոնիտորինգը թերի էին, այդ պատճառով Տեղական ինքնակառավարման մարմինների ասոցիացիայի կողմից

իրականացվեց մի այլ ծրագիր, որի նպատակն էր մշակել որակի ապահովման հետ կապված ծախսերը որոշող ցուցիչներ:

1. Mustonen, M. (1996), "The ISO 9000 Project: Trial of the Applicability of an ISO 9000 Quality Management System in five Municipal Service Functions in Finland", in Hill, H., H. Klages, and E. Löffler (eds.), Quality, Innovation and Measurement in the Public Sector, Lang, Frankfurt, pp. 65-76.
2. Population figures from 31 December 1994.
3. Association of Finnish Local Authorities (1995), Total Quality Management in Municipal Service Provision, Helsinki.
4. Sundquist, S. (1998), "Interim Report on the ISO 9000 Pilot Projects", in Hill, H., H. Klages, and E. Löffler (eds.), Assessing and Evaluating Public Management Reforms.

Կանադայի Ղաշնային պետական ծառայության ավագ մենեջերների գոհունակության գնահատումը և աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը

1986 և 1988թթ-ին Կանադայի կառավարություն հովանավորությամբ անցկացվեցին պետական ծառայության ավագ պաշտոնյաների երկու հարցումներ: Այս ուսումնասիրությունների նպատակն էր պարզել ավագ քաղծառայողների վերաբերմունքը և ընկալումները աշխատանքային արժեքների, կազմակերպության մշակույթի, պարզևատրույթների և աշխատանքային մթնոլորտի վերաբերյալ: Քանի որ նման ուսումնասիրություններ նախկինում չէին անցկացվել, որոնք գնահատման միջոցներ չէին մշակված: 1986թ-ին հետազոտողները ավելի ընդլայնեցին ուսումնասիրության շրջանակները, ընդգրկելով մասնավոր սեկտորի մենեջերների ընտրանքը: Հարցվողների 70%-ը պատասխանել էին 200-ից ավելի փոփոխականներ ներառող հարցաթերթիկի: 1986թ-ին պետական կառավարման սեկտորի հարցվողները ընտրվել էին 20 նախարարություններից և 13 խոշոր մասնավոր ընկերություններից: 1988թ-ի հարցումը կրկին անցկացվեց միայն պետական ոլորտում, հարցաթերթիկը ուղարկվել էր բոլոր ավագ պաշտոնյաներին: 1988թ-ի պատասխանների տոկոսը հավասար էր 70%-ի:

Հարցաթերթիկները հարցվողներին ուղարկվել էին փոստի միջոցով, որոնք պետք է ինքնուրույն լրացվեին հարցվողների կողմից: Օգտագործվել էր հինգ բալլանոց սանդղակը և հարցվողները պետք է նշեին իրենց պատասխանները սկսած խիստ համաձայն եմ տարբերակից և վերջացրած խիստ համաձայն չեմ տարբերակով: Հարցաթերթիկում ներկայացվել էին նաև արժեքներին վերաբերող որոշ բաց հարցեր: Ուսումնասիրության ընթացքում բացահայտվեցին մասնավոր և պետական սեկտորների ղեկավարների ընկալումների միջև տարբերությունները որակի կառավարման հմտությունների վերաբերյալ: 1986 և 1988թթ-ին հարցումները բացահայտեցին պետական ծառայությունների մատուցող հաստատությունների կառուցվածքում տարբեր պաշտոններ զբաղեցնող ծառայողների ընկալումների միջև տարբերություններ,

հատկապես բարձրաստիճան և դրանցից մի քանի աստիճան ցածր պաշտոնյաների մակարդակով: Նման տարբերություններ չեն արձանագրվել մասնավոր սեկտորի դեպքում:

Տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ Կանադայի պետական ոլորտի բարձրաստիճան ղեկավարները ունեն ավելի ցածր աստիճանի գոհունակություն, քան իրենց կոլեգաները մասնավոր սեկտորում: Օրինակ՝ պետական ծառայության բարձրաստիճան պաշտոնյաների 42%-ը համաձայնվել էր այն տեսակետի հետ, որ ծառայության մեջ առաջընթացը կախված է ծառայողի արժանիքներից, սակայն հարցվողների միայն 19%-ը համաձայնվել էր այս տեսակետի հետ:

Պետական ծառայության բարձրաստիճան պաշտոնյաների 78%-ը գտնում են, որ պետք է խրախուսվի ստորադասի մասնակցությունը որոշումների կայացմանը, սակայն միայն հարցվողների 47%-ը համաձայն են այդ տեսակետի հետ: Մասնավոր սեկտորում նման իրավիճակ չի գրանցվել:

Մասնավոր սեկտորի բարձրաստիճան մեներջերների 78%-ը կարծում են, որ իրենց կազմակերպությունում խրախուսվել է ստորադասի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին և հարցվողների 74%-ը համաձայնվել են այդ տեսակետի հետ: 1988թ-ին անցկացված հարցումը նույնպես հաստատեց պետական ծառայությունների բարձրաստիճան ղեկավարների միջև գոյություն ունեցող տարբերությունների առկայությունը, դրանք ոչ միայն պահպանվել էին, այլ նաև ավելի ակնհայտ էին դարձել:

1988թ-ի հարցումը մեկ անգամ ևս հաստատեց, որ կան լուրջ խնդիրներ քաղծառայողների մոտիվացիայի և գոհունակության հետ կապված: Բաց հարցերի վերլուծությունը ցույց տվեց, որ նույն կազմակերպության բարձրաստիճան ծառայողները չեն կիսում նույն արժեքները և մշակույթը: Հաշվի առնելով հարցումների արդյունքները և այլ ուսումնասիրությունները Կանադայի կառավարությունը ներկայացրեց վարչական բարեփոխումների ծրագիր «Պետական ծառայություն 2000» խորագրով, որտեղ տրվեցին 10-ը առաջարկություններ պետական ծառայությունների ոլորտի բարեփոխումների իրականացման միջոցների վերաբերյալ: Այդ առաջարկությունների թվում էին ծառայությունների ստանդարտների բարելավումը, աշխատանքի կազմակերպմանը վերաբերող առաջատար ընթացակարգերի և կարիերայի ծառայության գործունեության բարելավում: Հարկ եղած դեպքում կառավարությունը հաշվի կառնի մշակված առաջարկությունները նոր կանոնակարգեր մշակելիս:

1. Zussman, D. and J. Jabes (1989), *The Vertical Solitude: Managing in the Public Sector*, Institute for Research on Public Policy, Halifax, Nova Scotia; Jabes, J. and D. Zussman (1988), "Motivation, Rewards and Satisfaction in the Canadian Federal Public Service", *Canadian Public Administration*, Vol. 31, No. 2, pp. 204-225.

2. The Deputy Minister is the most senior manager in a Canadian Ministry.

3. Tellier, P.M. (1992), *Public Service 2000: A Report on Progress*, Minister of Supply and Services, Ottawa, Canada.

Հաճախորդների հարցումները լայնատարած օգտագործվում են վարչական կառավարման համակարգից դուրս, մասնավոր սեկտորի շահույթ հետապնդող ընկերությունների կողմից

սպառողների գոհունակությունը և շուկան ուսումնասիրելու նպատակով: Սակայն ներկայիս հաճախորդների հարցումները գնալով ավելի ակտիվ օգտագործվում են հաճախորդների հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական կառավարման ոլորտի ծառայություններ մատուցող ստորաբաժանումների կողմից: Հաճախորդների հարցումները հանդիսանում են պետական ոլորտի ապրանքների և մատուցվող ծառայությունների արդյունավետության և ազդեցության, ինչպես նաև որակի և արտադրողականության ցուցանիշների գնահատման կարևոր գործիք: Հաճախորդների մատոցվող ծառայությունների գնահատականները միշտ ավելի դրական են, քան ընդհանուր հասարակության գնահատականները (Poister and Henry 1994): Այս ազդեցությունը կարելի է չեզոքացնել օգտագործելով պատահական ընտրանքի մեթոդաբանությունը:

Հաճախորդների հարցումները կարելի է շատ արդյունավետ օգտագործել հետևյալ 7 թեմաների ուսումնասիրության համար՝ հաճախորդների ակնկալիքները, աշխատանքային մշակույթը, աշխատանքի կազմակերպումը, աշխատանքային ժամերը, ծախսերը, աշխատողների պարգևատրումը և գնահատումը: Ակնհայտ է, որ հաճախորդների հարցումները ավելի լայն կիրառում են ստացել վարչական կառավարման ոլորտում, որը գտնվում է հաճախորդների հետ անմիջական կոնտակտի մեջ: Թիլբուրգ քաղաքի քաղաքապետարանը կատարել էր ուսումնասիրություն «քաղաքային շուկա» խորագրով (Arntzen 1994): Ամենամյա մարքեթինգային ուսումնասիրությունները ներառում էին նաև հարցումներ, որոնց ընտրանքը կազմված էր 18 տարեկանից բարձր 1000 քաղաքացիներից: Հարցվողներին տրվել էին քաղաքի ղեկավարմանը վերաբերող հարցեր: Հարցումների արդյունքները ոչ միայն տպագրվել էին տեղական թերթերում, այլ նաև օգտագործվել էին Թիլբուրգ քաղաքի խորհրդի և ղեկավարության վերահսկման և բյուջետային գործընթացների մեջ: Սա նշանակում է, որ շարունակական մարքեթինգային հետազոտությունների արդյունքները կազմում են Թիլբուրգ քաղաքի վարչական և քաղաքական պատասխանատվության անբաժանելի մասը:

Հաճախորդների գոհունակությունը գնահատող հարցումները օգտագործվում են որպես պետական հաստատությունների ներքին վերահսկողության գործիք: Դրանք թույլ են տալիս պարբերաբար ստանալ հաճախորդների սուբյեկտիվ գնահատականները պետական գործակալությունների կողմից առաջարկվող ապրանքների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ: Հաճախորդների գոհունակության աստիճանը արտացոլում է առաջարկվող ապրանքների և մատուցվող ծառայությունների կարողությունները հաճախորդներին գոհացնելու հարցում, դրանց օգտակարությունը և պիտանիությունը: Մեծ Բրիտանիայում, ինչպես նաև Պորտուգալիայում, Ֆրանսիայում և այլ OECD երկրներում քաղաքացիների խարտիաները հրապարակում են հաճախորդների գոհունակության գնահատականները և ցուցանիշները:

Նման տեղեկատվությամբ հետաքրքրված են հարկատուները, կառավարությունը, ծառայություններից օգտվող քաղաքացիները, ընտրողները և անկախ աուդիտորները:

Նման տեղեկատվության հրապարակման միջոցով կարելի է ավելացնել քաղաքական ճնշումը կառավարության կազմում ընդգրկված ընտրված և նշանակված բարձրաստիճան պաշտոնյաների վրա, ինչպես նաև նպաստել քաղաքացիների իրազեկության բարձրացմանը:

Պետական ծառայությունների գործունեության գնահատումը շվեդական Ազգային գոհունակությունը բարոմետրի կողմից

Որակի խրախուսման նպատակով Շվեդիան առաջինը իրականացրեց հաճախորդների գոհունակության գնահատումը 30-ից ավել ոլորտներում և 100-ից ավել ընկերություններում, ընդգրկելով այնպիսի մասնավոր սեկտորի ոլորտներ, ինչպիսիք են հեռահաղորդակցությունը և փոստային ծառայությունները, ինչպես նաև պետական կառավարման ոլորտները, օրինակ՝ ոստիկանությունը: 1989թ-ին 28 ոլորտներում գործող խոշոր շվեդական ընկերությունների հաճախորդները մասնակցեցին շվեդական Ազգային գոհունակության բարոմետրի կողմից անկացված ուսումնասիրությանը:

1990թ-ին ընկերությունների թիվը ավելացավ և հասավ 32-ի: Սա նշանակում է, որ տարեկան պատահական սկզբունքով ընտրվում է 100000 հարցվող: Արդյունքում տարեկան ստացվում է 2500 մարդուց կազմված ընտրանք: Հարցումը անցկացվում է ութ թույն տևող հարցազրույցի տեսքով: Յուրաքանչյուր հարցվողին տրվում են միայն մեկ ընկերության վերաբերող հարցեր:

Համաձայն գոհունակության միջին ցուցանիշների 0-ից 100 բալլային սանդղակով 1989թ-ից մինչև 1991թ-ը և մոնոպոլիաների և մրցակից ընկերությունների դեպքում ծառայությունները գնահատվել են ավելի ցածր քան ապրանքները: 1991թ-ին ամենաբարձր գնահատականը տրվել է հիմնական սննդամթերքին և ավտոմեքենաներին, իսկ ամենացածր գնահատականը՝ երկաթուղային տրանսպորտին, ոստիկանությանը և հեռուստատեսությանը: 1989, 1990 և 1991թթ-ին ոստիկանության գործունեության միջին գնահատականները հավասար էին 56-ի, 55-ի և 58-ի համեմատած 77-ի, 76-ի և 78-ի ավտոմեքենաների համար: 1989 և 1990 թթ-ին բոլոր ոլորտների համար միջինը հավասար էր 64-ի, իսկ 1991թ-ին՝ 65-ի: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ պետական ծառայություններից օգտվող հաճախորդները գոհ չեն դրանց որակից: Հետևելով Շվեդիայի օրինակին ԱՄՆ-ի կողմից մշակվեց ազգային որակի ինդեքս, որին հետևեցին ճապոնիան և Եվրամիության մի շարք երկրներ:

6.3.2 Այլ գնահատականներ

Հասարակական կարծիքի հարցումները կարող են օգտագործվել որպես վարչական բարեփոխումների հաջողությունը կամ ձախողումը գնահատող գործիք, որը կարող է կիրառվել և մասսայաբար և առանձին հաստատությունների անձնակազմների մասնակցությամբ: Որպես կանոն վարչական բարեփոխումների արդյունքները տեսանելի է դառնում դրանց իրականացումից որոշ ժամանակ անց, երբ տվյալ բարեփոխումները իրականացնող կառավարության կազմը արդեն փոխված է (Trosa 1992):

Վարչական բարեփոխումների ավարտից հետո անցկացված ուսումնասիրությանը համաձայն վարչական կառավարման ոլորտի ծառայողները համարում են իրենց ոչ բավարար տեղեկացված բարեփոխումների հետևանքների վերաբերյալ: Այս իրավիճակի գոյությունը մեկ անգամ ևս հաստատվեց Իտալիայի օրինակով (տես Աղյուսակ 6): Այն ցույց տվեց, որ հաստատության ներսում կատարված ուսումնասիրությունները կարող են նպաստել ուսուցմանը բարեփոխումների իրականացման փուլի ընացքում: Սակայն շատ հաճախ հաստատության ներսում կատարված ուսումնասիրությունները համարվում են ծախսերի տեսակետից անարդյունավետ և շատ դեպքերում ոչ ցանկալի: Հաճախ դժվար է համոզել հաստատության այլ բաժնետերերին, որ հաստատության ներսում կատարված ուսումնասիրությունների ժամանակ պահպանվել է անկողնակալության սկզբունքը:

Իտալիայի քաղաքացիների խարտիայի արդյունավետ գործունեությունը առողջապահության ոլորտում

1992-1994թթ-ին Իտալիայում իրականացվեցին մի քանի խոշոր վարչական բարեփոխումներ: Մշակվեց նոր օրենսդրություն տեղական կառավարության, ազգային առողջապահական և կրթական համակարգերի համար: Պետական կառավարման ոլորտին վերաբերող նոր հաշվապահական ստանդարտների ներմուծման հետ մեկտեղ, կատարվեցին նաև բարեփոխումներ կենտրոնական առևտրային համակարգի մեջ: Որակի նոր ստանդարտների ներմուծման արդյունքում հաստատվեցին բոլորովին նոր որակական արժեք ունեցող հարաբերություններ հաճախորդների հետ: Սա իրականացվեց իտալական «Carta dei servizi», որը Բրիտանական քաղաքացիների խարտիայի իտալական տարբերակն էր: Ինչպես Բրիտանիայի այնպես էլ Իտալիայի քաղաքացիների խարտիան համարում են, որ պետական մարմինները պատասխանատու են որակի ստանդարտների պահպանման համար և հենց այդ մարմինները պետք է կիրառեն վերահսկողության և գնահատման համակարգերը մատուցվող ծառայությունների որակը բարելավելու համար:

Հակառակ Մեծ Բրիտանիայի, Իտալիայում չէին կիրառվում ազգային որակի ստանդարտներ: Արդյունքում պետական գործակալություններին հանձնարարվեց մշակել որակի ազգային ստանդարտներ:

Քաղաքացիների խարտիայի հիմնադրումից մեկ տարի անց առողջապահության և տարածաշրջանների հարցերով զբաղվող նախարարությունը նախաձեռնեց մի ուսումնասիրություն, որի նպատակն էր գնահատել այս կառավարման նոր գործիքի կիրառման արդյունքները: Առողջապահության և տարածաշրջանների հարցերով զբաղվող նախարարությունը հստակ նշեց, որ տվյալ գնահատման նպատակն է խթանել համատեղ ուսուցողական գործընթացը և ոչ թե վերահսկել առողջապահության ոլորտի հաստատությունները: Գնահատման գործընթացը հիմնված էր ինքնագնահատման սկզբունքի վրա: Առողջապահության և տարածաշրջանների հարցերով զբաղվող նախարարությունը մշակել էր 3 տեսակի հարցաթերթիկներ՝ ազգային, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային մակարդակի առողջապահական հաստատությունների համար: Առաջին տեսակի հարցաթերթիկները ուղարկվել էին այն առողջապահական հաստատություններին, որոնք արդեն իսկ ընդունել են քաղաքացիների խարտիաները, երկրորդ տեսակի հարցաթերթիկները՝ քաղաքացիական խարտիաներ ընդունելու մտադրություն ունենող, սակայն դեռ դրանց չդիմած առողջապահական հաստատություններին: Երրորդ տեսակի հարցաթերթիկները ուղարկվել են այն հաստատություններին, որոնք դեռ այդպիսի մտադրությամբ հանդես չեն եկել: Ընդհանուր հաշվով ենթատարածաշրջանային մակարդակով 310 առողջապահական հաստատություններ ստացել էին հարցաթերթիկներ, հաստատությունների 96%-ը լրացրել էին այդ հարցաթերթիկները: Տարածաշրջանային մակարդակով պատասխանների տոկոսը հավասար է 100-ի, գնահատմանը մասնակցել են բոլոր 21 տարածաշրջանային և գավառական հաստատությունները:

Հարցաթերթիկների վերլուծությունը ներկայացրեց քաղաքացիների խարտիաների ներդրման ազդեցությունը առողջապահական ծառայությունների համակարգում: Առողջապահական հաստատությունների 65%-ը ունեին քաղաքացիական խարտիաներ: Հարցմանը համաձայն հաստատությունների 45%-ը զբաղվում է որակի ստանդարտների մոնիտորինգով, իսկ 16%-ը ներգրավում է քաղաքացիներին ծառայությունների որակի ստուգման գործընթացին: Սա նշանակում է, որ ծառայությունների ստանդարտների մոնիտորինգը իրականացվում է ոչ պատշաճ կերպով: Այս տեղեկատվությունը թույլ տվեց առողջապահության և տարածաշրջանների հարցերով զբաղվող նախարարությանը մշակել ծառայությունների որակի ներքին և արտաքին մոնիտորինգը զարգացնելու գործիքներ:

7. Պետական կառավարման հաստատությունների իմիջը

Հարցումների միջոցով կատարվել է մի ուսումնասիրություն, որը թույլ է տվել համեմատել աշխատակիցների ունեցած ընկալումները իրենց հաստատության վերաբերյալ նույն հաստատության վերաբերյալ հասարակության ունեցած ընկալումների հետ:

Շատ հաճախ հայտնաբերվում են լուրջ տարբերություններ վերոնշյալ երկու խմբերի միջև: Պետական քաղաքականության տարբեր ընկալումների օրինակ է հանդիսանում 1991թ-ին Ավստրիայի Տիրոլ համայնքի պետական հիվանդանոցում անցկացված հարցումը:

Հիվանդների, այցելուների, հիվանդանոցի աշխատակիցների և բնակչության ընկալումները պետական հիվանդանոցի վերաբերյալ

1991թ-ին Տիրոլի կառավարության կողմից նախաձեռնած այս հարցումները Ինսբրուկում գտնվող հիվանդանոցի տարածաշրջանային նշանակությունը գնահատող ուսումնասիրության մի մասն էին կազմում: Ինսբրուկի Ֆինանսական հետազոտությունների և Սոցիոլոգիայի ինստիտուտներին հանձնարարվել էր ուսումնասիրել հետևյալ երկու կարևոր հարցերը՝ հիվանդանոցի տարածաշրջանային և տնտեսական նշանակությունները և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հիվանդանոցին հատկացվող ֆինանսական աջակցությունը: Որոշվել էր տարբեր թիրախային խմբերի հարցման միջոցով ուսումնասիրել ֆինանսական աջակցության բաշխվածության մոդելները և հիվանդանոցի դիրքի նշանակությունը:

Ուսումնասիրությունը կազմված էր այցելուների և հիվանդների հետ տարվող հարցազրույցներից, որոնք անցկացվել էին 1991թ-ի մայիսի 13-ից 19-ը: Հիվանդանոցի աշխատողների հարցումը կատարվել է հարցաթերթիկների գրավոր լրացմամբ: Երեք թիրախային խմբերին ուղղվել են իրենց վարքագծին և սպառողական մոդելներին վերաբերող հարցեր: Բնակչությանը տրվել են հիվանդանոցի ընդհանուր գործունեությունը և մարդասեր վերաբերմունքը գնահատող հարցեր:

Հեռախոսային հարցազրույցների համար մշակված հարցաթերթիկները թույլ էին տվել որոշել հիվանդանոցի կողմից մատուցվող տարբեր ծառայությունների որակը, գնահատելով այն 1-6 բալլանոց սանդղակով, որտեղ 1 – շատ լավ և 6-շատ վատ: Բնակչությունը բարձր էր գնահատել հիվանդանոցի բժշկներին, իրենց մասնագիտական պատրաստվածությունը և հիվանդանոցի միջազգային համբավը (միջինում 1.6 բալլ): Հիվանդների բուժմանը վերաբերող բոլոր գործառույթները նույնպես բարձր էին գնահատվել (միջինում 1.9 բալլ), սակայն մարդասեր վերաբերմունքը ավելի ցածր էր գնահատվել (միջինում 2.5 բալլ):

Մնացած երեք հարցումները ներկայացրել են ֆինանսական տվյալներ հիվանդանոցի ծախսերի բաշխվածության վերաբերյալ: Համեմատելով հիվանդանոցի ֆինանսական համակարգի իրական տվյալները հարցումներից ստացված տվյալների հետ պարզվեց, որ Ինսքրուկ քաղաքը մեծ օգուտ ունի տվյալ պետական հիվանդանոցի դիրքից: Արդյունքում առաջ քաշվեց Ֆինանսական միջոցների վերաբաշխվածության մոդելների անհրաժեշտությունը: Պարզվեց, որ Ինսքրուկի տեղական իշխանությունները պետք է ավելացնեն հիվանդանոցի ֆինանսական աջակցության չափը:

1995թ-ին Գերմանիայի արևմտյան և արևելյան շրջաններում անցկացվեց մի հարցում, որին մասնակցեցին 40 հաստատություններ արևմտյան շրջաններից և 37 հաստատություններ արևելյան շրջաններից, նաև քաղաքի խորհրդի անդամներ, տեղական կուսակցությունների առաջնորդներ և վարչական կառավարման ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներ, ընդգրկելով ընդհանուր առմամբ 1231 մարդ: Առաջարկվող հարցերը վերաբերում էին տեղական կառավարությունների խնդիրներին, դրանց կառավարման հմտություններին, տեղական կառավարությունների ներքին կոնֆլիկտներին և որոշումների կայացման արդյունավետությանը: Էլիտայի պատասխանների տոկոսը հավասար էր 53.3%-ի:

Մասնավոր հետազոտական ինստիտուտի կողմից հեռախոսային հարցում էր անցկացվել 15 արևմտյան և 15 արևելյան տեղական ինքնավարությունների 2400 քաղաքացիների հետ: Տեղական ինքնավարությունների ընտրությունը կատարվել էր «Ժողովրդավարություն և Տեղական կառավարում» միջազգային հետազոտական ծրագրի հիման վրա, ինչը թույլ էր տվել համեմատել Գերմանիայի տվյալները Չեխիայի, Լեհաստանի, Սլովակիայի, Ավստրիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ-ի հետ: Համաձայն Գերմանիայի արևմտյան և արևելյան շրջանների էլիտայի տնտեսական խնդիրները ավելի կաևոր են քան կայնքի որակին վերաբերող այլ խնդիրներ:

Գերմանիայի արևմտյան և արևելյան շրջանների քաղաքացիները ունեն տարբեր տեսակետներ իրենց տեղական կառավարության խնդիրների վերաբերյալ: Ըստ քաղաքացիների գործազրկությունը, սոցիալական ապահովությունը և շրջակա միջավայրի պաշտպանությունը ավելի կարևոր են քան տնտեսական զարգացման և ֆինանսական խնդիրները:

Համեմատած այլ երկրների էլիտաների հետ ինչպիսին են՝ Ավստրիայի, Չեխիայի, Լեհաստանի, Սլովակիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ-ի էլիտաները Գերմանիայի էլիտան նշեց բազմաթիվ լուրջ խնդիրների առկայության մասին, ինչը դժվար է հասկանալ, քանի որ Գերմանիայի տեղական ինքնավարությունները տնտեսապես զարգացած են և համեմատած Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի այլ երկրների հետ ունեն ավելի քիչ թվով խնդիրներ:

Արևմտյան և արևելյան շրջաններում արձանագրվել են հիասթափություններ, կապված մարդկանց ակնկալիքների հետ՝ արևելյան շրջանում Գերմանիայի վերամիավորումը չարդարացրեց բազմաթիվ մարդկանց նյութական սպասելիքները, իսկ արևմտյան շրջանում նախկին տնտեսական բարեկեցությունը առաջացրեց ներկայիս տնտեսական դժվարությունների հետ չհամընկնող սպասելիքներ:

Այս արևմտյան և արևելյան շրջանների համեմատական հարցումը ցույց տվեց, որ քաղաքական իրականության ընկալումները կարող են գտնվել տարբեր գործոնների ազդեցության տակ և շատ հաճախ չեն կարող արտացոլել իրական խնդիրները: Կախված հարցման մասնակիցների ընտրությունից հարցվողները կարող են անտեղյակ կամ կիսով չափ տեղյակ լինել հարցման թեմայի վերաբերյալ: Մարդկանց ընկալումները քաղաքական իրականության վերաբերյալ կարող են ազդել մարդկանց ընտրություններին մասնակցելու վարքագծի վրա՝ առաջացնելով անտարբերության վարքագիծ: Այս պատճառով շատ կարևոր են քաղաքական և վարչական ոլորտների որոշումներ կայացնողների համար քաղաքական իրականության վերաբերյալ հասարակության տարբեր խավերի տեսակետները:

8. Վարչական համակարգում հասարակական կարծիքի հարցումներից ստացված տեղեկատվության տեղադրումը

Շատ կարևոր է հարցումներից ստացված տվյալների հասանելիության հարցը: OECD երկրներին բնորոշ է տվյալների կենտրոնացված տեղադրման և դրանց օգտագործման բացակայությունը: Սակայն որոշ OECD երկրներում կան կենտրոնական արխիվներ, որոնք հասանելի են Ինտերնետի միջոցով: Այդ արխիվները գտնվում են ազգային սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտներում և ընդգրկում են տվյալների բազաներ և ընդհանուր տեղեկատվություն հարցումների և դրանց թեմաների մասին: Բազաներից կարելի է օգտվել Ինտերնետի միջոցով կամ դիմելով համապատասխան ինստիտուտին:

Եվրոպայի ինտեգրված տվյալների կատալոգը CESSDA-ն թույլ է տալիս օգտվել Ֆրանսիայի (BDSP), Դանիայի (DDA), Մեծ Բրիտանիայի (DA), Շվեդիայի (SSD), Իսրայելի (SSDA), ՅուՆԱԿՈՒԿՍԻ (Steinmetz), Գերմանիայի (ZA), Զուլանդիայի (TARKI) և Ավստրալիայի (SSDA) կենտրոնական արխիվներից: Այս արխիվների տվյալները կարող են օգտագործվել երկրորդային տվյալների վերլուծության համար, ինչը թույլ է տալիս օտագործել նույն տվյալները տարբեր նպատակների համար:

Մինչ այժմ Եվրամիությունը չունի տվյալների բանկ, որտեղ ներկայացված կլինեին Եվրամիության Անդամ երկրների տվյալների բազաները: Եվրոպական ինտեգրման գործընթացի զարգացման հետ ավելի է կարևորվում նման տվյալների բանկի ստեղծումը Եվրամիության Անդամ երկրների քաղաքական գործիչների համար: Ողջունելի է նաև այն, որ տեղական կառավարման մարմինները սկսել են իրենց հաճախորդների և անձնակազմի հարցումներից ստացված տվյալների բանկերի ստեղծման գործընթացը: Օրինակ՝ Բեռլինի քաղաքաշինության ինստիտուտը (DIFU) ստեղծել է տվյալների բանկ, որտեղ զետեղված են 30-ից ավելի հարցումներից ստացված տվյալներ:

Շատ դեպքերում հարցումներ նախաձեռնող մարմինը (նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ) չի հրապարակում ստացված տվյալները, պահելով այն իր վերահսկողության տակ: Այս դեպքում տվյալները չեն կարող հասանելի լինել բոլոր շահագրգիռ

կողմերի համար: Շատ հաճախ միայն որոշ ժամանակ անց տվյալները հասանելի են դառնում հասարակությանը համար:

Եվրոպական հանձնաժողովը պահում է Եվրոբարոմետր հարցումների բոլոր հաշվետվությունները DGX բազայում: Եվրոբարոմետրի իրական համակարգչային արխիվը գտնվում է ոչ թե Բրյուսելում, այլ Մանհեյմի ZEUS ինստիտուտում: Այս ինստիտուտի կողմից է կատարվում SIR տվյալների բազայի վարումը, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի համար կատարվող Եվրոբարոմետր հարցումների երկրորդային տեղեկատվության վերլուծությունները: Մինչ այժմ ZEUS-ի կողմից կատարվել է տարբեր թեմաներով 100-ից ավելի հաշվետվությունների կազմում: Մոտ 1.2 մլն. հարցազրույցներ, անկացված մոտ 120 Եվրոբարոմետր հարցումների շրջանակներում, պահվում են SIR տվյալների բազայում: Ամեն տարի 50000 հարցազրույցներ ավելացվում են տվյալների բազային: Ի լրումն ZEUS-ի Եվրոբարոմետր տվյալների բազայի թվային բաժնին, α -թվային բազան պարունակում է Եվրոբարոմետր հարցումների կրճատ բառային ձևակերպումները, ինչը հեշտացնում է հարցումներից ստացված տվյալների որոնումը:

9. Հարցումների գնահատումը որպես վարչական բարեփոխումների գործիք

Վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, որ հարցումները հանդիսանում են վարչական բարեփոխումների գործընթացի կիրառման և դրա ընթացքում որոշումների կայացման օգտակար գործիք (Klages 1997): Մինչ վարչական բարեփոխումներ սկսելը քաղաքական գործիչները և վարչական ոլորտի որոշումներ կայացնողները կարող են օգտագործել որպես ախտորոշիչ գործիք զանգվածային հարցումներից, ինչպես նաև վարչական ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաների և աշխատակիցների հարցումներից ստացված տեղեկատվությունը: Եթե զանգվածային հարցումները ներկայացնում են հասարակության ընդհանուր ակնկալիքները, ապա պետական կառավարման ոլորտի հարցումները ներկայացնում են վարչական էլիտայի և անձնակազմի ընկալումները տվյալ վարչական փոփոխության վերաբերյալ և դրանց պատրաստվածությունը ընդունել համապատասխան բարեփոխումները: Սա թույլ է տալիս քաղաքական գործիչներին, ինչպես նաև վարչական ոլորտի պաշտոնյաներին հստակ որոշել համապատասխան քաղաքականության գերակա խնդիրները և մշակել բարեփոխումների հայեցակարգերը, այդ թվում և կիրառման ռազմավարությունները:

Վարչական էլիտայի և աշխատակիցների հարցումները կարող են օգտագործվել բարեփոխումների իրականացման ընթացքում: Այս դեպքում շահագրգիռ կողմերից ստացվում է տեղեկատվություն այն մասին, թե որքանով են իրենք պատրաստ ընդունել այդ բարեփոխումները: Հարցումների վերահսկողական ֆունկցիան նպաստում է ուսոցողական գործընթացին, ինչը հիմք է ստեղծում արդեն իսկ իրականացվող բարեփոխումներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար: Դրանք նպաստում են վարչական անձնակազմի և աշխատակիցների

գիտելիքների, փորձի և կարողությունների զարգացմանը, ինչպես նաև վարչական անձնակազմի և աշխատակիցների օժանդակությամբ բարեփոխումների գործընթացին, միանգամ ևս շեշտելով, որ հարցումը ոչ թե վերահսկման այլ ուսուցողական գործընթաց է:

Հարցումների սուբյեկտիվ տվյալների և իրականացված բարեփոխումների շոշափելի արդյունքների օբյեկտիվ տվյալների վերլուծությունները թույլ են տալիս կատարել բարեփոխումների ազդեցության ընդհանուր գնահատումը: Բարեփոխումների գործընթացի վերջում կատարված հարցումները կարող են ներկայացնել այդ բարեփոխումների կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարները: Որպես հետևողական բնույթ կրող հարցումներ դրանք կարող են գնահատել վարչական բարեփոխումների կենսունակությունը:

Արևելյան Գերմանիայի պետական կառավարման ոլորտի վերակառուցումը ցույց տվեց, որ վարչական ոլորտի համապատասխան կենսակերպը վարչական համակարգի աշխատանքի ամենակարևոր նախապայմանն է (Reichard and Rober 1993):

Եթե կազմակերպության կառուցվածքը և ընթացակարգերը կարող են շատ արագ փոխվել, ապա արդեն իսկ կայացած համոզմունքների, դիրքորոշումների և ընկալումների մոդելների փոփոխումը ժամանակ է պահանջում: Օրինակ՝ Արևելյան Գերմանիայի քաղժառայողները նմանեցնում են իրենց «դասական բյուրոկրատների», իսկ Արևմտյան Գերմանիայի քաղժառայողները՝ «քաղաքական բյուրոկրատների»:

Հաշվի առնելով վերոնշյալ տարբերությունները, հարցումները ավելի են կարևորվում քաղժառայողների քաղաքական և վարչական կենսակերպի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու հարցում: Վարչական կենսակերպի համաձայն վարչական համակարգերի և ընթացակարգերի փոփոխումը շատ լուրջ քայլ է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների վարչական ոլորտի հաջող զարգացման համար:

Քանի որ բարեփոխումը դա գործընթաց է, այլ ոչ թե առանձին միջոցառում, ապա ժամանակը ավելի կարևոր է քան կարելի է պատկերացնել: Շատ դեպքերում ժամանակի գործոնը անտեսվում է քաղաքական և վարչական ոլորտների որոշումներ կայացնողների կողմից:

Հասարակական կարծիքի հարցումները հանդիսանում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների պետական կառավարման ոլորտի ժողովրդավարական բարեփոխումների գործընթացի ապահովման կարևոր գործիք: Սակայն դրանք բարելավում են որոշումների կայացման գործընթացի տեղեկատվական հիմքը, եթե իհարկե տարամադրում են ներկայացուցչական, հուսալի և հիմնավորված տվյալներ: Վարչական ոլորտի փոփոխություններին օժանդակելու համար, հարցումները պետք է օգտագործվեն ոչ թե որպես վերահսկողության, այլ որպես ուսուցողական գործիք: Սա ենթադրում է, որ քաղաքական և վարչական ոլորտների որոշումներ կայացնողները կառաջնորդվեն բաց ուսուցողական կենսակերպի սկզբունքով:

Այսպիսով հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը վարչական բարեփոխումների համատեքստում ներկայացված է ոչ հստակ կերպով: Չնայած հասարակական կարծիքի հարցումների կարևոր ֆունկցիոնալ դերին վարչական բարեփոխումների գործընթացում, որտեղ դրանք հանդես են գալիս որպես որոշումների կայացման և խելամիտ պլանավորման տեղեկատվական հիմք, շատ հաճախ դրանք օգտագործվում են նաև որպես վերահսկման և ձեռնածության գործիք: Եթե Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և OECD երկրների վարչական ոլորտի բարեփոխումների ընթացքում հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը ունի ուսուցողական նշանակություն, ապա այս դեպքում կարելի է ակնկալել դրական արդյունքներ:

Հղումներ

Aberbach, Joel, Hans-Ulrich Derlien, Renate Mayntz and Bert Rockman (1990), “American and German Federal Executives — Technocratic and Political Attitudes”, *International Social Science Journal*, 123, pp. 3-18.

Altmann, Andreas, Manfred Gantner, Heinz-Jürgen Niedenzu and Max Preglau (1991), *Sozio- und Regionalökonomische Aspekte der Universitätskliniken Innsbruck*. Ergebnisse einer Meinungsumfrage unter Besuchern, Patienten, Beschäftigten und der Tiroler Bevölkerung, Innsbruck University, Innsbruck, Germany.

Arntzen, H. L. (1995), “Het stadsmarktonderzoek: een brug tussen bedrijfsmatig werken en bestuurlijke vernieuwing?”, *Openbaar bestuur*, No. 6, pp. 26-30.

Association of Finnish Local Authorities (1995), *Total Quality Management in Municipal Service Provision*, Helsinki, Finland.

Brook, Lindsay, John Hall and Ian Preston, “Public Spending and Taxation”, in Jowell, Roger, John Curtice, Alison Park, Lindsay Brook and Katarina Thomson, eds. (1996), *British Social Attitudes — The 13th Report*, Cambridge University Press, England, pp. 185-202.

CIRES (1996), *La Realidad Social en España*, Gestingraf, Madrid, Spain.

Cusack, Thomas R. and Bernhard Wezels (1996a), *Problemreich und Konfliktgeladen: Lokale Demokratie in Deutschland fünf Jahre nach der Wiedervereinigung*, F III 96-203, Research Report of the Wissenschaftszentrum Berlin, Germany.

Cusack, Thomas R. and Bernhard Wezels (1996b), “Lokale Demokratie”, *WZB-Mitteilungen* 73 (September), pp. 39-43.

Czaja, Ron and Johnny Blair (1995), *Designing Surveys: A Guide to Decisions and Procedures*, Sage, London.

Dente, Bruno (1995), “I caratteri generali del processo di riforma”, in Dente, Bruno, et al. (eds.), *Riformare la Pubblica Amministrazione, Italia, Gran Bretagna, Spagna, Stati Uniti*, Edizioni della Fondazione Giovanni Agnelli, Torino, pp. 3-28.

Diez-Nicolas, Juan (1997), *Commemoration of the 20th Anniversary of the First Democratic Elections*, National Survey Report of the ASEP (Análisis Sociológicos, Económicos y Políticos).

Edwards, Jack E., Marie D. Thomas, Paul Rosenfeld and Stephanie Booth-Kewley (1997), *How to Conduct Organisational Surveys. A Step-by-Step Guide*, Sage, London.

Fornell, Claes (1997), “A National Customer Satisfaction Barometer: the Swedish Experience”, in Holloway, Jacky, Jenny Lewis and Geoff Mallory (eds.), *Performance Measurement and Evaluation*, Sage, London, pp. 192-216.

Ginsberg, Benjamin (1986), *The Captive Public. How Mass Opinion Promotes State Power*, Basic Books, New York, United States of America.

Hardwick, Walter, Raymon Torchinsky, and Arthur Fallick (1991), “Shaping a Livable Vancouver Region: Public Opinion Surveys”, *B.C. Geographical Series*, No. 48, University of British Columbia, Vancouver, Canada.

Jabes, Jak and D. Zussman (1988), “Motivation, Rewards and Satisfaction in the Canadian Federal Public Service”, *Canadian Public Administration* Vol. 31, No. 2, pp. 204-225.

Jowell, Roger, John Curtice, Alison Park, Lindsay Brook and Katarina Thomson, eds. (1996), *British Social Attitudes — The 13th Report*, Cambridge University Press, Cambridge, United Kingdom.

Klages, Helmut, Thomas Gensicke, and Oliver Haubner (1994), "Die Mitarbeiterbefragung. Ein kraftvolles Instrument der Verwaltungsmodernisierung", *Verwaltung — Organisation — Personalwesen (VOP)*, Vol. 16, No. 5, pp. 322-327.

Klages, Helmut (1997), "Funktionswert von Mitarbeiterbefragungen. Qualitätsmerkmale und Erfolgsfaktoren bei Mitarbeiterbefragungen", *Verwaltung — Organisation — Personalwesen (VOP)*, Vol. 19, No. 1, pp. 34-38.

Klotz, Erhard and Siegfried Mauch (1994-1995), "Personalmanagement in Baden-Württemberg. Die Implementierung einer Konzeption in der Landesverwaltung (Teil 1-7)", *Verwaltung — Organisation — Personalwesen (VOP)*, pp. 16-17.

Kohr, Heinz-Ulrich (1989), "Public Opinion Surveys on Security Policy and the Armed Forces: Policy Polling or Scientific Research?", *Sozialwissenschaftliches Arbeitspapier Nr. 25*, German Armed Forces Institute for Social Research, Munich, Germany.

Lipsky, Michael (1980), *Street-Level Bureaucracy: Dilemmas of the Individual in Public Services*, Russel Sage Foundation, New York, United States of America.

Löffler, Elke (1997), "Communicating in a Supranational Organization: The Case of the European Union", in Garnett, James L. and Alexander Kouzmin (eds.), *Handbook of Administrative Communication*, Marcel Dekker, New York, United States of America, pp. 517-538.

Ministero della Sanit  (1997), *Rapporto Nazionale di Valutazione sul Programma di Attuazione della Carta dei Servizi nel Servizio Sanitario Nazionale*, Rome, Italy.

Mishler, William and Richard Rose (1995), "Trust, Distrust and Skepticism About Institutions of Civil Society Studies", *Public Policy*, No. 252, University of Strathclyde, Glasgow, United Kingdom.

Mustonen, Maili (1996), "The ISO 9000 Project: Trial of the Applicability of an ISO 9000 Quality Management System in Five Municipal Service Functions in Finland", in Hill, Hermann, Helmut Klages, and Elke Löffler (eds.), *Quality, Innovation and Measurement in the Public Sector*, Frankfurt, Germany, pp. 65-76.

Poister, T. H. and G. T. Henry (1994), "Citizen Ratings of Public and Private Service Quality: A Comparative Perspective", *Public Administration Review*, Vol. 54, No. 2, March-April, pp. 155-160.

Reichard, Christoph and Manfred R ber (1993), "Was kommt nach der Einheit? Die P ffentliche Verwaltung in der ehemaligen DDR zwischen Reform und Blaupause", in Glaessner, G. J. (ed.), *Der lange Weg zur Einheit*, Sigma, Berlin, Germany, pp. 215-245.

R ber, Manfred and Eckhard Schr ter (1991), "Verwaltungs f hrungskr fte aus Ost und West — Ein Vergleich ihrer Rollenverst ndnisse und Westhaltungen", in Ellwein, Thomas et al. (ed.), *Jahrbuch zur Staats- und Verwaltungswissenschaft*, Nomos, Baden-Baden, Germany, pp. 209-226

Rose, Richard (1997), "Trust and Distrust in an Hour-Glass Society", in Jabes, Jak, *Developing Organizations and Changing Attitudes: Public Administration in Central and Eastern Europe*, The Fourth Annual Conference Held in Tirana, Albania, 28-30 March 1996, The Network of Institutes and Schools of Public Administration in Central and Eastern Europe, Bratislava, Slovakia, pp. 19 -32.

Smith, Peter (1997), "Outcome-related Performance Indicators and Organizational Control in the Public Sector", in Holloway, Jacky, Jenny Lewis and Geoff Mallory (eds.), *Performance Measurement and Evaluation*, Sage, London, pp. 192-216.

Smith, Tom W. (1995), "Public Support for Public Spending", 1973-1994, *The Public Perspective* Vol. 6, No. 3, pp. 1-5.

- Sundquist, Salme (1997), "Interim Report On The ISO 9000 Pilot Projects", in Hill, H., H. Klages And E. Löffler (eds.), *Assessing and Evaluating Public Management Reforms*.
- Tellier, P. M. (1992), *Public Service 2000: A Report on Progress*, Minister of Supply and Services, Ottawa, Canada.
- Töpfer, Armin and Uwe Funke (1985), "Mitarbeiterbefragung als Analyseinstrument der Organisationsentwicklung", in Töpfer, A. and Ernst Zander (eds.), *Mitarbeiterbefragungen*. Ein Handbuch, Frankfurt, Germany, pp. 9-42.
- Trosa, S. (1992), "La modernisation est-elle rnuable?", *Politiques et Management Public* Vol. 10, No. 12, pp. 65-84.
- Walz, D. (1996), "Vertrauen in Politische Institutionen im Vereinten Deutschland", *Deutschland Archiv* Vol. 29, No. 2, pp. 240-248.
- Zussman, D. and Jak Jabes (1989), *The Vertical Solitude: Managing in the Public Sector*; Institute for Research on Public Policy, Halifax, Nova Scotia, Canada.

**Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը Չեխիայի վարչական
բարեփոխումների գործընթացում
Մայքլ Իլներ***

1. Ներածություն

Այս աշխատությունը ուսումնասիրում է հասարակական կարծիքի հարցումները Չեխիայի պետական կառավարման ոլորտում, մասնավորապես վարչական բարեփոխումների համատեքստում: Բարեփոխումների հիմնական նպատակները՝ ժողովրդավարությունը և պետական կառավարման արդյունավետության բարձրացումը, պահանջում են ավելի ամուր կապի հաստատում վարչական հաստատությունների և հասարակության միջև: Հարցումները այն հզոր գործիքն են, որը կարող է ստեղծել այդպիսի կապ: Սակայն Չեխիայի պետական կառավարման ոլորտում դրանք չեն արժանացել ավելի լայն կիրառման:

Այս աշխատությունը ներկայացնում է հարցումների ներուժը, դրանց նշանակությունը վարչական բարեփոխումների և պետական քաղաքականության զարգացման գործընթացներում: Աշխատությունը բաժանված է 10 մասի: Աշխատությունում ներկայացված են Չեխիայի վարչական բարեփոխումների կրճատ նկարագրությունը, հարցումների օգտագործման համառոտ պատմությունը և բարեփոխումների գործընթացի տարբեր փուլերում օգտագործվող հարցումների նկարագրությունը: Աշխատության վերջին երկու մասերը լուսաբանում են հարցումներից ստացված տեղեկատվության տեղադրման խնդիրը և դիտողությունները: Հավելվածում տրված են հարցումներ իրականացնող ինստիտուտների հասցեները:

1997թ-ի փետրվարին հեղինակի կողմից կատարվել է այսպես կոչված «հարցումների մասին հարցում» ուսումնասիրությունը: Պետական կառավարման ոլորտի ուսումնասիրություններով զբաղվող մի շարք գործակալություններին հարցաթերթիկ էր ուղարկվել, 1990թ-ից կատարված հարցումների նկարագրությունը տալու խնդրանքով: Արդյունքում հավաքվեց տեղեկատվություն 1990-1997թթ-ին կատարված 63 միանվագ և 9 շարունակական հարցումների մասին:

2. Վարչական բարեփոխում

Չեխիայի պետական կառավարման ոլորտի արդիականացման խնդիրը, ինչպես նախկին կոմունիստական երկրներում, անցնում է զուտ հիմնական իրավական ղեկավարման կանոններին հետևելու անհրաժեշտությունը: Առաջ է քաշվում հասարակության համար պետական կառավարման ոլորտի դերի, քաղաքականության, տնտեսության և քաղաքացիական համայնքի հետ այդ ոլորտի հարաբերությունների վերաձևակերպման խնդիրը:

* Մայքլ Իլներ, Տնօրեն, Սոցիոլոգիայի Ինստիտուտ ,Չեխիայի Գիտությունների ակադեմիա, Պրահա

Պետական կառավարման ոլորտի բարեփոխումները Չեխիայի հասարակության համընդհանուր փոխակերպման գործընթացի մի մասն են կազմում, որը սկսվել էր դեռ 1989թ-ից: Փոփոխությունների ենթարկվել էին քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքի հիմնական սկզբունքները: Հաշվի առնելով փոփոխությունների բարդ կառուցվածքը, շատ հաճախ դժվար է տալ վարչական, քաղաքական և տնտեսական բարեփոխումների հստակ բաժանումը:

Որպես համընդհանուր փոխակերպման գործընթաց, պետական կառավարման ոլորտի բարեփոխումները դա մի շարունակական գործընթաց է, որը չի կարող համարվել ավարտված: Այս գործընթացի սկզբնական փուլերի նպատակն է վերակառուցել քաղաքական և տնտեսական համակարգերը, այդ թվում և համապատասխան հաստատությունները: Այս ոլորտում տեղի ունեցած առաջընթացը կանգ է առել 1993թ-ին նախկին Չեխոսլովակիայի երկպառակտման և Չեխիայի հանրապետության ստեղծման պատճառով: Արդյունքում ստացված վարչական բարեփոխումների հետաձգումը ունեցավ իր բացասական ազդեցությունը փոխակերպման գործընթացի վրա:

Պետական կառավարման ոլորտում կատարված ամենակարևոր բարեփոխումները հետևյալն էին՝

- 1993թ-ի հունվարի 1-ին ընդունվեց Չեխիայի Հանրապետության նոր Սահմանադրությունը, որը սահմանում է պետական հաստատությունների նոր կառուցվածքը և հիմնական լիազորությունները,
- նոր Սահմանադրությանը համաձայն հիմնադրվեցին Սահմանադրական դատարանը, Աուդիտի գերագույն խորհուրդը և Գերագույն վարչական դատարանը (հիմնադրման գործընթացը դեռ ավարտված չէ)
- փոխվեցին նախարարությունների և այլ կենտրոնական վարչական կառավարման մարմինների (հանձնաժողովներ և խորհուրդներ) կառուցվածքները և լիազորությունները, կրճատվեց նախարարությունների թիվը և ձևափոխվեցին դրանց լիազորությունները, համապատասխանեցնելով դրանք ժողովրդավարական քաղաքական համակարգի և շուկայական տնտեսության սկզբունքներին; լուծարվեցին պլանավորման և հրահանգներ տալու լիազորությունները, ավելի ուժեղացվեցին վերահսկման լիազորությունները; հիմնադրվեցին մի շարք նոր մարմիններ ի հայտ եկած նոր խնդիրները լուծելու համար (սեփականաշնորհում, տնտեսական մրցակցություն, փախստականներ, թմրանյութերի չարաշահում); միառժամանակ փոխվեց նախարարությունների և այլ կենտրոնական մարմինների ներքին կառուցվածքը,
- փոխվեցին նաև պետական կառավարման կադրային քաղաքականությունը և պարզևատրման համակարգը (կադրերի ընտրություն և մասնագիտական առաջխաղացում, աշխատավարձերի նոր համակարգ), մասնագիտական առաջխաղացման համար ավելի մեծ ուշադրություն էր դարձվում աշխատակցի որակավորմանը, փորձին և կատարված աշխատանքներին, պետական ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներին չէր թույլատրվում

զբաղեցնել բարձրաստիճան քաղաքական պաշտոններ և համագործակցել գաղտնի ծառայությունների հետ,

- կառավարությունը վերակառուցվեց, կառավարումը ապակենտրոնացվեց, Կոմունիստական վարչակարգի նախկին տարածաշրջանային կառավարությունները լուծարվեցին և փոխարինվեցին տեղական ինքնակառավարման մարմինների նոր համակարգով, շրջանային կառավարման մարմինները վերակառուցվեցին և դրանց լիազորությունները ձևափոխվեցին, ինքնակառավարման սկուզբունքը ներկայացվեց տեղական մակարդակով, ինքնակառավարման լիազորությունները ավելի ուժեղացվեցին և առանձնացվեցին պետական կառավարման համակարգի շրջանակներում, տեղական ինքնակառավարման մարմինների թիվը զգալի ավելացվեց, կենտրոնական կառավարության նոր մարմիններ ստեղծվեցին և նոր տարածաշրջաններ հռչակվեցին,
- պետական կառավարման բոլոր ոլորտներում կիրառվող քաղաքականությունների լուրջ փոփոխություններ կատարվեցին, առավել լուրջ փոփոխություններ կատարվեցին Ֆինանսական ոլորտում՝ ներկայացվեց նոր բյուջետային համակարգ և նոր հարկաբյուջետային քաղաքականություն, սոցիալական ոլորտում՝ գործազուրկներին օժանդակելու նոր համակարգ և աշխատուժի շուկային վերաբերող նոր ծառայություններ, սոցիալական ապահովագրության նպաստների նոր համակարգ, առողջապահության ոլորտում՝ առողջապահական ծառայություններ մատուցող հաստատությունների սեփականաշնորհում և նոր առողջապահական ապահովագրման համակարգ, կրթության ոլորտում՝ դպրոցների ապաքաղաքականացում, ուսուցողական նոր ծրագրեր, նոր համալսարաններ, մասնավոր դպրոցներ; կատարվեց դատական համակարգի կառուցվածքի փոփոխում, դատավորների կարգավիճակը փոխվեց և դատավարության համակարգի վերակառուցում:

Սակայն պետական կառավարման ոլորտի որոշ հիմնական խնդիրներ դեռ ամբողջովին լուծված չեն՝

- Գերագույն վարչական դատարանի վերջնական հիմնադրումը,
- վարչական ղեկավարության աշխատանքի կայունությունը, շարունակականությունը և քաղաքական չեզոքությունը ապահովող Քաղծառայության օրենսգրքի կիրառումը,
- նոր տարածաշրջանների հռչակում առանց այդ տարածաշրջանները ղեկավարող կառավարությունների կառուցվածքի և լիազորությունների որոշման,
- ֆինանսական շուկաների և բանկային համակարգի ավելի արդյունավետ վերահսկողություն,
- որոշ քաղաքականությունների(առողջապահական, բնակարանային շինարարության, տարածաշրջանային և կրթական) մշակում կամ վերամշակում
- ինստիտուցիոնալ, իրավական և վարչական նախապայմանների ստեղծում Չեխիայի Եվրամիությանը անդամակցելու համար

Այս ցանկը վերոնշյալ կետերով չի սահմանափակվում:

3. Հարցումների պատմությունը

Չեխիայում հարցումներ սկսել են անցկացնել 1930թ-ից: 1945-1948թթ-ին հարցումները անցկացվում էին պետության կողմից հովանավորվող Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտի կողմից: 1948թ-ից Կոմունիստական հեղաշրջումից հետո, սոցիալական հետազոտությունները արգելվեցին, իսկ համապատասխան ինստիտուտները փակվեցին: Վաթուռականների երկրորդ կեսին հարցումները նորից մեծ ուշադրության արժանացան: Հարցման մեթոդաբանության վերաբերյալ դասընթացները դարձան համալսարաններում դասավանդվող հասարակական գիտությունների ուսումնական ծրագրերի անբաժանելի մասը: Դասագրքերում տպագրվում էին արևմտյան, լեհական և չեխ հեղինակների աշխատանքները: Կրկին բացված Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտը գործեց 1967-ից մինչև 1970-ը, որից հետո նորից փակվեց:

Ուրիշ շատ ինստիտուտներ նույնպես ներկայացնում էին հարցումներից ստացված տեղեկատվություն, որոնց թվում էին նախարարություններին կից տնտեսական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտները, ուսումնական հաստատությունները, խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների կադրերի վարչությունները և այլն: 1969թ-ին Սովետական կարգերի ներխուժումից հետո սոցիալական հետազոտությունները կրկին մոռացության մատնվեցին, սակայն հարցումներ անցկացնելու կարողությունները որոշ չափով պահպանվեցին:

Կոմունիստական վարչակարգը հստակ գիտակցում էր հարցումներից ստացված տվյալների օգտակարությունը իրենց կողմից իրականացվող քաղաքականությունների համար, սակայն ցանկանում էր խստորեն վերահսկել տվյալների հավաքագրումը, օգտագործումը և տարածումը: Հասարակական կարծիքի հետազոտությունների նոր ինստիտուտը հիմնադրվեց որպես Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հետախուզական մարմին, որը ձևականորեն գտնվում էր Վիճակագրական գրասենյակի կազմում: Այս ինստիտուտի հետազոտությունները չէին հրապարակվում, իսկ ստացված տվյալները չէին տրամադրվում այլ հետազոտողներին: Դրանք հասանելի էին միայն կուսակցության բարձրաստիճան ղեկավարներին:

Այս վերահսկվող կենտրոնական ինստիտուտից բացի, այլ ավելի քիչ կասկած առաջացնող մարմիններ նույնպես հարցումներ էին անցկացնում, ընդգրկելով միայն բնակչության որոշակի խմբեր կամ կատեգորիաներ և ուսումնասիրելով միայն հատուկ խնդիրներ: Այս մարմինները նույնպես վերահսկվում էին, բայց ավելի թույլ: 1970-1980թթ-ին հարցումներով զբաղվող տիպիկ հաստատություններն էին՝ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, շինարարության և ճարտարապետության, տնտեսական զարգացման նախարարությունների

հետազոտական ինստիտուտները և ուսումնական հաստատությունները (համալսարաններ և գիտությունների ակադեմիա:

Խոշոր ձեռնարկությունների կողմից անցկացվել են աշխատողների գոհունակությունը և իրենց կենսապայմանները գնահատող հարցումներ:

Տեղական կառավարման մարմինների կողմից հարցումներ են անցկացվել բնակարանային պայմանների և դրանց կատարելագործման նախասիրությունների, բնակիչների գոհունակության վերաբերյալ: Նման հարցումների մեծ մասն ուղված էին քաղաքականության խնդիրների լուծմանը և իրականացվում էին սոցիալական զարգացման պլանավորման և նախագծման, սոցիալական քաղաքականության, վարչական և կառավարման ընթացակարգերի արդիականացման համար: Իրականում հարցումներից ստացված տեղեկատվությունը շատ հազվադեպ էր օգտագործվում որոշումների կայացման համար:

Ստացված արդյունքների չնչին մասն էր տպագրվում: Սովորաբար արդյունքները ներկայացվում էին ներքին օգտագործման համար և հասանելի էին շատ քիչ թվով մարդկանց:

1989թ-ից սկսվեց հարցումների պատմության մի այլ փուլ: Քաղաքական և գաղափարախոսական վերահսկողությունը և հարցումներին վերաբերող սահմանափակումները վերացան: Հարցումների վերաբերյալ պահանջարկը կտրուկ աճեց, քանի որ զգացվում էր նոր տիպի տեղեկատվության կարիքը: Նոր տիպի տեղեկատվությանն էին վերաբերում մարդկանց քաղաքական նախասիրությունները և վարքագիծը, սպառողական ապրանքների պահանջարկի մասին տվյալները:

Պետության կողմից հովանավորվող Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտը դարձավ երկրի հասարակական կարծիքի հարցումներ իրականացնող ամենաազդեցիկ կազմակերպությունը: Այն հիմնովին վերակառուցվեց և ազատվեց ցանկացած արտաքին քաղաքական կամ գաղափարախոսական միջամտություններից և ֆինանսավորվում էր Չեխիայի Վիճակագրական գրասենյակի կողմից, սակայն ազատ էր իր հետազոտական գործունեության մեջ:

Հիմնադրվեցին մեծ քանակությամբ հարցումներ իրականացնող առևտրային գործակալություններ, որոնք ակտիվ ներգրավված էին շուկայի ուսումնասիրությունների մեջ: Ներկայիս քսանից եռեսուն տարբեր մեծության և տարբեր մասնագիտացումով կազմակերպություններ են գործում Չեխիայում: Դրանց թվում են նաև օտարերկրյա կամ միջազգային կազմակերպությունների մասնաճյուղերը:

Գործակալությունների կեսից ավելին անցկացնում են քաղաքականության ուսումնասիրման հարցումներ պետական կառավարման մարմինների պատվերով: Պետական կառավարման ոլորտին վերաբերող հարցումների մեծ մասը ֆինանսավորվում է տեղական կառավարման մարմինների կողմից և դրանց արդյունքները օգտագործվում են տեղական զարգացման կառավարման մեջ: Տեղական հարցումները իրականացվում են փոքր խորհրդատվական

ընկերությունների կողմից, որոնք չեն կարող թույլ տալ իրենց հավաքագրել տվյալներ, օգտագործելով մեծ թվով հարցվողներ ընդգրկող ընտրանք:

Ընդհանուր առմամբ տասը առևտրային կազմակերպություններ առավել հաճախ ընդգրկված են քաղաքական և քաղաքականությանը ուղղված հետազոտությունների իրականացման գործընթացին և ընդունակ են տրամադրելու պետական կառավարման ոլորտին հուսալի և որակյալ տեղեկատվություն: Դրանցից ամենաազդեցիկներից են՝ STEM-ը, FACTUM-ը, UNIVERSITAS-ը և AMASIA-ն (նշված ընկերությունների անունները և հասցեները տրված են Հավելվածում):

Եթե 1989թ-ից սկսած հարցումներով զբաղվող մասնավոր կազմակերպությունների թիվը ինտենսիվ աճում էր, ապա պետական սոցիալ-տնտեսական հետազոտություններով զբաղվող ինստիտուտները իրենց սոցիալական հետազոտությունների գծով ստորաբաժանումների հետ միասին լուծարվում էին: Լուծարվում էին նաև խոշոր արդյունաբերական ընկերությունների սոցիալական հարցումներով զբաղվող ստորաբաժանումները:

Արդյունքում հասարակական կարծիքի հարցումների մեծ մասը իրականացվում է առևտրային կազմակերպությունների կողմից, տեղական մասնավոր և պետական ոլորտների կազմակերպությունների, ինչպես նաև արտասահմանյան կազմակերպությունների պատվերով՝ Եվրամիության Կենտրոնական և Արևմտյան Եվրոբարոմետր, ԱՄՆ-ի Տեղեկատվության գործակալություն, այլ արտասահմանյան արևտրային կազմակերպություններ և համալսարաններ: Տեղական կրթական հաստատությունները՝ համալսարանները, գիտությունների ակադեմիայի ինստիտուտները նույնպես կազմակերպում կամ իրականացնում են քաղաքականություն ուսումնասիրող հասարակական կարծիքի հարցումներ, իհարկե ավելի քիչ հաճախականությամբ քան իրենց առևտրային գործընկերները:

Դժվար է նշել թե տարեկան կտրվածքով քանի հարցում է անցկացվում, քանի որ մեծ մասամբ դրանք չեն հրապարակվում և դիտվում են որպես գաղտնի տեղեկատվություն: Կարելի է ուղղակի ենթադրել, որ տարեկան Չեխիայում անկացվում է 100-ից ավել հարցում: Դրանց թվում են շուկայի ուսումնասիրությունները, կարծիքի հարցումները, մամուլի վերաբերյալ ուսումնասիրությունները, քաղաքական և կրթական, ինչպես նաև տեղական և տարածաշրջանային նշանակություն ունեցող ուսումնասիրություններ:

Պետական կառավարման ոլորտի մարմինները հարցումներին որպես մոնիտորինգի գործիքի վերաբերվում են թերահավատորեն: Սովորաբար տնտեսական վիճակագրական տեղեկատվությունը և վերլուծություններն են ընդունվում որպես տվյալների վստահելի աղբյուր, իսկ դիրքորոշումներին վերաբերող տեղեկատվությունը համարվում է ոչ ստույգ: Շատ հաճախ հարցումների արդյունքները համադրվում են արդեն իսկ ձևավորված տեսակետների հետ: Այնուամենայնիվ հարցումներից ստացված տվյալները հաճախակի մեկնաբանվում են իշխանությունների կողմից:

Սոցիալական հետազոտության մեթոդները՝ հարցման մեթոդները և վիճակագրությունը ընդգրկված են համալսարանների սոցիոլոգիայի ուսուցման ծրագրի մեջ: Չեխիայում առնվազն տասը համալսարանական ֆակուլտետներ առաջարկում են տարբեր որակի սոցիոլոգիական ուսուցողական ծրագրեր:

4. Պետական կառավարման հաստատությունների, կառավարության և պետական կառավարման ոլորտի գործողության և դրանց ճանաչման մոնիտորինգ

Շատ հաճախ իրականացվում են պետական հաստատությունների գործունեության և դրանց ճանաչման մոնիտորինգի ուսումնասիրություններ: Կատարված մոտ 72 հարցումների կեսը վերաբերում են վերոնշյալ ուսումնասիրություններին: Որոշ խոշոր գործակալությունները՝ Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտը, Էմպիրիկ հետազոտությունների կենտրոնը, STEM-ը, FACTUM-ը, պարբերաբար հասարակական կարծիքի հարցումներ են անցկացնում պետական հաստատությունների գործունեության և դրանց ճանաչման մոնիտորինգի վերաբերյալ:

Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտը իրականացնում է հասարակության վերաբերմունքը սահմանադրական մարմինների, դատարանների, ոստիկանության, բանակի, առևտրային ասոցիացիաների և գաղտնի ծառայության վերաբերյալ ուսումնասիրող հարցումներ՝ ամսական և կիսամյակային կտրվածքով: Այսպես կոչված «The Trends» հարցումները պարբերաբար անցկացվում են STEM-ի կողմից: Այս երկու գործակալությունների կողմից տրամադրված տեղեկատվությունը տպագրվում է մամուլում: 1995-1996թթ. FACTUM-ի կողմից 5 անգամ անցկացվել են հասարակական կարծիքի հարցումները պառլամենտի, կառավարության, նախագահի գործունեության վերաբերյալ:

Հարցումներին մասնակցում էին հիմնական սահմանադրական մարմինները՝ խորհրդարանը, նախագահը, կենտրոնական կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, դատարանները, բանակը, ոստիկանությունը, բանկերը, առևտրային ասոցիացիաները, եկեղեցիները, քաղաքական կուսակցությունները և առանձին քաղաքական գործիչները:

Պարբերաբար հրապարակվում էին քաղաքական կուսակցությունների և քաղաքական գործիչների վարկանիշները: Այս տիպի հետազոտությունները սովորաբար հովանավորվում են մամուլի, հենց անմիջապես հարցվող կազմակերպությունների, կրթական հաստատությունների և մասնավոր կապիտալի մասնակցությամբ արտասահմանյան կազմակերպությունների կողմից: Այս հետազոտությունների մոտ կեսը իրականացվում է ինքնաֆինանսավորման սկզբունքով:

Հասարակությունը, մամուլը և քաղաքական գործիչները ուշադիր հետևում են հասարակական կարծիքի հարցումների արդյունքներին:

Խորհրդարանի, կառավարության և նախագահի գործունեության վերաբերյալ հասարակության դիրքորոշման շարունակական հարցումը

Խորհրդարանի, կառավարության և նախագահի գործունեության վերաբերյալ հասարակության դիրքորոշումները պարզելու նպատակով ամեն ամիս Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտի կողմից բնակչությանն են ուղվում մի խումբ հարցեր: Հարցվողները՝ 15 տարեկանից բարձր տարիք ունեցող Չեխիայի քաղաքացիներն են: Քվոտաները սահմանվում են ըստ սեռի, տարիքի, կրթության, բնակչության վայրի և մեծության: Ընտրանքը կազմված էր 1100 քաղաքացիներից: Տվյալները հավաքագրվում էին հարցազրույցների միջոցով և պահվում էին Ինստիտուտի ներքին տվյալների արխիվում:

Վստահության ամենաբարձր վարկանիշը ուներ նախագահը, իսկ համեմատաբար ավելի ցածր վարկանիշ ուներ կառավարությունը: Պետության հիմնական հաստատությունների ցանկում վստահության ամենացածր վարկանիշը տրվել էր սենատին և պատգամավորների պալատին: Վերջին ամիսների ընթացքում գրանցվել էր վստահության վարկանիշի անկում: Գրանցվել էին նաև որոշ դրական միտումներ նախագահի վստահության վարկանիշի հետ կապված:

	1996			1997		
վստահություն (%)	4	7	10	1	4	7
Նախագահ	76	79	78	87	66	65
Կառավարություն	48	48	45	50	38	26
Պառլամենտ	24	41	32	34	25	18
Սենատ	-	-	-	21	23	18

Աղբյուրը՝ Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտ, Շարունակական հարցում 1, տեղեկատվություն No 97-07

Հարցումների մի այլ խումբ ուսումնասիրում էր առանձին վարչական և կառավարական հաստատությունների վերաբերյալ ձևավորված դիրքորոշումները: Դրանց թվում են հատկապես առողջապահության, կրթության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, բանակը (տես աղյուսակ 2-ը): Հարցումների միջոցով ուսումնասիրվել է նաև այդ

նախարարությունների կողմից մշակված առողջապահության, կրթության, սոցիալական, մասնագիտական ուսուցման և պաշտպանության ոլորտների քաղաքականությունները:

Ստացված տվյալները հաստատում են բանակի սպաների ցածր հեղինակությունը: Տարբեր մասնագիտությունների հեղինակությունը ուսումնասիրող 1993, 1995, 1996թթ-ի երեք շարունակական հարցումները ցույց տվեցին, որ քսան տարբեր մասնագիտությունների ցանկում զինվորի մասնագիտությունը նշված է խանութպանի, հեռուստացույցներ վերանորոգող վարպետի և մարզիկի մասնագիտություններից հետո, և զիջում է միայն հավաքարարի մասնագիտությանը: (Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտ, տեղեկատվություն No 97-07):

Դիրքորոշումները բանակի վերաբերյալ

1991թ-ի հունիսին Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտի կողմից անցկացվեց Չեխոսլովակիայի բանակի իմիջը ուսումնասիրող մի հարցում: Հարցումը անցկացվում էր Սոցիալական հետազոտությունների ռազմական ինստիտուտի պատվերով: Հարցման ընտրանքը կազմված էր 1954 մարդուց: Հարցմանը մասնակցել էին 15 տարեկանից բարձր քաղաքացիներ: Տվյալների հավաքագրումը կատարվել էր հարցազրույցների միջոցով (Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտ, 1991թ.):

Հարցումը բացահայտեց բանակի և բանակի սպաների ցածր հեղինակությունը: Ստացված տվյալները պետք է օգտագործվեին բանակի հասարակայնության հետ կապեր հաստատելու քաղաքականության մշակման համար: Այս հարցումից ստացված տվյալները հաստատվեցին մի շարք այլ հարցումների կողմից: 1990-1997թթ-ին Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտի կողմից կատարված տվյալների վերլուծությունը հաստատեցին այն փաստը, որ շատ քիչ առաջընթաց է արձանագրվել բանակի իմիջը բարձրացնելու հարցում:

տարի/ամիս	1990/2	1992/3	1994/2	1996/2	1997/2
բանակին վստահողների %	39	59	57	36	35

Աղբյուրը՝ Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտ, տեղեկատվություն No 97-02

5.Քաղաքականության առաջնահերթ խնդիրները

Քաղաքականության հետ կապված նախասիրությունները ուսումնասիրող հարցումները պարբերաբար անցկացվող հարցումներ են: 72 հարցումներից 5-ը ուսումնասիրել են քաղաքականության հետ կապված առաջնահերթ խնդիրները, որոնցից 4-ը եղել են շարունակական: Յուրաքանչյուր տարի Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտի և STEM-ի կողմից անցկացվող հարցումների արդյունքում հավաքագրվում են համեմատական տվյալներ քաղաքականությունների հետ կապված առաջնահերթ խնդիրների վերաբերյալ: Սոցիոլոգիայի ինստիտուտի պատվերով STEM-ը՝ կիսամյակը մեկ, անցկացնում է բնակչության տնտեսական սպասելիքները և դիրքորոշումները ուսումնասիրող հարցում:

Արդյունքները ցույց են տալիս հասարակության քննադատողական վերաբերմունքը մասնավոր ձեռնարկությունների և արտասահմանյան ընկերությունների ազատության վերաբերյալ: Օրինակ՝ 1990-ին հարցվողների 87%-ը նշեցին, որ մասնավոր ձեռնարկատերերին պետք է տրվի ավելի շատ ազատություն, իսկ 1996-ին հարցվողների միայն 54%-ը տվեցին նման պատասխան:

FACTUM-ի կողմից ացկացված հարցման ընթացքում քաղաքացիներին տրվեցին պետության, քաղաքական գործիչների, պատգամավորների, նախարարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և ասոցիացիաների նկատմամբ ունեցած իրենց նախասիրությունների մասին հարցեր: Ամեն տարի մեծ թվով հարցումներ են անցկացվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տարբեր իրականացվող քաղաքականությունների առաջնահերթ խնդիրների վերաբերյալ: Ստացված տվյալները օգտագործվում են տեղական զարգացման ծրագրերի մշակման համար:

Սոցիոլոգիայի ինստիտուտի կողմից կատարվել են տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների, տեղական խորհրդակազմների, քաղաքապետերի և քաղաքացիների նախասիրությունները իրականացվող քաղաքականությունների վերաբերյալ ուսումնասիրող հարցումներ: Քաղաքացիների և պետական ոլորտի ներկայացուցիչների միջև արձանագրվել է նույն դիրքորոշումը քաղաքականության առանձին խնդիրների գնահատման կարևորության վերաբերյալ(տես Աղյուսակներ 3 և 9):

Ստացված տվյալները կարող են օգտագործվել քաղաքական կուսակցությունների և առանձին քաղաքական գործիչների կողմից որպես հիմնարար տեղեկատվություն հասարակության մեջ իշխող տրամադրությունների վերաբերյալ: Ցույց տալով զարգացող լարվածությունը կամ դժգոհությունները, այս տվյալները ապահովում են հետադարձ կապը պետական ոլորտի և քաղաքացիների միջև:

Հասարակության կողմից քաղաքականությանը վերաբերյալ

STEM-ի կողմից անցկացվել է կարևոր սոցիալական խնդիրների վերաբերյալ հասարակության նախասիրությունները ուսումնասիրող շարունակական հարցում: Սկսած 1992թ-ից քաղաքականության առաջնահերթ խնդիրներին վերաբերող ստանդարտ հարցերի մի շարք տրվում է բնակչությանը: Հարցվողները 18 տարեկանից բարձր տարիք ունեցող Չեխիայի քաղաքացիներն են: Ընտրանքը ներառում է 1200-1500 մարդ: Մինչ 1993թ-ը կիրառվել է պատահական ընտրանքի սկզբունքը և օգտագործվել է բնակչության ռեգիստրը: Քվտային ընտրանքը, հիմնված սեռի, տարիքի, կրթության, բնակության վայրի (տարածաշրջանի) բնակչության մեծության վրա օգտագործվել է ավելի ուշ: Տվյալները հավաքագրվել են երես-առ-երես հարցազրույցների միջոցով և պահվել STEM-ի արխիվում (Փորձարարական հետազոտությունների կենտրոն, շարունակական հարցում 3): Նման շարունակական հարցում անցկացվել է նաև Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտի կողմից:

Քննարկված տասը առաջնահերթ խնդիրների ցանկում հանցագործության դեմ պայքարը նշվել է որպես ամենակարևորը, որին հաջորդում էին առողջապահական ծառայությունների բարեփոխումները: Հաջորդը սոցիալական ապահովագրության խնդիրն էր, իսկ տնտեսական խնդիրները՝ տնտեսական բարեփոխումները, բնակչության կենսամակարդակը, բնակարանային շինարարությունը, վարձավճարների չափերը և գործազրկությունը մնացել են հետևում:

տարի/ամիս

համարվում են հրատապ խնդիրներ (%)	92/10	93/10	94/10	95/10	96/4	97/5
տնտեսական հանցագործություններ	-	70	76	73	70	83
առողջապահական ծառայություններ	-	55	46	56	54	75
կազմակերպված հանցագործություն	-	68	73	66	68	68
սոցիալական	-	48	59	60	53	55

ապահովություն

տնտեսական բարեփոխումներ	69	53	42	41	33	61
բնակչության կենսամակարդակը	54	52	54	54	49	48
բնակարանային շինարարություն և վարձավճարներ	-	32	41	43	49	50
գործազրկություն	44	40	42	37	26	32

Աղբյուրը՝ Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտ, տեղեկատվություն
No 97-10

6.Եվրամիության ինտեգրման վերաբերյալ տեսակետները

1996թ-ից սկսած, երբ արդեն պարզ էր, որ Չեխիան դիմելու է Եվրամիությանը անդամակցության համար (դիմումը տրվել է 1996-ին) Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտի կողմից պարբերաբար անցկացվում էին Չեխիայի Եվրամիությանը անդամակցելու վերաբերյալ հասարակության կարծիքի հարցումներ: Այս թեմայով հարցեր տրվում էին նաև հարցումներ իրականացնող այլ կազմակերպությունների կողմից: Սակայն ավելի շատ ուշադրություն էր հատկացվում ՆԱՏՕ-յին անդամակցելու խնդրին, ինչը կարող էր դառնալ իրականություն 3-5 տարիների ընթացքում, ավելի շուտ քան Եվրամիության անդամակցությունը (տես Աղյուսակ 4):

Բնակչության 1/3-ը նշել էր, որ բոլորովին տեղյակ չեն Չեխիայի Եվրամիությանը անդամակցելու զարգացումներին և 54%-ը նշել էր, որ շատ քիչ կամ բոլորովին չեն հետաքրքրված այս հարցով:

Հասարակության օժանդակությունը Եվրամիության անդամակցության գործընթացին

Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտը իր շարունակական հարցումների ժամանակ տալիս էր նաև հարցեր Չեխիայի Եվրամիությանը անդամակցելու վերաբերյալ: 1997թ-ի սեպտեմբերին անցկացված հարցման արդյունքում հարցվողների 58%-ը կողմ էին Չեխիայի Եվրամիությանը անդամակցելուն, իսկ 22%-ը՝ դեմ: 20%-ը այս հարցով կարծիք չեն արտահայտել: Դրական վերաբերմունքը այս հարցին հարաբերակցվում է կրթության առկայության հետ: Ժամանակի ընթացքում անդամակցությանը կողմ արտահայտվող մարդկանց քանակը աճում է անորոշ վերաբերմունք ունեցող մարդկանց հաշվին: Ընդդիմախոսների քանակը տոկոսային հարաբերությամբ մնում է անփոփոխ:

անդամակցությանը կողմ արտահայտվողների քանակը %-ով	3/1996	11/1996	1/1997	9/1997
միանշանակ այո	16	18	22	21
ավելի շուտ այո	26	33	36	37
ավելի շուտ ոչ	13	18	16	14
միանշանակ ոչ	8	8	7	8
չգիտեմ	37	23	19	20

Հարցվողների 6%-ը լավ տեղյակ էր Եվրամիության հետ վարվող բանակցությունների ընթացքից, 63%-ը մասամբ տեղյակ էր և 34%-ը բացարձակ տեղյակ չէր: 46%-ը հետաքրքրված էր Չեխիայի անդամակցությանը վերաբերող քննարկումներով, իսկ 54% շատ քիչ կամ բոլորովին հետաքրքրված չէր:

Աղբյուր՝ Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտ 1997թ.

Ստացված տվյալները մտահոգության տեղիք տվեցին ղեկավար մարմիններին, հատկապես 1997թ-ին կառավարության կազմի փոփոխությունից հետո: Տեղեկատվական ռազմավարություններ մշակվեցին հասարակության իրազեկությունը Եվրամիության անդամակցության տարբեր խնդիրների վերաբերյալ բարձրացնելու նպատակով: Այնուամենայնիվ, Չեխիայի ՆԱՏՕ-ին անդամակցելու քննարկումները գտնվում էին հասարակության ուշադրության կենտրոնում:

7. Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը քաղաքական ցիկլում

7.1. Քաղաքականության ընդունումը

Քաղաքականության նախաձեռնման գործընթացին ավելի հաճախ իրենց ներդրումն են ունենում սոցիալական խնդիրներին վերաբերող հարցումները:

Հարցումների մեր ցանկի առնվազն 1/3-ը կազմում են սոցիալական խնդիրներին վերաբերող հարցումները: Հարցումների թեմաներն են՝ Ռումինական փոքրամասնության վիճակը, մարդկանց կենսամակարդակը, համալսարանների ուսանողների սոցիալական վիճակը, հասարակության անվտանգության գնահատումը, հանցագործությունը և բնակչության մեջ առկա տրամադրությունները:

Սովորաբար այս տիպի հարցումները նախաձեռնվում են համապատասխան քաղաքականությունների համար պատասխանատու հաստատությունների կողմից՝ մեծ մասամբ համապատասխան նախարարությունների (աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ներքին գործերի նախարարություն) և այլ վարչական մարմինների կողմից:

Այսպիսով այս մարմինները կարող են հայտնաբերել ի հայտ եկած խնդիրները և նախաձեռնելով նոր քաղաքականություններ, փոփոխել առկա ընթացակարգերը և/կամ հաստատությունները:

Ստորև տրված են երկու օրինակներ: Առաջին հարցումը ուսումնասիրում է Ռումինական համայնքը: Կառավարության կողմից այս էթնիկ խմբի վերաբերյալ կիրառվող քաղաքականության մշակման ժամանակ օգտագործվել են վերոնշյալ հարցման արդյունքները: Երկրորդ հարցումը վերաբերում է Չեխիայի տարածքային կառուցվածքին: Այն կատարվել է խորհրդարանի պատվերով: Կային ակնկալիքներ, որ հարցման արդյունքները կնպաստեն երկրի տարածքային կառուցվածքի բարեփոխումների մշակմանը: Սակայն այդ ակնկալիքները չիրականացան (տես աղյուսակներ 5 և 6):

Ռումինական փոքրամասնության վիճակը

1997թ-ի ապրիլին Չեխիայի կառավարության Ազգերի խորհրդի պատվերով անցկացվեց մի հարցում, որի նպատակն էր ուսումնասիրել Ռումինական ազգային փոքրամասնության սոցիալական վիճակը, վարչական մարմինների վերաբերմունքը այս փոքրամասնության նկատմամբ և իրենց կարծիքը Ռումինական համայնքի նկատմամբ կիրառվող քաղաքականության վերաբերյալ: Ստացված տվյալները պետք է նպաստեին Ռումինական համայնքին վերաբերող կառավարության ծրագրերի և քաղաքականությունների զարգացմանը: Մասնակիցները՝

Ռուսիական հարցերով զբաղվող վարչական տեղական ինքնակառավարման մարմիններն էին (մոտ 112 քաղաքներում գտնվող Աշխատանքի տեղավորման գրասենյակները, տարածաշրջանային, կրթության և ոստիկանության գրասենյակները, քաղաքապետարանները) և Ռուսիական կազմակերպությունները: Մասնակիցների ընդհանուր թիվը կազմում էր 1300 հոգի: Սա առաջին հարցումն էր, որը նվիրված էր Ռուսիական համայնքի խնդիրներին: Տվյալների հավաքագրումը կատարվել էր տարածված հարցաթերթիկների լրացմամբ, որոնք պահվում էին վարչապետի աշխատակազմում:

Հարցումից ստացված տվյալները ընդգրկվել են Չեխիայի կառավարությանը ներկայացվող Ռուսիական համայնքի մասին հաշվետվությունում: Այս տվյալները նպաստել են կառավարության կողմից հովանավորվող Ռուսիական համայնքի հարցերով զբաղվող հանձնաժողովի ստեղծմանը: Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտի կողմից պարբերաբար կատարվում է Ռուսիական համայնքի վերաբերյալ հասարակության կարծիքի մոնիտորինգը: Ստացված տվյալները մտահոգիչ են՝ Չեխիայի բնակչությունը չափազանց բացասական է վերաբերվում այս էթնիկ խմբին:

	տարի/ամիս					
	91/11	92/11	93/11	94/11	95/11	96/11
դրական/բացասական վերաբերմունք ունեցող մարդկանց թիվը %-ով	4/70	4/77	3/77	5/68	5/69	5/69

Վերևում ներկայացված տվյալները, ինչպես նաև ռուսիական ընտանիքների արտագաղթը Կանադա և Մեծ Բրիտանիա և միջէթնիկ բախումները ստիպեցին կառավարությանը և քաղաքացիական կազմակերպություններին ավելի ուշադիր լինել Ռուսիական խնդիրների նկատմամբ:

Աղբյուր՝ Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտ, տեղեկատվություն 96-11

7.2. Քաղաքականության կիրառումը

Հասարակական կարծիքի հարցումները քաղաքականության իրականացման գործընթացներում հաճախակի չեն օգտագործվում: Կարելի է նշել ընդամենը երեք հարցումներ,

որոնք ունեցել են իրենց ներդրումը քաղաքականության իրականացման գործում: Առաջինը վերաբերում է առողջապահական ծառայություններին, առողջապահական հաստատություններին, բժշկական անձնակազմին և առողջապահական համակարգի բարեփոխումներին, երկրորդը՝ անձնական տվյալների պահպանմանը, երրորդը՝ բնակարանային շինարարությանը:

Շատ քիչ են նաև զուտ վարչական բարեփոխումները ուսումնասիրող հարցումները: Ացկացվել են առողջապահական, կենսաթոշակային, բարձրագույն կրթության համակարգերը, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինները և բնակարանային քաղաքականությունը ուսումնասիրող հարցումներ:

Չեխիայի հասարակության կարծիքը երկրի տարածքային կառուցվածքի վերաբերյալ

1991թ-ի մարտին Սոցիոլոգիայի ինստիտուտը, Էմպիրիկ հետազոտությունների կենտրոնի և STEM-ի հետ համատեղ անցկացրեց մի հարցում, որի նպատակն էր ուսումնասիրել Չեխիայի բնակչության կարծիքը երկրի տարածքային կառուցվածքի վերաբերյալ: Հարցման պատվիրատուն էր Չեխիայի Ազգային խորհուրդը: Հարցման նպատակն էր ուսումնասիրել երկրի տարբեր շրջանների բնակչության տեսակետները Չեխիայի տարածքային բաժանման, տարածքային միավորների վարչական կարգավիճակի վերաբերյալ, ինչպես նաև այն, թե ինչպիսի կարգավիճակ պետք է ունենա Չեխիան գտնվելով Չեխոսլովակիայի կազմում:

Ստացված տվյալները պետք է օգտագործվեին պետական տարածքային կառուցվածքին վերաբերող բարեփոխումների մշակման գործընթացում: Հարցման համար օգտագործվել էր պատահական ընտրանքի սկզբունքը, ընտրանքը կազմված էր 2007 չափահաս քաղաքացիներից, տվյալների հավաքագրումը կատարվել էր երես-առ-երես հարցազրույցների միջոցով: Հարցվողներին տրվող հարցերը բաժանված էին 2 խմբերի՝ մի խմբում հավաքված էին պետության ապագա տարածքային կառուցվածքի տիպերին վերաբերող հարցերը (ուճիտար պետություն, դաշնություն, համադաշնություն), որոնցից պետք է ընտրվեր ամենահարմար տարբերակը, մյուս խումբը վերաբերում է տարածքային միավորների տարբեր տիպերի կարողություններին:

Ձարմանալի անհետևողականություն էր բացահայտվել հարցման արդյունքում այս երկու խմբերի միջև՝ մի կողմից հարցվողները նախընտրում են պետության ավելի ապակենտրոնացված կառուցվածքը, իսկ մյուս կողմից՝ ֆինանսական նկատառումներով, դեմ են տարբեր պետական մարմինների ստեղծմանը, ինչը որպես կանոն բխում է պետության ապակենտրոնացված կառուցվածքից (մի քանի խորհրդարաններ, կառավարություններ, գերագույն դատարաններ, սահմանադրություններ): Հարցման արդյունքները փոխանցվել են պատգամավորներին և դառնել են խորհրդարանում թե՛ քննարկումների առարկա (Սոցիոլոգիայի ինստիտուտ, 1991թ.):

Դիրքորոշումների նման մոդել բացահայտվել էր ավելի ուշ Չեխիայի վարչական կառուցվածքը ուսումնասիրող հարցման արդյունքում: Եթե կառավարման ապակենտրոնացումը, որպես վերացական հասկացություն, ողջունվում էր բնակչության մեծ մասի կողմից, ապա ապակենտրոնացված տարածքային կառավարությունների հիմնադրումը մտահոգում էր: Մարդկանց մոտ կային մտավախություններ, որ վարչական գրասենյակների ավելացումը կբերի ֆինանսական ծախսերի աճի: 1997թ-ի հոկտեմբեր/նոյեմբեր ամիսներին անցկացված հարցումը նոր հռչակված ինքնավար տարածքների վերաբերյալ հաստատեց այս քննադատական դիրքորոշումը՝ 26%-ը համարում էին, որ կառավարության ապակենտրոնացումը չափավետ չէ, և միայն 12%-ը համարում են դա չափավետ:

Նոր տարածքային կառուցվածքի վերաբերյալ առարկություններին են վերաբերում վարչական գրասենյակների ավելացումը (հարցվողների 34%-ը) և ֆինանսական ծախսերի ավելացումը (հարցվողների 28%-ը):

Աղբյուր՝ Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտ, 1997թ.

7.3 Քաղաքականության գնահատումը

7.3.1 Գոհունակության գնահատումը

Երեք տիպի հարցումներ կարող են դիտվել գոհունակության գնահատման հարցումների խմբում՝ թիրախային հարցումներ, որոնք գնահատում են համապատասխան մատուցվող ծառայությունների վերաբերյալ հաճախորդների գոհունակությունը, վարչական համակարգի գործունեության վերաբերյալ հասարակության գոհունակությունը գնահատող հարցումներ և վարչական անձնակազմի գոհունակությունը գնահատող հարցումներ:

Բնակչության դիրքորոշումները առողջապահության համակարգի բարեփոխումների վերաբերյալ

1995թ-ի նոյեմբերին MEDIAN գործակալությունը անցկացրեց մի հարցում առողջապահության համակարգի վերաբերյալ: Այն ուսումնասիրում էր ընդհանուր առողջապահության համակարգը, համակարգի բարեփոխումները, առողջապահական հաստատությունները և բժիշկներին: Հարցվողները 14-ից 79-ը տարեկան քաղաքացիներ էին, ընտրանքը կազմված էր 1000 մարդուց: Օգտագործվել էր քվտային ընտրանքի սկզբունքը: Տվյալները հավաքագրվել էին հարցազրույցների միջոցով և արխիվացվել MEDIAN գործակալությունում:

Առողջապահության համակարգի բարեփոխումները քրոնիկական բնույթ կրող խնդիր է Չեխիայի համար: Շատ ջանքեր են գործադրվել այս խնդիրը լուծելու համար, սակայն ապարդյուն: Ամենահրատապ լուծում ստանալու խնդիրների ցանկում առողջապահության համակարգի խնդիրներին տրվել է երկրորդ տեղը (հարցվողների 74%-ը համարում են առողջապահության համակարգի բարեփոխումները որպես անհետաձգելի գործընթաց): Այս եզրակացությունը ստացվել էր 1997թ-ի հունիսին Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտի կողմից անցկացված հարցման արդյունքում:

Աղբյուր՝ Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտ, 1997թ.

Առաջին խմբին վերաբերող հարցումները անցկացվել են տեղական կառավարությունների պատվերով և ուսումնասիրում են քաղաքացիների գոհունակությունը կոմունալ ծառայությունների վերաբերյալ (քաղաքային տրանսպորտ, փողոցների մաքրում, աղբահանություն, տեղական դպրոցներ): Այս խմբին են պատկանում նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պատվիրված և այդ նախարարության համապատասխան գիտահետազոտական ինստիտուտի կողմից անցկացված կենսաթոշակային հաստատությունները ուսումնասիրող հարցումները: Այս հարցումները ուսումնասիրում էին գործազուրկների դիրքորոշումները աշխատանքի շուկայի և այդ շուկայի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ, կենսաթոշակային համակարգի հաճախորդների դիրքորոշումները, ինչպես նաև երիտասարդ ընտանիքների և երիտասարդների տեսակետները սոցիալական քաղաքականության և սոցիալական խնդիրների վերաբերյալ, համալսարանների ուսանողների տեսակետները վճարովի կրթություն ստանալու և սոցիալական ծառայություններից օգտվելու վերաբերյալ:

1995թ-ի ապրիլ-մայիս ամիսներին UNIVERSITAS-ի կողմից անցկացվել է աշխատանքի ապահովման գրասենյակներում գրանցված գործազուրկների հարցում: Այս հարցումը պատվիրել էր Եվրամիության հանձնաժողովը, մասամբ այն ֆինանսավորվել է Չեխիայի Դրամաշնորհների գործակալության կողմից:

Հարցումը ուսումնասիրել է աշխատանքի տեղավորման գրասենյակների կողմից գործազուրկներին մատուցվող ծառայությունները, գործազրկության պատճառները և աշխատանք փնտրելու ռազմավարությունները: Ընտրանքը կազմված էր աշխատանքի տեղավորման գրասենյակների հաճախորդներ հանդիսացող 750 գործազուրկներից: Տվյալները հավաքագրվել են UNIVERSITAS-ի կողմից հարցաթերթիկների միջոցով (UNIVERSITAS):

Երկրորդ խմբին վերաբերող հարցումները գնահատում են հասարակության գոհունակությունը ազգային վարչական համակարգի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ, ուսումնասիրելով մարդկանց վերաբերմունքը առողջապահական, կրթական,

սոցիալական ապահովության համակարգերի, բնակարանային շինարարության քաղաքականության, դատարանների, ոստիկանության, բանակի և գաղտնի ծառայությունների վերաբերյալ: Այս հարցումները կարող են դիտվել որպես հաճախորդների գոհունակության մոնիտորինգի միջոց: Ներկայիս ուշադրության կենտրոնում են առողջապահական ոլորտի ծառայությունները այդ ոլորտում տիրող երկարատև ճգնաժամի պատճառով:

Աշխատանքային պայմանների վերաբերյալ պետական կառավարման վարչական անձնակազմի գոհունակությունը գնահատող հարցումները վերաբերում են վերոնշյալ երրորդ խմբի հարցումներին (աշխատավարձեր, աշխատանքային ժամեր, պաշտոնի բարձրացում, լրացուցիչ արտոնություններ, միջանձնական հարաբերություններ): Նմանատիպ հարցում կատարվել է ոստիկանության սպաների հետ: Այն անցկացվել է 1995թ-ի նոյեմբեր/դեկտեմբեր ամիսներին Չեխիայի ներքին գործերի նախարարության պատվերով և ֆինանսավորվել է Hans Seidel հիմնադրամի կողմից: Այն ուսումնասիրել է աշխատանքի ընտրության և աշխատանքի վերաբերյալ գոհունակության շարժառիթները, գնահատել է ոստիկանության աշխատակիցների միջանձնական հարաբերությունները, ոստիկանության և հասարակության հարաբերությունները: Հարցվողները՝ Չեխիայի ոստիկաններն էին: Ընտրանքը կազմված էր 1500 մարդուց: Տվյալները հավաքագրվել էին հարցաթերթիկների միջոցով: Տեղեկատվությունը գաղտնի էր և պահվում էր UNIVERSITAS գործակալությունում:

Նմանատիպ հարցումների մեծ մասն անցկացվում է պետական կառավարման գործակալությունների կողմից, օգտագործելով այդ գործակալությունների ներքին ռեսուրսները, առանց դիմելու թանկ ծառայություններ մատուցող մասնագիտացված կազմակերպությունների:

7.3.2 Այլ արդյունքների գնահատում

Ազդեցություն գնահատող հարցումները կարող են բաժանվել հատուկ և ընդհանուր խմբերի: Պետական կառավարման ոլորտի գործունեությունը և հասարակության գոհունակությունը ուսումնասիրող բոլոր հարցումները կարող են համարվել վարչական բարեփոխումները գնահատող հարցումներ:

Ինչ վերաբերում է առանձին քաղաքականությունների ազդեցությունը գնահատող հատուկ խմբի հարցումներին, ապա այստեղ կարելի է նշել հետևյալ երեք հարցումները՝ աշխատուժի շուկայի արդյունավետությունը գնահատող, նախկինում նշված առողջապահական ոլորտի բարեփոխումների և տեղական բարեփոխումների արդյունքների վերաբերյալ քաղաքական գործիչների գոհունակությունը գնահատող ուսումնասիրությունները:

Աշխատուժի շուկայի քաղաքականության ազդեցությունը

Հարցումը անցկացվել է SC&C կազմակերպության կողմից Համաշխարհային բանկի և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատվերով: Այս հարցման նպատակն էր գնահատել աշխատուժի շուկայի զարգացման ծրագրերը: Ուսումնասիրության առաջին փուլը ներառում էր համապատասխան հաստատությունների աշխատանքի և տվյալ թեմային վերաբերող վիճակագրական տվյալների վերլուծությունը: Երկրորդ փուլը՝ հարցման փուլն էր:

Հարցվողները աշխատուժի շուկայի մասնակիցներն էին՝ գործատուները, աշխատողները, գործազուրկները և այլն: Ընտրանքը կազմված էր 2000-2500 մարդուց, տվյալները հավաքագրվում էին հեռախոսային և երես-առ-երես հարցազրույցների միջոցով: Ստացված տվյալները պահվում են Համաշխարհային բանկի և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների բազայում: Պարզվել էր, որ աշխատուժի շուկայի զարգացման քաղաքականությունը բավականին արդյունավետ էր, որի արդյունքում Չեխիայում արձանագրվել էր գործազրկության ցածր ցուցանիշ: Հետագայում սկսած 1992թ-ից աշխատուժի շուկայի զարգացման քաղաքականության ակտիվ դերը նվազեց, զիջելով ավելի պասիվ քաղաքականությանը:

Աղբյուր՝ SC&C 1996թ.

8. Պետական կառավարման հաստատությունների իմիջը

Հաստատությունների իմիջը ուսումնասիրող հարցումներ շատ հազվադեպ են անցկացվում: Մեզ հայտնի են կրթական հաստատությունների կողմից այս թեմայով անցկացված երկու հարցումներ, որոնց արդյունքները հետագայում օգտագործվել են այլ ուսումնասիրություններում: Նշված հարցումներից մեկն իրականացվել է 1994-1996թթ-ին Charles University կրթական հաստատության սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից: Այն համեմատել է հասարակության դիրքորոշումը տարբեր քաղաքականությունների վերաբերյալ, տեղական և համաշխարհային մակարդակով:

Մյուս հարցումը անցկացվել էր 1991-1993թթ.-ին գիտությունների ակադեմիայի սոցիոլոգիայի ինստիտուտի կողմից: Այն համեմատում էր քաղաքականության մեջ ընդգրկված 4 տիպի մասնակիցների դիրքորոշումները՝ քաղաքացիների, խորհրդակցականների, քաղաքապետերի և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների: Ուսումնասիրվել են կիրառվող քաղաքականության առաջնահերթ խնդիրները, տեղական կառավարությունների գործունեությունը, տեղական քաղաքական գործիչների դերը, ընդհանուր քաղաքական արժեքները և դիրքորոշումները (տես Աղյուսակ 9):

9. Վարչական համակարգում հասարակական կարծիքի հարցումներից ստացված տեղեկատվության տեղադրումը

Չեխիան չունի սոցիալական հարցումների համակարգման և արխիվացման համակարգ: Չկա որևէ կենտրոնական մարմին, որը տեղեկատվություն է տրամադրում արդեն իսկ կատարված կամ ծրագրավորված հարցումների մասին, չի վարվում նաև կատարված հարցումների գրանցամատյան: Հարցումները պատվիրվում և անցկացվում են տարբեր կազմակերպությունների կողմից: Տվյալները պահվում են կազմակերպությունների տվյալների բազաներում: Որոշ կազմակերպություններ ստեղծել են իրենց սեփական արխիվները, իսկ տվյալների ընդհանուր բազայի կամ արխիվի ստեղծման հարցը դեռ լուծված չէ:

Սովորաբար ստացված տեղեկատվությունը պատկանում է հարցումը իրականացնող կամ պատվիրող կազմակերպությանը: Նախնական տվյալները, ինչպես նաև հարցման հաշվետվությունները համարվում են գաղտնի տեղեկատվություն և տրամադրվում են միայն վճարի դիմաց: Բացառություն է պետական հովանավորությամբ գործող Հասարակական կարծիքի հետազոտությունների ինստիտուտը, որը պարբերաբար տպագրում է իր կողմից կատարված հարցումների ցանկը և տարածում է ստացված արդյունքների ամփոփ նկարագրությունը, իսկ շատ չնչին գումարի վճարման դեպքում տրամադրում է ստացված տեղեկատվության վերաբերյալ մանրամասն հաշվետվություն: Արդյունքում ամենաընդունված տեղեկատվական աղբյուրներ են համարվում անձնական կապերը, զանգվածային լրատվամիջոցները, մամուլի հաղորդագրությունները, մամլո ասուլիսները և գիտական ամսագրերի տպագրությունները:

Այն հարցումները, որոնք ֆինանսավորվում են պետության կողմից պետք է հասանելի լինեն ցանկացած պետական հաստատության համար: Պետական ոլորտին վերաբերող տվյալների կենտրոնական բանկի, կամ գոնե հարցումների գրանցման ծառայության ստեղծումը թույլ կտա որոշ չափով մեղմացնել առկա խնդիրները: Իհարկե պետք է բացառվի սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնացված և կանոնակարգված իրականացումը: Այսպիսի փորձ արդեն իսկ ձեռք է բերվել 1990թ-ին կոմունիստական վարչակարգի ժամանակ, երբ հարցումները խստորեն վերահսկվում էին պետության կողմից:

10. Եզրակացություններ

Անկասկած հարցումները հանդիսանում են շատ կարևոր տեղեկատվական աղբյուր վարչական կառավարման ոլորտի համար: Պետք է նաև նշել, որ թերագնահատվում է սոցիալական հարցումների նշանակությունը երկրի պետական կառավարման ոլորտի համար, ինչը կատարվում է հետևյալ պատճառներով՝

- պետական պաշտոնյաներին շատ քիչ է հետաքրքրում հասարակության արձագանքը իրենց ոլորտի գործունեության վերաբերյալ,
- շատ պաշտոնյաներ ունեն կողմնակալ վերաբերմունք սոցիալական տվյալների նկատմամբ և համարում են, որ միայն տնտեսական տեղեկատվության օգտագործումն է տեղին պետական կառավարման ոլորտի համար,
- սոցիալական թեմայով հետազոտողների անկարողությունը ներկայացնել հարցումից ստացված տվյալները քաղաքական գործիչների և պաշտոնյաների համար հասանելի միջոցներով,
- հարցումից ստացված տվյալների անուշադիր կամ անպատասխանատու ներկայացում, ստացված տվյալները շատ հաճախ ներկայացվում են առանց նշելու թե ինչ մեթոդաբանություն է օգտագործվել՝ ընտրանքի մեծությունը, ընտրանքի մեթոդը և այլն:

Հարցումների անցկացման հիմնական խոչընդոտները արդեն էլ չեն կրում քաղաքական բնույթ, դրանք ավելի շատ գործնական բնույթի են: Ամենամեծ խոչընդոտներից է հասարակության հարցումներին մասնակցելու նվազող պատրաստակամությունն է, արդյունքում արձանագրվում են մերժումների և հրաժարվում են պատասխանել տարբերակների բարձր տոկոսներ: Պատճառն այն է որ, հարցումները դիտվում են որպես ներխուժում անձի մասնավոր կյանք, բացի այդ կա մտավախություն որ ստացված տեղեկատվությունը կարող է խեղաթյուրվել:

Գնալով խստացվում են անհատական տվյալների գաղտնիությունը պահպանող պահանջները: Հարցումներով զբաղվող կազմակերպություններին արգելվում է օգտվել Բնակչության ռեգիստրից և այլ ռեգիստրներից: Արդյունքում հարցումներով զբաղվող կազմակերպությունները լուրջ խնդիրներ են ունենում ընտրանքի որոշման հետ կապված: Հաճախ այս խնդիրները շրջանցելու համար կազմակերպությունները դիմում են անօրինական քայլերի, ինչը բերում է որակյալ հարցում անցկացնելու ցանկության դեպքում ծախսերի մեծացմանը: Քանի որ մեծ ընտրանք ունեցող հարցումները շատ ծախսատար են, պետական կառավարման ոլորտի հաստատությունները չեն կարող իրենց թույլ տալ նման ծախսեր: Այս մեծ ծախսերը ստիպում են փնտրել հովանավորներ մասնավոր սեկտորում:

Պետական կառավարման ոլորտում հարցումների արդյունավետ օգտագործման նախադրյալներն են՝

- պետական կառավարման ոլորտում ժողովրդավարության շարունակական զարգացումը,
- սոցիոլոգիայի մեթոդաբանության թեմայով պետական կառավարման ոլորտի անձնակազմի վերապատրաստումը,
- սոցիալական հետազոտողների վերապատրաստումը պետական կառավարման պաշտոնյաների հետ արդյունավետ շփվելու համար,
- բարձր որակավորում ունեցող, խելամիտ վճարի դիմաց վստահելի և հիմնավորված տվյալներ ներկայացնող գործակալությունների առկայությունը,

- կատարված և ծրագրավորված հարցումների, հարցումներ անցկացնող կազմակերպությունների կարողությունների և դրանց պայմանների մասին տեղեկատվության մատչելիության ապահովումը,
- Չեխիայի պետական ոլորտի վերաբերյալ մեծ հաջողություն ունեցած հարցումների մասին տեղեկատվության մատչելիության ապահովումը,
- տարբեր ցուցիչների վերաբերյալ համեմատական և վերլուծական տվյալների մատչելիություն:

Քաղաքացիների, վարչական ոլորտի պաշտոնյաների և խորհրդականների քաղաքական նախասիրությունները և իմիջները

1991-1993թթ-ին Սոցիոլոգիայի ինստիտուտի պատվերով անցկացվեց Չեխիայի քաղաքական կյանքում կարևոր դեր ունեցող քաղաքական գործիչների 3 հարցումներ: Հարցման նպատակն էր պարզել, թե ինչպես քաղաքացիները, խորհրդականները և վարչական ոլորտի պաշտոնյաները տեսնում են իրենց դերը հասարակության մեջ, ինչպես են իրենք գնահատում կառավարության գործունեությունը և ինչպիսին են իրենց քաղաքական նախասիրությունները: Ստացված տվյալները ուղարկվել էին նաև Չեխիայի ներքին գործերի նախարարություն: Տվյալները հավաքագրվել էին STEM-ի կողմից: Հարցվողները՝ Չեխիայի քաղաքացիներն էին, խորհրդականները, քաղաքապետերը և ինքնակառավարման մարմինների պաշտոնյաները: Քաղաքացիների ընտրանքը որոշվել էր քվտայի ընտրանքի սկզբունքով և կազմված էր 1052 մարդուց, խորհրդականների ընտրանքը կազմված էր 1183 մարդուց, քաղաքապետերինը և ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների ընտրանքները՝ 139 մարդուց: Ստացված տվյալները պահվում են Սոցիոլոգիայի ինստիտուտում: Հարցումները անցկացվում են «Տեղական ժողովրդավարություն և նորարարություն» միջազգային ծրագրի շրջանակներում (Սոցիոլոգիայի ինստիտուտ 1991-1993թթ.):

Քաղաքացիների, քաղաքապետերի և խորհրդականների քաղաքական նախասիրությունները զարմանալիորեն համընկնում էին:

Շատ կամ չափազանց հրատապ համարվում են հետևյալ տեղական խնդիրները՝

	քաղաքացիներ%	խորհրդականներ%
պետական անվտանգություն	81.3	87.0
շրջակա միջավայրի պաշտպանություն	77.3	89.4
կենցաղային ծառայություններ	82.8	75.8
պետական սոցիալական ծառայություններ	78.3	74.5
բնակարանների շինարարություն և վերանորոգում	77.5	71.0

Քաղաքացիների և խորհրդականների կարծիքները խորհրդականների կարողությունների վերաբերյալ նույնպես համընկնում են:

Շատ կամ չափազանց կարևոր համարվում են խորհրդականների հետևյալ կարողությունները՝

	քաղաքացիներ%	խորհրդականներ%
կոնֆլիկտների լուծման կարողություն	93.9	91.9
բարոյական կերպար	93.6	97.0
տեղական պայմանների վերաբերյալ գիտելիքներ	93.2	92.3
մասնագիտական գիտելիքներ	86.7	75.6
ձեռնարկատիրության ոգի	62.7	67.3
վարժ խոսելու կարողություն	62.7	53.0
վարչական աշխատանքի փորձ	43.7	23.2
քաղաքական կուսակցության անդամակցություն	5.1	8.7

Աղբյուրը՝ Իլլներ և Ջանսփաչ 1994

Հղումներ

- Attitudes Concerning Reproductive Behaviour.* Universitas, 1996b.
- Attitudes of General Public Toward the Reform of Health Care System.* Median, 1995b.
- Attitudes of Policemen* (satisfaction with the service, interpersonal relations, police and the public etc.). Universitas, 1995c.
- Attitudes of Young Generation Toward Different Forms of Family Life.* Universitas, 1996c.
- Attitudes Toward Constitutional Bodies and branches of Government* (TRENDS series). Continual Survey 1. Centre for Empirical Research (STEM).
- Attitudes Toward Housing, Leisure Time.* Amasia, 1995c.
- Attitudes Toward Physical Culture and Sport.* Amasia, 1994b.
- Attitudes Toward the Army and the Military Service.* Amasia, 1996b.
- Citizens and Public Safety.* Universitas, 1994a.
- Clients of Labour Offices.* Universitas, 1996f.
- Economic Expectations and Attitudes.* Institute of Sociology AS CR, since 1990.
- Illner, M. and D. Hanspach (1994), “The New Local Politics after the 1990 Reform”, in Barlow, M. et al. *Territory, Society and Administration*, University of Amsterdam, Amsterdam, Netherlands, pp. 95-110.
- Impact of Active Labour Policy on Labour Market.* SC&C, 1996.
- Mobility in the Labour Market.* SC&C, 1995c.
- Opinion on the Territorial Administrative Organisation.* Survey Information No. 97-11. Institute of Public Opinion Research, 1997b.
- On the Opinion Concerning EU Accession Talks.* Institute of Public Opinion Research, 1997c.
- Opinion on Professional Training.* Amasia, 1995b.
- Opinion Concerning Protection of Individual Data.* Amasia, 1993.
- Opinion of Clients of Social Departments at the District Offices Concerning their Social Situation and Social Policy.* Universitas, 1994b.
- Opinion on Territorial Organisation of the Czech Republic.* Working Papers 1991. Institute of Sociology AS CR, 1991.
- Opinion on School Education.* Amasia, 1996a.
- Parliament Members and their Opinion* (comparison 1993 x 1996). Factum, 1993, 1996.
- Policy Preferences of the General Public.* Continual Survey 3. Centre for Empirical Research (STEM). CCNM/SIGMA/PUMA(98)48
- 57
- Policy Priorities of the General Public* (TRENDS series). Continual Survey 2. Centre for Empirical Research (STEM).
- Politics and the Public — Part I: Citizens* (how citizens evaluate their situation, what they demand from politicians, from the state, from Parliament Members etc.). Factum, 1995a.
- Politics and the Public — State Administration and Self-Government.* Factum, 1995b.
- Public Attitudes Toward Constitutional Bodies.* Continual Survey 1. Institute of Public Opinion Research.
- Public Attitudes Toward Police.* Universitas, 1995a.
- Public Attitudes Toward Some Institutions* (courts, police, army, secret service, unions and other). Continual Survey 2. Institute of Public Opinion Research.
- Public Attitudes Toward the Army.* Universitas, 1996a.
- Public Opinion Concerning Activities of Government, Parliament, President, and the Citizens' Influence on these Bodies.* Factum, 1995-1996.
- Public Opinion Concerning Activities of the Unions.* Institute of Public Opinion Research, 1990.
- Public Opinion Concerning Criminality.* Universitas, 1995b.
- Public Opinion Concerning Housing Conditions.* Amasia, 1994a.
- Public Opinion Concerning Police.* Institute of Public Opinion Research, 1991a.
- Public Opinion Concerning Social Policy* (social and housing policy, living conditions of young families). Institute of Public Opinion Research, 1995a.
- Public Opinion Concerning Territorial Organisation of the State.* Institute of Public Opinion Research, 1992a.
- Public Opinion Concerning Territorial Organisation of the State.* Institute of Public Opinion Research, 1992b.
- Public Opinion Concerning the Czechoslovak Army.* Institute of Public Opinion Research, 1991b.

Public Opinion Concerning the Living Standard. Institute of Public Opinion Research, 1991c.
Public Opinion Concerning Urgent Policy Issues Facing the Government. Survey Information 97-10.
Institute of Public Opinion Research, 1997a.
Public Policy and its Actors. Department of Public Administration, Faculty of Social Sciences; Charles University, 1996.
Role Images and Policy Preferences of Local Political Actors. Institute of Sociology AS CR, 1991-1993.
Situation of Roma Minority. Amasia, 1997.
Social Change and Criminality in Prague. Universitas, 1993.
Social Conditions of University Students. Universitas, 1995e.
Survey of Unemployed Persons. Universitas, 1995d.
Trust in Constitutional Bodies and Social Organisations. Amasia, 1996c.
Trust in the Organs of Government, Opinion on Police. Amasia, 1995a.
Urgency of Societal Problems. Continual Survey 3. Institute of Public Opinion Research.

Հավելված՝ Պետական կառավարման ոլորտին վերաբերող հարցումներով և այդ հարցումներից ստացված տեղեկատվության արխիվացմամբ զբաղվող խոշոր հետազոտական գործակալությունների և ինստիտուտների հասցեները

Aisa s.r.o.

Lesanska 2a, 141 00 Praha 4

Director: Dr. Jiri Boguszak

Amasia s.r.o.

Vrozova 6, 150 00 Praha 5

Director: Professor Dusan Pavlu

Department of Public Administration

Institute of Sociological Studies

Faculty of Social Sciences, Charles University

Celetn 20, 110 00 Praha 1

Director: Professor Martin Potucek

Factum s.r.o.

Heyrovskeho nam. 780/5, 162 00 Praha 6

Director: Dr. Jiri Herzmann

GFK s.r.o.

Ujezd 450/40, 110 00 Praha 1

Research Director: Dr. Pavol Fric

Institute of Public Opinion Research

Solovska 142, 180 00 Praha 8

Director: Dr. Eliska Rendlova

Institute of Sociology

Academy of Sciences of Czech Republic

Jilska 1, 110 00 Praha 1

Director: Dr. Michal Illner

Median s.r.o.

Strasinska 31, 100 00 Praha 10

Director: Dr. Premysl Cech

SC&C s.r.o.

Petrska 5, 110 00 Praha 1

Director: Dr. Irena Bartova

STEM — Center for Empirical Research

Jilska 1, 110 00 Praha 1

Director: Dr. Jan Hartl

Universitas s.r.o.

Borovska 1425, 190 16 Praha 9

Director: Professor Jiri Bu

**Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը Հունգարիայի վարչական
բարեփոխումների գործընթացում**

Ջուլիա Սզալայի*

1. Ներածություն

Այս աշխատությունը ուսումնասիրում է հասարակական կարծիքի հարցումների ազդեցությունը 1989թ-ից հետո Հունգարիայում իրականացված վարչական բարեփոխումների վրա: Ուսումնասիրելով իրականացված բարեփոխումների ազդեցությունը հարցումների միջոցով, կարելի է որոշակի եզրակացություններ անել վերջին 6-ից 9-ը տարիների կառավարման փոփոխությունների մասին:

Այս փոփոխությունները սկիզբ են առնում սոցիալիզմի ժամանակներից: 1980-երին իրականացված բարեփոխումների շարունակման վերաբերյալ փորձագետների և հրապարակային քննարկումները թույլ տվեցին Հունգարիայի հասարակությանը մտնել 1990-ներ ավելի մանրամասն մշակված և հասարակության կողմից ընդունելի որոշմամբ շարժվել դեպի ժողովրդավարացում:

1990թ-ի գարնանը խորհրդարանի կողմից իրականացվեց վարչական համակարգի վերակառուցում: Մշակվեց նոր օրենսդրություն, հիմնադրվեցին նոր հաստատություններ և զգալիորեն սահմանափակվեցին կենտրոնական կառավարման մարմինների (նախարարությունների, ոստիկանության) իրավունքները: Նոր ժողովրդավարության ինստիտուցիոնալ և իրավական համակարգերը ստեղծվեցին չախազանց կարճ ժամանակաշրջանում:

Այսպիսով, յոթը տարի անց արդարացի է տալ մի քանի հարցեր իրականացված բարեփոխումների իրական արդյունքների մասին: Առաջին հարցը վերաբերում է անցումային գործընթացին: Որքանով վարչական կառավարման համակարգի կառուցվածքային փոփոխությունները նպաստել են անցմանը հրահանգներով կանոնակարգվող տնտեսությունից շուկայական տնտեսությանը: Ինչպե՞ս պետք է արտահայտվեն հասարակության տարբեր խավերի կարիքները և ո՞րն է որոշումներ կայացնող և վարչական մարմիններին հասնելու ճանապարհը: Արդյո՞ք հասարակական կարծիքի հարցումները ունեն որոշակի դեր սոցիալական, տնտեսական և

* Հունգարիայի Գիտությունների ակադեմիա. Սոցիոլոգիայի ինստիտուտ, Ջուլիա Սզալայի, փոխտնօրեն, Բուդապեշտ

քաղաքական շահերի կարևորման մեջ: Ի՞նչ տեղի կունենա բախվող շահերի հետ: Սրանք այն կարևոր հարցերն են, որոնց պատասխանները կփորձենք տալ այս աշխատության մեջ: Կքննարկվեն վերջերս անցկացված վարչական ոլորտի բարեփոխումների գործընթացի կարևոր փուլերը, ուսումնասիրված հասարակական կարծիքի հարցումների ընթացքում:

2. 1989թ-ից հետո կատարված վարչական բարեփոխումների գործընթացի առանձնահատկությունները

Նախկին վարչակարգից մնացած ժառանգությունը, որի առջև պետք է կանգներ Հունգարիայի նոր ստեղծված ժողովրդավարական համակարգը, դա կենտրոնական իշխանության համատարած ներկայությունը և մասնակցությունն էր բոլոր տնտեսական, քաղաքական և սոցիալական ոլորտների կարևոր խնդիրներին: Հետևաբար վարչական ոլորտի բարեփոխումների ամենակարևոր և առաջնահերթ խնդիրն էր վերասահմանել կառավարության տարբեր աստիճանի լիազորություններ ունեցող մարմինների իրավասությունները իրենց նոր դերերի համաձայն:

Պետական ոլորտի քաղծառայողների պարտականությունների և իրավասությունների վերաբերյալ նոր օրենսդրության մշակումից բացի, տարվել են նաև նոր ինստիտուցիոնալ կառուցվածքի հիմնադրման աշխատանքներ: Հիմնադրվել են մի քանի նոր կառույցներ տարբեր կառավարման մարմինների գործողությունը, դրանց վարչական և ֆինանսական ընթացակարգերը վերահսկելու համար: Մշակվել են ապակենտրոնացված որոշումների ընդունման իրավունքները սահմանադր կանոնակարգեր, որոնցով կարգավորվում են անշարժ գույքին, ֆինանսներին, հաստատությունների առօրյա կառավարմանը վերաբերող հարցերը:

Ամենակարևոր փոփոխություններից էր խորհրդարանին տրված ավելի շատ լիազորությունները: Մինչ 1989թ-ը խորհրդարանը ուներ շատ քիչ լիազորություններ: Նախկինում նրա դերը կայանում էր արդեն իսկ Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեյի կողմից գաղտնի բանակցությունների արդյունքում կայացրած որոշումների ձևական հաստատման մեջ:

Ակնհայտ է, որ տարբեր կուսակցությունների ի հայտ գալը և Հունգարիայի ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու ստանձնած պարտավորության առկայությունը նպաստեցին խորհրդարանի դերի փոփոխմանը: Այն դարձավ փոխզիջման միջոցով բախվող շահերի խնդիրների լուծման և կառավարության վերահսկման մարմին:

Նոր ինստիտուտների ստեղծումը օժանդակեց վարչական ոլորտի գործառույթների օրինականության և օրենքի կիրառման ապահովմանը: Նման կարևոր ինստիտուտներից են՝ նախագահության ինստիտուտը, Սահմանադրական դատարանը և Աուդիտի ազգային գրասենյակը:

Թեպետ Հունգարիայի նախագահի լիազորությունները համեմատած տարածաշրջանի այլ երկրների նախագահների հետ ավելի քիչ են, նախագահի դերը խորհրդարանի և կառավարության միջև հավասարակշռության, օրինականության պահպանման և ազգային շահերի միասնական ներկայացման հարցում դժվար է լիովին ներկայացնել: Լուրջ քաղաքական բախումների բերող շատ խնդիրներ լուծվում են նախագահի մասնակցությամբ: Նախագահն է սահմանադրական կարգի պահպանող և բռնապետական ոտնձգությունները սանձող մարմինը:

Երկրորդ ժողովրդականություն վայելող ինստիտուտն՝ Սահմանադրական դատարանն է: Այս դատարանի դատավորները ընտրվում են խորհրդարանի կողմից և լիազորված են վերահսկելու օրենսդրական ընթացակարգերի պահպանումը: Այս մարմնի որոշումները պետք է պարտադիր ընդունվեն խորհրդարանի և կառավարության կողմից: Մինչ սահմանադրության ընդունումը, դատարանի դերը կայանում էր օրենսդրական ուղեցույցեր տալու և քաղաքացիների, վարչական ոլորտի մարմինների միջև ծագած խնդիրների դեպքում պատժիչ որոշումներ կայացնելու մեջ: Դատարանի որոշումները ընդունվում են և կատարվում են առանց որևէ առարկությունների:

Ի տարբերություն վերոնշյալ երկու ինստիտուտների, երրորդ ինստիտուտը ունի բոլորովին այլ դեր: Աուդիտի ազգային գրասենյակը լիազորված է հսկելու պետական միջոցների օգտագործումը և ապահովելու տնտեսական բնույթի պատասխանատվություն: Խորհրդարանի կողմից լիազորված այս մարմինը անցկացնում է տարբեր նախարարությունների, տեղական իշխանությունների, տնտեսական, ֆինանսական և հաշվապահական, սոցիալական ապահովության գործառույթների, պետական հիմնադրամների, Պետական սեփականաշնորհման գործակալության և այլ տարբեր պետական կազմակերպությունների գործառույթների ստուգում: Աուդիտի ազգային գրասենյակի կողմից պատրաստված հաշվետվությունները ներկայացվում են խորհրդարանին, որը հարկ եղած դեպքում համապատասխան միջոցներ է ձեռնարկում: Այս նոր վարչական մարմնի վերահսկողական գործունեությունը սահմանափակվում է պաշտոնական ստուգումներով, առանց որևէ լուրջ հետևանքների անձի կամ կազմակերպության համար: Այս կազմակերպությունը ունի բարձր հեղինակություն մասնագիտական շրջանակներում, բայց ցածր է գնահատվում հասարակության կողմից, որը դիտում է Աուդիտի ազգային գրասենյակի գործունեությունը որպես օրինականությունը վերականգնելու մի խումբ ազնիվ մարդկանց ապարդյուն ջանքեր կոռուպցիայով և լիազորությունների չարաշահմամբ լի ոլորտում:

Կարևոր փոփոխությունների երկրորդ խմբին են պատկանում տեղական վարչական մարմինների լիազորությունների ավելացումը՝ իրենց կարիքները և շահերը պաշտպանելու համար և տնտեսական զարգացման, զբաղվածության, ծառայությունների մատուցման և սոցիալական ապահովության հարցերի վերաբերյալ ապակենտրոնացված որոշումներ կայացնելու իրավունքը: Պետական կառավարման կենտրոնական և տեղական իշխանությունների միջև իշխանության նոր ստորաբաժանման իրավական համակարգը հիմնադրվել է 1990թ-ի գարնանը ընդունված Տեղական ինքնակառավարման օրենքի համաձայն:

Նոր ձևավորված կառավարությունները դարձել են իրենց տարածքում գտնվող և նախկինում պետությանը և ազգին պատկանող հողերի և ենթակառուցվածքային շինությունների սեփականատերերը: Այդ կառավարությունները դիտվում էին նաև որպես որոշակի ազատություններ ունեցող անկախ տնտեսական սուբյեկտներ, որոնք ունեին նաև օրենքով սահմանված գործառույթների ցանկ: Ազատ ընտրությունների և կառավարման համակարգի վերակազմակերպման երկակի սկզբունքները կարող են երաշխավորել ոչ միայն ժողովրդավարական մասնակցության տարածումը, այլ նաև նպաստել որոշումների կայացման և ռեսուրսների բաշխման արդյունավետությանը:

Տեղական կառավարման ոլորտի ձևափոխումը առաջ է քաշում համակարգային փոփոխման կարևոր խնդիրները՝ հին իշխանությունները պետք է փոխվեն նոր վարչական մարմնով, ենթակայությունը՝ ներկայացմամբ, բյուրոկրատական դիրքորոշումը՝ ձեռնարկատիրական նորամուծությամբ, հրամանները՝ ծառայությունների մատուցմամբ, կենտրոնական կախվածությունը՝ անկախ ինքնորոշմամբ:

Հաշվի առնելով վարչական ոլորտի բարեփոխումների իրականացման հարցում տեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ դերը, վերջին 7 տարիների ընթացքում թե՛ քննարկումներ են տարվել այդ մարմինների կողմից իրականացվող քաղաքականության առաջնահերթ խնդիրների որոշման ուղղությամբ: Մարդկանց կենսակերպի ձևավորման մեջ բացառիկ դեր ունենալու պատճառով տեղական կառավարությունները, ավելի հաճախ քան կենտրոնական կառավարման այլ մարմիններ, հանդիսանում են հասարակական կարծիքի հարցումների մասնակիցներ:

3. Հասարակական կարծիքի հարցումների պատմությունը և առանձնահատկությունները

1980-րին հասարակական կարծիքի պարբերաբար գնահատումները շատ կարևոր և անհրաժեշտ միջոց էին որոշումների կայացման գործընթացում, որն ընդունվել էր որպես այդպիսին ոչ միայն մասնագիտական շրջանակներում, այլ նաև Կոմունիստական կուսակցության բարձրաստիճան մարմինների կողմից: Կուսակցության կողմից ֆինանսավորվող հարցումները ուսումնասիրում էին տարբեր սոցիալական խմբերի արձագանքները արդեն իսկ ծրագրավորված և իրականացմանը ենթակա գործընթացների վերաբերյալ:

Այսպիսով պաշտոնապես ֆինանսավորվող հարցումները ուսումնասիրում էին մարդկանց դիրքորոշումները շարունակական տնտեսական փոփոխությունների վերաբերյալ: Մի քանի հարցումներ ուղղված էին գնահատել մարդկանց սպասելիքները ապագայի նկատմամբ (հոռետեսության և լավատեսության աստիճանները), իրենց տեսակետները տարբեր պետական համակարգերի գործունեության վերաբերյալ, սկսած առողջապահական համակարգերից և

վերջացրած կրթական համակարգերով, ինչպես նաև մարդկանց ակնկալիքները սոցիալական ոլորտի ծառայություններից:

Քանի որ այս հարցերը ծայրահեղ աստիճանի քաղաքականացված էին, կարիք չկա նշելու, որ հասարակական կարծիքի հարցումները գտնվում էին Կոմունիստական կուսակցության խիստ վերահսկողության տակ: Ջանգվածային հեռահաղորդակցության հետազոտությունների կենտրոնն էր պատասխանատու այս հարցումների համար, այն ֆինանսավորվում էր պետական բյուջեից և ենթարկվում էր Չունգարիայի Պետական հեռուստատեսության և ռադիոյի նախագահին: Այս կազմակերպության կողմից իրականացված հարցումները չէին հրապարակվում մինչև 1980-ները: Սակայն ժամանակ առ ժամանակ որոշ տվյալներ ներկայացվում էին որոշ հեղինակների կողմից:

Չնայած իշխանությունների մտավախություններին, հասարակական կարծիքի հարցումները համարվում էին տեղեկատվության կարևոր աղբյուր և իրականացվող բարեփոխումների վերաբերյալ հասարակության հավանության գնահատման վստահելի միջոց: Ընդունելով դրանց օգտակարությունը, սոցիոլոգիական հետազոտություններով զբաղվող հաստատություններին հանձնարարվեց իրականացնել տարբեր խնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ:

80-ականների կեսերին, բացի Ջանգվածային հեռահաղորդակցության հետազոտությունների կենտրոնից, հասարակական կարծիքի հարցումներ իրականացվում էին նաև այլ սոցիոլոգիական հետազոտություններով զբաղվող կազմակերպությունների կողմից: Այդ հարցումները ֆինանսավորվում էին պետական միջոցների հաշվին: Հետազոտություններով զբաղվող հաստատությունը կցված էր կուսակցության կամ պետական կառավարման ոլորտի որևէ պաշտոնյալի: Չնայած նրան, որ վերջին տարիներին ավելի էր ազատականացվել ստացված արդյունքների հրապարակումը, տվյալների հրապարակման խստիվ վերահսկողությունը աստիճանաբար աճում էր:

Ավելի քան երկու տասնյակ տարիներ անց Չունգարիայի խոշոր համալսարաններում նորից բացվեցին սոցիոլոգիայի ֆակուլտետները: Ջանգվածային հեռահաղորդակցության հետազոտությունների կենտրոնի կողմից կազմակերպվեցին հարցումների մեթոդաբանությունը ուսուցանող դասընթացներ, որոնք անցկացվում էին առաջատար հետազոտողների կողմից հարցազրուցավարների և հետազոտությունների գծով օգնականների համար:

Այս ամենը թույլ տվեց բավարարել 1989թ-ից առաջացած հասարակական կարծիքի հետազոտությունների պահանջարկը, ապահովելով վերապատրաստված անձնակազմ:

Սոցիալիզմի փլուզումը բերեց լուրջ կազմակերպչական փոփոխությունների: 1991թ-ին փակվեց կուսակցական պատկանելիություն ունեցող Ջանգվածային հեռահաղորդակցության հետազոտությունների կենտրոնը: Այս կենտրոնի առաջատար հետազոտողները անցան մասնավոր

սեկտոր և շատ կարճ ժամանակահատվածում հիմնադրվեցին չորս խոշոր հետազոտական կենտրոններ: Դրանցից երեքը՝ Median, Sonda Ipsos-ը և Modus-ը, մասնավոր կազմակերպություններ էին: Չորրորդ կազմակերպությունը՝ Հասարակական կարծիքի հետազոտությունների կենտրոնը, պատկանում էր Հուլգարիայի գիտությունների ակադեմիային: Այն ֆինանսավորվում էր պետական բյուջեի կողմից և հետազոտություններին տրվող դրամաշնորհների հաշվին:

Բացի Ջանգվածային հեռահաղորդակցության հետազոտությունների կենտրոնի այս չորս խոշոր իրավահաջորդներից, հարցումների շուկայում հայտնվեցին մեծ թվով հետազոտություններով զբաղվող այլ ինստիտուտներ: Բացի իրենց հիմնական գործունեությունից՝ մամուլի, հաճախորդներին մատուցվող ծառայությունների, շուկայի և շրջակա միջավայրի ուսումնասիրություններից, այս ինստիտուտները անցկացնում էին նաև հասարակական կարծիքի հարցումներ: Մեծ մասամբ դրանք միանվագ թեմատիկ հարցումներ էին, առանց որևէ շարունակական նպատակների, որոնք կազմում էին ամբողջական ծրագրի մի մաս (թեմատիկ ուղղվածությունները ներառում են շրջակա միջավայրի պաշտպանության, փոփոխվող աշխատուժի շուկայի, մասնավոր ձեռնարկատիրության, ձեռնարկատիրական սովորությունների, տնային տնտեսությունների կենցաղակարգի, աշխատանքի նկատմամբ գոհունակության, հաճախորդների գոհունակության, ձեռնարկատիրության տարբեր տիպերի գնահատման հարցեր):

Երկու խոշոր մասնավոր հասարակական կարծիքի կենտրոնները՝ Median և Sonda Ipsos-ը պարբերաբար զբաղվում են մարդկանց քվեարկությանը մասնակցելու վարքագծի և ընդհանուր քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրություններով:

TARKI կազմակերպության կողմից անցկացվել էին մի քանի հետազոտություններ, որոնց նպատակն էր ուսումնասիրել հասարակական կարծիքը բյուջետային բարեփոխումների տարբեր տեսանկյունների վերաբերյալ, իսկ CEU-ի կողմից անցկացված հետազոտությունը ուսումնասիրել էր ժամանակակից հունգարական հասարակության փոփոխվող քաղաքական մշակույթը:

Վերջին տարիներին փոխվել է նաև հարցումների թեմատիկ ուղղվածությունը: Համեմատած նախկինում ավելի հաճախ ուսումնասիրվող տնտեսական թեմաների հետ, ներկայիս գերակշռում են մարդկանց քվեարկությանը մասնակցելու վարքագծի, նրանց քաղաքական մտածելակերպի և տարբեր կուսակցությունների հանդեպ նրանց դիրքորոշումները ուսումնասիրող հարցումները:

Ուսումնասիրվող թեմաների ցանկում են՝ քվեարկություններին մասնակցելու մարդկանց ցանկությունը, խորհրդարանական կուսակցությունների ժողովրդականությունը և հեղինակությունը վայելող քաղաքական գործիչները, քաղաքական գործիչների կողմից ներկայացվող ծրագրերի հասարակական օժանդակությունը: Սրանցից շատերը պարբերաբար ուսումնասիրվում են Median-ի և Sonda Ipsos-ի կողմից:

Այս պարբերաբար իրականացվող հարցումները ֆինանսավորվում են մամուլի կողմից (առաջատար թերթերը և ամսագրերը ունեն իրենց հատուկ կենտրոնները): Կուսակցությունները նույնպես հարցումներ են անցկացնում, թեպետ ստացված տվյալները շատ հազվադեպ են հրապարակվում, դրանք պահվում են ներքին օգտագործման համար:

Մի այլ պարբերաբար կրկնվող թեմաներից է կառավարության գործունեության գնահատումը, որը կատարվում է միայն մի քանի թերթերի պատվերով: Մինչ 1989թ-ը այս տիպի հարցումներ երբեք չեն անցկացվել: Հասարակական կարծիքի հարցումների մի այլ խումբ ուսումնասիրում է մարդկանց տնտեսական ակնկալիքները և նրանց տեսակետները ընթացիկ տնտեսական վերակառուցման հիմնական տարրերի վերաբերյալ:

4. Պետական կառավարման հաստատությունների, կառավարության և կառավարման ոլորտի գործողության և դրանց ճանաչման մոնիտորինգ

Հաշվի առնելով այն, որ Հունգարիայի ժողովրդավարության պատմությունը շատ կարճ է, դժվար է պատկերացնել որ այն կարող է անխտիր ընդունվել բոլոր քաղաքացիների և քաղաքական գործիչների կողմից: Այդ պատճառով շատ կարևոր է իմանալ, թե որքանով են ժողովրդավարությունը ապահովող հաստատությունները ընդունվում մարդկանց կողմից: Որքանով են այս նոր հաստատությունների աշխատանքները համապատասխանում մարդկանց ակնկալիքներին: Արդյո՞ք դրանք նպաստում են վստահության բարձրացմանը, կամ բերում են ժամանակի ընթացքում անվստահության աճի: Բարձրացնելով նմանատիպ հարցեր կարելի է բացահայտել այն փոփոխությունները, որոնք պետք է արվեն քաղաքական միջավայրում: Այս պատճառով զարմանալի չէ, որ տեղական և արտասահմանյան մամուլը, հեռուստատեսությունը և ռադիոն, մի շարք անկախ հիմնադրամներ ցանկանում են պարբերաբար հարցումներ անցկացնել այս թեմաներով:

Երբ մարդկանց հարցնում են, թե որքանով է քաղաքականությունը իրենց համար կարևոր, մեծ մասը պատասխանում է, որ չեն հետաքրքրվում քաղաքականությամբ: Մարդիկ համարում են քաղաքականությունը կեղտոտ, զգվելի, ատելությանբ և վեճերով լի մի բնագավառ, որտեղ պաշտպանվում են այդ բնագավառի հիմնական մասնակիցների շահերը (Median 1992, 1994; Simon 1992): Չնայած քաղաքականության վերաբերյալ ունեցած բացասական տեսակետների, հունգարացիները լավ են տեղեկացված քաղաքական ինստիտուտների և ներկայիս քաղաքական կյանքի հիմնական խոշոր քաղաքական գործիչների մասին: Նույնիսկ իմանալով, որ վերոնշյալ ինստիտուտները ունեն իրենց գործունեության հետ կապված խնդիրներ, հունգարացիները տալիս են այդ հաստատություններին վստահության բարձր գնահատական:

Քաղաքականությանն նկատմամբ այսպիսի վիճահարույց վերաբերմունք բացահայտվել է նաև մարդկանց քվեարկությանը մասնակցելու վարքագիծը ուսումնասիրելիս: Համաձայն կատարված կանխատեսումների 1994թ-ին տեղի ունեցած երկրորդ ընտրություններին մարդկանց մասնակցությունը պետք է զգալի նվազեր, սակայն մասնակցության ցուցանիշը ավելի բարձր էր, քան 1990թ-ին տեղի ունեցած առաջին ընտրությունների ժամանակ: Միառժամանակ քաղաքական միջոցառումները (կուսակցությունների կողմից կազմակերպված հանդիպումները, ցույցերը) մեծ հետաքրքրություն չեն առաջացնում, չի ավելանում նաև կուսակցությունների անդամների թիվը (Biro 1994):

Median-ի և Sonda Ipsos-ի կողմից կատարվող ամսական հարցումները ուսումնասիրում են քաղաքացիներին ծառայություններ մատուցող տեղական ինքնակառավարման մարմինների վարկանիշը: 0-ից 100 բալլանոց սանդղակի օգտագործման դեպքում, այս մարմինների վարկանիշը գնահատվում էր 50-57 բալլ և համեմատած խորհրդարանի, կառավարության, արհեստակցական միությունների կամ կուսակցությունների հետ դրանց վարկանիշը երկար ժամանակ մնում է անփոփոխ: Տեղական ինքնակառավարման մարմինների համեմատաբար ավելի շահեկան դիրքը պայմանավորված է նրանով, որ մարդիկ, հատկապես գյուղերու, անմիջականորեն զգում են կատարված փոփոխությունները: Երբ կառավարման կենտրոնական մարմինները հեռու են և կտրված համայնքներից, տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում առկա են այդ մարմինների որոշումների կայցման գործընթացի վրա ազդելու քաղաքական հնարավորությունները:

Պետական կառավարման մարմինների գործունեությունը ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում

Սկսած 1994թ-ի օգոստոսից՝ նոր կառավարության պաշտոնի հանդիսավոր ստանձնման արարողությունից, Sonda Ipsos-ի կողմից կատարվում են պետական կառավարման ոլորտի տարբեր հաստատությունների, հատկապես տարբեր նախարարությունների, վերաբերյալ մարդկանց տեսակետները և դրանց փոփոխությունները ուսումնասիրող ամսական հարցումներ: Հարցման ընտրանքը կազմված է 17-ից բարձր տարիք ունեցող 1000 քաղաքացիներից: Այս հետազոտությունը կատարվում է ամենախոշոր թերթերից մեկի՝ *Nzpszava* թերթի պատվերով, որը տպագրում է նաև ամենամսյա հարցումներից ստացված արդյունքները: Ստացված արդյունքների համեմատական վերլուծությունը տպագրվել է երեք հաշվետվությունների տեսքով (1995, 1996 և 1997թթ-րի քաղաքական տարեգրքեր):

Սկսած 1994թ-ի օգոստոսից մինչև 1997թ-ի մարտը արտաքին գործերի, պաշտպանության և ներքին գործերի նախարարությունները ստացել են ամենաբարձր գնահատականները, իսկ գյուղատնտեսության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունները հաստատուն կերպով զբաղեցնում են վերջին տեղերը: Նույնիսկ ֆինանսների նախարարությունը

ավելի բարձր է գնահատվել քան սոցիալական քաղաքականությամբ և առաջապահությամբ զբաղվող մարմինները: Այսպիսով կարելի է ասել, որ ներկայիս տնտեսական պայմաններում հունգարական հասարակությունը չի հանդուրժի նախկինում կատարվող շռայլ ծախսեր: Մարդիկ ակնկալում են բարձր պռոֆեսիոնալիզմ և հստակ քայլեր ներկայիս պայմանները բարելավելու համար:

Բացահայտվել է մի այլ կարևոր միտում: Մարդիկ սկսել են ավելի արագ արձագանքել նոր քաղաքականությունների կիրառման վերաբերյալ: Օրինակ՝ բարձրագույն կրթության (մշակույթի և կրթության նախարարություն) ֆինանսավորման նոր նախագծերի կամ տնտեսությանը (ֆինանսների նախարարություն) օժանդակելու նոր ծրագրերը անմիջապես գնահատվում են հասարակության կողմից համապատասխան նախարարությանը վերաբերող միջին գնահատականի աճի տեսքով: Փոքր գյուղատնտեսական արտադրություններին հատկացվող ֆինանսական միջոցների կրճատումը (գյուղատնտեսության նախարարություն) բերեց համապատասխան նախարարության գնահատականի իջեցմանը: Իրականում քաղաքականությունները չեն մշակվում հաշվի առնելով զուտ հասարակության կարծիքը: Այնուամենայնիվ, նույնիսկ անցանկալի քայլերը կարող են ընդունվել, եթե դրանց գերակշռում են կառավարման մարմինների բացահայտ պրոֆեսիոնալիզմը և որակյալ աշխատանքը:

Sources: Karajannisz, M. (1995), “Kormény a mőrlegen” (“Government on scales”), in Kurtšn et al. (eds.), *Politikai Évkönyv 1995* (Political Yearbook, 1995), DKMKA, Budapest, Hungary, pp. 558-567.
Karajannisz, M. (1996), “Kormény a mőrlegen 1995-ben” (“Government on scales in 1995”), in Kurtšn, S. et al. (eds.), *Politikai Évkönyv 1996* (Political Yearbook, 1996), DKMKA, Budapest, Hungary, pp. 687-697.
Szaby, Cs. (1997), “Btalakulyfőiben” (“Midway in transformation”), in Kurtšn, S. et al. (eds.), *Politikai Évkönyv 1997* (Political Yearbook, 1997), DKMKA, Budapest, Hungary, pp. 632-642.

5. Քաղաքականության առաջնահերթ խնդիրները՝ տեղական մակարդակով կատարված բարեփոխումների վերաբերյալ տեսակետները

1990-ականների վարչական բարեփոխումներին հաջորդեց համայնքների կառավարման համակարգի վերակառուցումը: 1990 և 1994 թթ-րին անցկացված տեղական կառավարման մարմինների ընտրությունները առաջացրել էին մեծ հասարակական հետաքրքրություն, ինչը ապացուցվեց մասնակցության բարձր ցուցանիշներով (50%-ից բարձր 1990թ-ի և 44% 1994թ-ի ընտրություններին): Մարդիկ ունեին մեծ ակնկալիքներ նորաստեղծ տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ: Համաձայն իրենց տեսակետների նորընտիր մարմինները պետք է ներկայացնեին համայնքի իրավունքները և շահերը, երաշխավորեին բոլոր

ներքին խնդիրների լուծումը առանց որևէ միջամտության, խթանելի տնտեսական զարգացումը և ապահովելի մատուցվող ծառայությունների բարձր որակը:

Իշխանության և լիազորությունների ապակենտրոնացման պայմաններում, տեղական ինքնակառավարման մարմիններին էր հանձնվել բոլոր սոցիալական ապահովության ծրագրերի իրականացումը, պետական և սոցիալական ծառայությունների մատուցումը: Այս մարմիններին էր փոխանցվել տեղական ենթակառուցվածքների սեփականության իրավունքը: Ենթադրվում էր նաև, որ կենտրոնի կանոնակարգող դերի նվազեցումը կնպաստի տնտեսական առաջխաղացմանը: Այսպիսով իշխանության ապակենտրոնացումը դա դեպի ժողովրդավարություն և տնտեսական բարգավաճում տանող ճանապարհն էր:

Մանրամասն ուսումնասիրություն էին պահանջում տեղական ինքնակառավարման ֆինանսավորման համակարգի փոփոխությունները, ծառայությունների մատուցման տարբեր քաղաքականությունները, սոցիալական ապահովության, կրթական և առողջապահական քաղաքականությունները: Անձնակազմի հավաքագրմանը և բյուջեի մշակմանը վերաբերող հարցերի ուսումնասիրման հետ մեկտեղ, հարցումներ էին անցկացվում տեղական ինքնակառավարման մարմինների տեսակետների վերաբերյալ: Այս ուսումնասիրությունները ֆինանսավորվում էին տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրամաշնորհների միջոցով:

Հասարակությունը ավելի շատ կողմ էր տեղական ինքնակառավարման քան կենտրոնական կառավարման մարմիններին: Տեղացիների կողմից մշակված ծրագրերը ավելի խորն էին ներկայացնում համայնքի առաջնահերթ խնդիրները և կարիքները, ստանալով աջակցություն և էլիտայի և ընտրազանգվածի կողմից: Պարբերաբար անցկացվող հարցումները կարող են բերել շատ կարևոր տեղեկատվության ձեռք բերմանը, ինչը կարող է հաշվի առնվել աշխատատեղերի ստեղծման, ենթակառուցվածքների կառուցման և պահպանման համար ներդրումներ անելու, տարածաշրջանային անհավասար տնտեսական և սոցիալական զարգացումը մեղմացնելու համար:

6.Եվրամիության ինտեգրման վերաբերյալ տեսակետները

Չորս տասնամյակներ տևող Սովետական վարչակարգի իշխանությունից և սոցիալիզմի փլուզումից հետո Հունգարիան ստացավ պատմական հնարավորություն փոխելու իր աշխարհաքաղաքական դիրքը: Երկրի առջև դրվեցին շատ կարևոր խնդիրներ, սկսած քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային հարցերից և վերջացած երկրի ռազմական հարցերով: Չնայած նրան, որ կոմունիստական վարչակարգը բացահայտ կերպով դեմ

էր նման ջանքերին, սոցիալիզմի ժամանակաշրջանի ընթացքում եվրոպական տիպի հասարակության պահպանման ջանքերը կազմում էին հունգարական ընտանիքների և համայնքների առօրյա անբաժանելի մասը: Անտեսելով վերևից եկող ջանքերը պահպանելու «երկաթյա վարագույրը», մարդկանց եվրոպական ինքնանույնացումը դրսևորվում էր արևմտյան ոճի ազատ ժամանցի անցկացման, արևմտյան ոճի առանձնատներ և բնակարաններ, սնունդ և հագուստ օգտագործելու մեջ: Ոչ պաշտոնական եվրոպականացման այս մեկ տասնամյակ տևող նախապատմությունը պետք է համադրել մարդկանց մշակութային ինքնանույնացման հետ համատեղելի քաղաքական և տնտեսական վարչակարգ ստեղծելու պահանջների հետ: Այս համատեքստը հաշվի առնելով, զարմանալի չէ, որ բոլոր քաղաքական կուսակցությունները առաջնահերթ խնդիրներից են համարում Եվրամիությանը, ՆԱՏՕ-ին և այլ լուրջ հեղինակություն ունեցող տարածաշրջանային կազմակերպություններին անդամակցելու բանակցությունները:

Սակայն երբ պարզ դարձավ, թե որքան աշխատանք պետք է տարվի տարբեր եվրոպական կազմակերպությունների անդամ դառնալու համար, հասարակության նախնական խանդավառությունը պակասեց: Պարզվեց, որ ոչ գործող իրավական համակարգը, ոչ կրթական, սոցիալական ապահովության, տնտեսական կառավարման կամ արտադրության տեխնոլոգիական կանոնակարգման համակարգերը համապատասխանում են արևմտյան ստանդարտներին: Մեծ ջանքեր պետք է գործադրվեն այս համակարգերը փոփոխելու համար, և այս գործընթացը կարող է տևել տասնյակ տարիներ:

1990թ-ից սկսած մի քանի կարևոր քայլեր ձեռնարկվեցին Եվրոպային ինտեգրվելու երկարատև գործընթացի շրջանակներում: Ստեղծվեցին նոր հաստատություններ և կազմակերպություններ, որոնք պետք է ստանձնեին այլ պետական գործակալությունների հետ միասին եվրոպականացման գործընթացի համակարգման մարմինների դերը: Վարչական բարեփոխումներ են իրականացվել բոլոր կարևոր պետական համակարգերում:

Այս գործընթացի հիմնաքարը կազմում էր 1996թ-ին իրականացված «Եվրոպական հարցաթերթիկ» ծրագիրը, ինչը սկսեց բանակցությունների գործընթացը ներկայիս կառավարության և Եվրամիության ղեկավարության միջև անդամակցությանը վերաբերող աշխատանքների ժամանակացույցի վերաբերյալ:

Այս թեմայով ամենասպառիչ տեղեկատվությունը ներկայացնող ուսումնասիրություններից է Eurobarometer ուսումնասիրությունը, որն անց էր կացվել Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի 19 երկրներում: Հունգարիայի համար ուսումնասիրությունը իրականացրել է MODUS Consulting Ltd.-ն: Բացի ստանդարտ հարցերից, որոնք ընգրկված էին բոլոր 19 երկրներում օգտագործվող հարցաթերթիկներում, MODUS-ի կողմից մշակվել էին նաև զուտ երկրի շահերին վերաբերող հարցեր:

Կան որոշ մտավախություններ Եվրոպական շուկա առանց պաշտպանիչ ռազմավարության մտնելու վերաբերյալ: Բնակչության մեծ մասը կքվեարկի Եվրամիության անդամակցությանը կողմ, պահանջելով ավելի շատ ջանքեր գործադրել աշխատուժի վերապատրաստման և աշխատուժի շուկայի վերաբերյալ քաղաքականության մշակման համար, ինչը թույլ կտա խուսափել տեղական աշխատուժի շուկայի մեկուսացումից:

Հունգարիայի Եվրամիությանը անդամակցելու և Եվրոպականացման գործընթացները համարվում են ավելի շուտ բացասական քան դրական գյուղերում բնակվող մեծահասակների և քաղաքներում բնակվող բանվորության կողմից (Lengyel, Noinar, Toth 1996):

7. Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը քաղաքական ցիկլում

7.1. Քաղաքականության ընդունումը՝ առողջապահական ոլորտի բարեփոխումները

Առողջապահության համակարգի աշխատանքի հետ կապված մարդկանց բազմաթիվ դժգոհությունները և անբավարարվածությունը դարձել էին 1980-ականների ամենալայն քննարկվող հարցերից մեկը: Այս իրավիճակին նպաստել էին մի քանի պատճառներ:

Առաջինը՝ հասարակության առողջական վիճակի կտրուկ վատթարացումն էր: Մահացության, հատկապես տղամարդկանց մահացության, ալկոհոլամոլության, հոգեկան և սրտանոթային հիվանդությունների ցուցանիշները գերազանցում էին շատ այլ Եվրոպական երկրների ցուցանիշները:

Երկրորդը՝ ներկայիս առողջապահական համակարգի լուրջ խնդիրներ լուծելու անկարողությունն էր: Այս համակարգում արձանագրված լուրջ խնդիրներից էին՝ մատուցվող ծառայությունների որակի կտրուկ վատթարացումը, բժշկական սարքավորումների քրոնիկական պակասը, հիվանդների կարիքների և մատուցվող ծառայությունների անհամապատասխանությունը, կաշառակերությունը:

Հաշվի առնելով այս իրավիճակը, 1990-ների սկզբին ներկայացվող բոլոր կուսակցական ծրագրերը ներառում էին առողջապահական համակարգում լուրջ բարեփոխումներ իրականացնելու խոստումներ: Սակայն նմանատիպ խոստումները ենթադրում էին համապատասխան ֆինանսավորում պետական բյուջեից, ինչը հակասում էր բյուջետային ծախսերը նվազեցնելու քաղաքականությանը:

Որոշ նախնական փոփոխություններ կատարվեցին առկա խնդիրները մեղմացնելու նպատակով: Պետական առողջապահական համակարգը անցավ սոցիալական ապահովության

վերահսկողության տակ: Որոշվեց ավելի խնայողաբար օգտագործել դեղամիջոցները: Ավելի խստացվեց հաշվանդանների կարգավիճակ ստանալու գործընթացը: Զգալիորեն բարձրացվեցին պետական հիվանդանոցների բժիշկների և բուժքույրերի աշխատավարձերը: Սակայն այս փոփոխությունները առաջացրեցին ավելի քան վիճահարույց արդյունքներ: Մատուցվող ծառայությունների որակը շարունակում էր նվազել:

Բժիշկների հարցումը ցույց տվեց, որ համակարգի խնդիրները մեծ մասամբ պայմանավորված են սակավ ֆինանսավորմամբ: Հնարավոր լուծումների թվում տարբեր մասնագիտական խմբեր նշում էին երկու կարևոր քայլերի համակցումը՝ երկարատև, մանրամասն մշակված առողջապահական ծրագրի ներկայացումը և վճարովի և անվճար ծառայություններ մատուցող բազմասեկտոր առողջապահական համակարգի ստեղծումը:

7.2. Քաղաքականության կիրառումը՝ բյուջետային բարեփոխումների վերաբերյալ տեսակետները

Վերջին տարիներին բյուջետային բարեփոխումներին վերաբերող խնդիրները հաստատուն կերպով ընդգրկվել էին հասարակական քննարկումների օրակարգում: Խորհրդարանի և Սահմանադրական դատարանի վրա ճնշում էր գործադրվում հարկերի հավաքման և լրավճարների իրավական համակարգի ստաբիլացման նպատակով: Քանի որ բյուջետային բարեփոխումները կատարվել էին տնտեսական ճգնաժամի պայմաններում, ապա առաջ քաշվեց նաև սոցիալական հակասությունների խնդիրը: Մի շարք հարցումներ բացահայտեցին այս հակասությունների և երկինաստությունների պատճառները: Այս դեպքում տնտեսական պատճառների առկայությունը ակնհայտ էր: Պետությունից անկախ տնտեսական գործունեությունը պահանջում էր կայուն ֆինանսական աջակցություն և ակտիվ գործող շուկա: Սակայն վերջին տարիների ընթացքում նման պայմաններ չէին ստեղծվել:

Հունգարացիները ցանկանում են ունենալ ավելի լավ գործող առողջապահական համակարգ, սակայն ո՞վ պետք է վճարի դրա համար

1994թ-ին Առողջապահական ապահովագրության հիմնադրամը պատվիրել և ֆինանսավորել է հարցում, որի նպատակն էր ուսումնասիրել մարդկանց կարծիքը առողջապահական համակարգի և դրան վերաբերող բարեփոխումների մասին: Հարցման ընթացքում ուսումնասիրվել են մարդկանց վերաբերմունքը իրենց առողջության նկատմամբ և առողջապահական համակարգից օգտվելու եղանակները: Ուսումնասիրությունը անցկացվել է Արիեստակցական միությունների տնտեսական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի

կողմից: Ընտրանքը կազմված է 5000 չափահասներից, տեղեկատվությունը հավաքագրվել է մեկ ժամ տևող հարցազրույցների միջոցով: Վերջնական հաշվետվությունը չի հրապարակվել, հաշվետվության համառոտ զեկույցը տպագրվել է Առողջապահական ապահովագրության հիմնադրամի աշխատանքային փաստաթղթում:

Հարցման արդյունքում բացահայտվեց առողջապահության ֆինանսավորման վերաբերյալ մարդկանց իրազեկության ցածր մակարդակը: Չնայած նրան, որ գործատուները և աշխատողները վճարում են զգալի գումարներ թոշակների, ընտանեկան նպաստների և անվճար մատուցվող առողջապահական ծառայությունների համար (աշխատողները՝ իրենց աշխատավարձի 10%, գործատուները՝ իրենց աշխատավարձի ամսական ֆոնդի 42,5%), նրանք անտեղյակ էին այդ վճարումների չափերից և դրանց բաշխվածությունից: Այն հարցվողները, որոնք տարբեր պատճառներով առնչվում են առողջապահական համակարգի հետ, լավ տեղեկացված էին վճարումները կանոնակարգող օրենսդրության մասին, քանի որ այս հարցերը վերաբերում են համակարգի ներքին հարցերին:

Հարցվողները ավելի քիչ տեղեկացված էին առողջապահական համակարգում վերջերս տեղի ունեցած փոփոխությունների մասին: Մարդիկ նույնիսկ չէին կարող պատկերացնել, թե որքան լրավճարներ կենտրոնական հիմնադրամներից հատկացվել են որոշ դեղագործական ապրանքների համար:

Ինչ վերաբերում է առողջապահական համակարգում առկա որակի և ռեսուրսների պակասի հետ կապված խնդիրներին, ավելի հաճախ նշվել են հիվանդանոցներում հիգիենայի պահպանման կոպիտ խախտումները և հիվանդներին տրվող սննդի ցածր որակը, ինչպես նաև բուժաշխատակիցների պակասը և հիվանդներով լի հիվանդանոցները: Այն հարցին, թե արդյո՞ք կհամաձայնվեին վճարել որոշ ծառայությունների համար կամ հանդուրժել որոշ ծառայությունների որակի նվազեցումը կամ բյուջետային ֆինանսավորման կրճատումները այլ ոլորտներում բարելավումներ կատարելու փոխարեն, հարցվողները նշել էին, որ ավելի հակված են հիվանդանոցներում բուժվելու տարբերակին և կարող են ընդունել մատուցվող ծառայությունների համար աստիճանաբար ներդրվող վճարումների համակարգը: Ըստ հարցվողների որոշումներ կայացնողները կարող են գտնել առողջապահության համակարգից դուրս ոլորտներ, որտեղ սակավ պաշարների խնայողությունը կունենա ավելի քիչ բացասական ազդեցություն մարդկանց ավելի նեղ շրջանակների վրա: Հունգարական հասարակության պահանջն էր ունենալ պետության կողմից ֆինանսավորվող, անվճար կամ գոնե մատչելի առողջապահական համակարգ: Հարցման հիմնական եզրակացությունը հետևյալն էին՝ պետք է բարձրացնել մարդկանց իրազեկվածության աստիճանը առողջապահության էկոնոմիկայի վերաբերյալ:

7.3.Քաղաքականության գնահատումը՝ տնտեսական բարեփոխումների ձեռքբերումների և կորուստների վերաբերյալ տեսակետները

Բարձր արտադրողականություն և տնտեսական լավ ցուցանիշներ ձեռք բերելու բարեփոխումների գործընթացը ունի չափազանց երկար պատմություն: Սոցիալիզմի փլուզումը բերեց պայմանների լուրջ փոփոխությունների, և այս փոփոխված միջավայրում պետք է կատարվեին տնտեսական առաջընթացին նպաստող աշխատանքները: Սկսած 1980-ականներից արտադրության ծավալների հաստատուն անկումը մեկ անգամ ևս հաստատեց, որ արտադրության ծավալները չեն աճի ծրագրված տնտեսության պայմաններում: Ապագա տնտեսական զարգացումը պահանջում էր սեփականության իրավունքի կիրառում: Սակայն նման պահանջը հակասում էր սոցիալիստական վարչակարգի սկզբունքներին: Սեփականության իրավունքի վրա հիմնված բոլոր ծայրահեղական գաղափարները կարծես թե պետք է մնային դարակում պահված, սակայն 1989-1990թթ-ին կատարված համակարգային փոփոխությունները աստիճանաբար ավելի պարզեցրեցին իրավիճակը և անմիջապես 1990թ-ի ընտրություններից հետո տնտեսական վերափոխման նպատակ ունեցող ծրագրերի շրջանակներում ձեռնարկվեցին մի քանի վճռորոշ միջոցառումներ:

Ամենակարևոր միջոցառումների թվում էին սեփականաշնորհմանը վերաբերող օրենքները և կանոնակարգերը: Բացի մասնավոր կապիտալի իրավական ճանաչման, իրականացվեցին մի քանի դրամավարկային միջոցառումներ՝ պետական ձեռնարկությունները մասնավոր բիզնեսի վերածելու ուղղությամբ: Այսպիսով, ընդամենը վեց տարի անց մասնավոր սեփականությունը ունեցավ գերիշխող նշանակություն: Ներկայիս արտադրողական միջոցների 60%-ից ավելին պատկանում է մասնավոր սեկտորին: Մասնավոր սեփականությանը բերեց նաև նախկինում թույլ զարգացած ծառայությունների սեկտորի զարգացումը, որն դարձավ տնտեսության վճռորոշ ճյուղ, ապահովելով ՀՆԱ-ի մոտ 60%ը:

Սեփականաշնորհման հետ մեկտեղ փոփոխություններ կատարվեցին նաև արտաքին առևտրի հետ կապված: Արտահանմանը հատկացվող բավականին մեծ լրավճարները պետք է ոչ միայն բարձրացնեին արտադրողականությունը, այլ նաև նպաստեին Հունգարիայի արտաքին պարտքերի մարմանը: Կատարվեցին նաև տեղական և ներմուծվող ապրանքների գների ազատականացում:

Կենտրոնական հիմնադրամների ֆինանսական միջոցների և միջազգային վարկերի օգնությամբ արդիականացվեց ֆինանսական համակարգը: Բանկային համակարգի ինստիտուցիոնալ փոփոխությունները համալրվեցին դրամավարկային ռազմավարության ազատականացմամբ:

Բոլոր այս փոփոխությունները տեղի են ունեցել տնտեսական ճգնաժամի պայմաններում: Ընտրելով շուկայական տնտեսությանը անցնելու կարճ ճանապարհը պետք էր նաև պատրաստ լինել մեղմացնելու այս գործընթացի բացասական հետևանքները՝ ինֆլացիան և գործազրկության կտրուկ աճը: Այս համատեքստում արդյունաբերական զարգացման կենտրոնական և տարածաշրջանային ինստիտուտների հիմնադրումը դառնում է բարեփոխումների գործընթացի կարևոր տարրերից մեկը: Չնայած բոլոր ջանքերի, տեղի ունեցավ եկամուտների անկում և մարդկանց մոտ ապագայի նկատմամբ անորոշ ակնկալիքների առաջացում: Հենց այս պատճառներով է, որ տնտեսական բարեփոխումները մեծ մասամբ համարվում էին բացասական ազդեցություն ունեցող, առաջացնելով մարդկանց մոտ համապատասխան դիրքորոշումներ կատարվող փոփոխությունների նկատմամբ:

Մի շարք հարցումներ հաստատեցին մարդկանց մոտ անապահովության զգացմունքների առաջացումը կապված տնտեսական բարեփոխումների հետ: Երբ խոսվում էր տնտեսակա բարեփոխումների մասին, մարդիկ նշում էին իրենց մոտ մտավախություն առաջացնող հետևյալ երկու հարցերը՝ աշխատանքից չզրկվելու և ներկայիս կենսամակարդակը պահպանելու խնդիրները:

Գործազրկության իրական ցուցանիշները գերազանցում էին կանխատեսումները 30%-ից 35%-ով: Մարդիկ ավելի շատ հույսը դնում էին իրենց սեփական ուժերի վրա և բարելավման միակ ճանապարհը համարում էին իրենց սեփական ջանքերի ակտիվացումը:

Տնտեսական ակնկալումների վերաբերյալ հարցումները ցույց տվեցին որ, գնալով մարդկանց մոտ աճում է 1980-ականներին բնորոշ կայուն ֆինանսական վիճակի հայրենաբաղձության զգացմունքը: Միառժամանակ մարդիկ դեմ են պլանային տնտեսությանը: Երբ հարց է տրվում, թե տնտեսության որ ձևն է նախընտրելի, ավելի հաճախ նշվում է ազատ շուկայական տնտեսության տարբերակը և կտրուկ բացառվում է սոցիալիստական կառավարման եղանակը (տես Աղյուսակ 6, Համ 1996թ.): Մարդիկ կողմ են սեփականաշնորհմանը, չնայած նրան, որ կցանկանային տեսնել աշխատակիցների շահերի ավելի ակտիվ պաշտպանություն պետության կողմից:

Որո՞նք են շուկայական տնտեսության պայմաններում շահող և տուժող կողմերը

1991թ-ից սկսված Median-ի կողմից պարբերաբար հարցումներ են կատարվել, որոնք ուսումնասիրել են ընթացիկ տնտեսական փոփոխությունների, հատկապես սեփականաշնորհման և շուկայական տնտեսության վերաբերյալ մարդկանց դիրքորոշումները:

Տարեկան հարցումները կատարվում են մամուլի պատվերով, CEU-ի, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի և Միջազգային մասնավոր ընկերությունների կենտրոն-ի հետ համատեղ: Ընտրանքը կազմված է 1200 չափահաս քաղաքացիներից, տվյալները հավաքագրվել են հարցազրույցների միջոցով, բարձրացնելով տնտեսական զարգացմանը, շուկայական տնտեսության օգուտներին և կորուստներին, ինչպես նաև սեփականաշնորհման վերաբերյալ հարցեր:

Եթե 1991թ-ին հարցվողների 24%-ը կողմ էին շուկայական տնտեսությանը, ապա 1995թ-ին միայն հարցվողների 7%-ն էին այդ կարծիքին: Եթե 1991թ-ին 41%-ն էին կարծում, որ երկրում տեղի ունեցող փոփոխությունները գնում են ճիշտ ուղղությամբ, ապա 1995թ-ին այս կարծիքը կիսողների թիվը հավասար էր 21%-ի: 1991թ-ին 41%-ն համարում էին, որ երկրում կատարվող փոփոխությունները գնում են սխալ ուղղությամբ, ապա 1995թ-ին այս թիվը նվազեց մինչև 33%: Սեծամասնությունը գտնում էին, որ եկամուտները պետք է կանոնակարգվեն շուկայի կողմից, չնայած այս տեսակետին համաձայն հարցվողների թիվը 1993-1995թթ-ին նվազել էր 68%-ից 61%-ի: Եթե նախկինում հարցվողների 50%-ը կողմ էին սեփականաշնորհմանը, ապա 1995թ-ին այս թիվը հավասար էր արդեն 39%-ի: 1995թ-ին հարցվողների 23%-ը կողմ էին թույլ տալու արտասահմանցիներին գնել արտադրությամբ զբաղվող ձեռնարկություններ, 15%-ը ողջունում էին այս առաջարկությունը, և միայն 5%-ը կողմ էին թույլ տալ արտասահմանցիներին դառնալ հողի սեփականատեր:

Վերլուծության արդյունքում պարզվեց, որ շուկայական տնտեսության, սեփականաշնորհման և կենտրոնական իշխանությունների վերահսկողությունը նվազագույնի հասցնելուն կողմ էին կրթություն ստացած քաղաքացիները (բարձրագույն կրթություն ստացածների 57%-ը և միջնակարգ կրթություն ստացածների 33%-ը), երիտասարդները (47%-ը) և այն քաղաքացիները, որոնք կողմ էին միայն շուկայական տնտեսության տարբերակին (55%-ը):

8. Պետական կառավարման հաստատությունների իմիջը

Հասարակության կողմից պետական կառավարման ոլորտին ներկայացվող պահանջներն էին ծառայել հասարակությանը, ցուցաբերելով պատասխանատու աշխատանքային վարվելակերպ: Այս պահանջները ձևավորվել էին դեռ սոցիալիզմի ժամանակաշրջանում, երբ գործում էր բյուրոկրատական համակարգը, որը սահմանում էր անառարկելիորեն ընդունվող կարգեր, որտեղ «դատարան» նշանակում էր հետապնդում և ոչ թե արթարադատության պաշտպանում, որտեղ «ոստիկանություն» նշանակում էր հպատակեցում՝ օրենքի և կարգի պահպանման փոխարեն: Հետևաբար ակնհայտ էր դառնում ժողովրդավարական կարգի հաստատման պահանջը և իշխանություններ ներկայացնող հաստատությունների ձևավորված սկզբունքները, արժեքները և աշխատանքի ոճը փոխելու անհրաժեշտությունը:

Ներկայացվեցին բարեփոխումների գործընթացին նպաստող մի շարք նոր օրենքներ և միջոցներ: Դատական համակարգը ազատվեց քաղաքական վերահսկողությունից և ստեղծվեցին անկողմնակալության սկզբունքը պաշտպանող նոր ստորաբաժանումներ: Ոստիկանության համակարգը վերակառուցվեց, ստեղծվեցին նոր վարչություններ: Տեղական կառավարություններին շնորհվեց ոստիկանության գործունեության հսկողության լիազորությունը: Անցկացվեցին վերապատրաստման դասընթացներ ոստիկանների համար: Բոլոր այս փոփոխությունները գտնվում էին հասարակության ուշադրության կենտրոնում:

Մի շարք հարցումներ ուսումնասիրել են պետական հաստատությունների ջանքերը նոր իմիջ կերտելու նպատակով: Բոլոր հետազոտական կենտրոնները հետևում էին կառավարության, տեղական իշխանությունների, դատարանի, ոստիկանության և բանակի վերաբերյալ մարդկանց ընկալումների փոփոխություններին: Ամեն տարի ավելանում է առաջընթաց նկատող քաղաքացիների թիվը՝ կառավարության աշխատանքի, տեղական իշխանությունների պռոֆեսիոնալիզմի, բանակի և ոստիկանության աշխատանքի, դատարանի արդյունավետ գործունեության մեջ: Համաձայն 0-ից 100 բալլանոց սանդղակի նախագահը և Սահմանադրական դատարանը գտնվում են ամենաբարձր դիրքերում, իսկ կառավարությունը՝ ամենացածր: Գնալով աճում է մարդկանց անվստահությունը և սկեպտիցիզմը պետական կառավարման ոլորտում գերիշխող կաշառակերության հետ կապված: 1996թ-ին անցկացված հարցումների համաձայն Հունգարական սոցիալիստական կուսակցությունը և Ազատ դեմոկրատների դաշնակցությունը կրել են կողմնակիցների թվի լուրջ կորուստներ (տես Ադյուսակ 7, Szabo 1997, Zavec 1997):

9. Վարչական համակարգում հասարակական կարծիքի հարցումներից ստացված տեղեկատվության տեղադրումը

Իրականում հարցումների արդյունքները քիչ էին օգտագործվում ժամանակակից Հունգարիայում: Դրա համար կարելի էր նշել մի շարք պատճառներ: Շատ քիչ դեպքերում էր, որ հարցումների արդյունքները հրապարակվում էին: Խոշոր կենտրոնների կողմից կատարվող ուսումնասիրությունների մեծ մասը պատվիրվում էր մասնավոր բիզնեսների կամ քաղաքական կուսակցությունների կողմից, այս դեպքերում գործում էին ստացված արդյունքների տպագրումը սահմանող խիստ պայմաններ: Տպագրմանը ենթակա հարցումների մեծ մասը կատարվում էր չորս խոշոր կենտրոնների կողմից (Median, Sonda Ipsos, Modus և Marketing Centrum): Ամբողջությամբ և առանց սահմանափակումների տպագրվում էին մեծ մասամբ մամուլի կողմից պատվիրված հարցումները: Նախարարությունների կողմից պատվիրված հարցումները տպագրվում էին ամփոփ տեսքով Քաղաքական տարեգրքում:

1996թ-ին Marketing Centrum-ի կողմից կատարվել են մի շարք հարցումներ, որոնց նպատակն էր ուսումնասիրել մարդկանց ընկալումները տարբեր պետական կազմակերպությունների

վերաբերյալ, ինչպես նաև մարդկանց քաղաքական ապաստելիքների փոփոխությունները: Հարցումները պատվիրվել էին մամուլի կողմից: Ընտրանքը կազմված էր 1000 18-ից բարձր տարիք ունեցող քաղաքացիներից: Ամսական հարցումներից ստացված տվյալները տպագրվել էին ամենահեղինակավոր թերթերից մեկում՝ Nepszava թերթում: Ինչպես պարզվեց հարցումների միջոցով պետական հաստատությունների և դրանց կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ վստահության մակարդակը խիստ կախված է տեղի ունեցող քաղաքական միջոցառումներից: Մարդկանց կառավարության նկատմամբ ունեցած վստահության ցուցանիշը ավելի բարձր է, քան կառավարության կողմից կատարված աշխատանքների նկատմամբ մարդկանց գոհունակության ցուցանիշը: Մեկ տարվա ընթացքում կառավարության կողմից կատարված աշխատանքների նկատմամբ մարդկանց գոհունակության ցուցանիշը 26%-ից հասավ 36%-ի (մայիս ամսին), իսկ նույն տարվա դեկտեմբեր ամսին կազմեց 29%: Տեղական իշխանությունների և ոստիկանության կողմից կատարված աշխատանքների նկատմամբ մարդկանց գոհունակության ցուցանիշը տարվա կտրվածքով հավասար էր 46%-ից -52%-ի:

Տարվա քաղաքական կյանքի սկանդալը այսպես կոչված «Tocsik-Szocskai» պետական հաստատությունում արձանագրված կաշառակերության միջադեպն էր, որը վերաբերում էր տեղական ինքնակառավարման մարմիններին Պետական սեփականաշնորհման գործակալության կողմից վաճառված անշարժ գույքին: Կաշառքի միջոցով հաջողվել էր կնքել պայմանագիր, որտեղ նշված էին արհեստականորեն իջեցված գներ: Այս միջադեպը մեկ անգամ ևս հիշեցրեց կաշառակերության մասին պետական կառավարման բարձր մակարդակներում:

Վերոնշյալ միջադեպից հետո, նոյեմբերին անցկացված հարցումը ուսումնասիրում էր մարդկանց ընկալումները տարբեր պետական կազմակերպությունների բարեխիղճ գործունեության վերաբերյալ: Պարզվեց, որ ամենաբարձր գնահատականները տրվել էին բանակին և դատարաններին: Հարցվողների 14%-ը համարում էին, որ բանակում ընդհանրապես գոյություն չունի կաշառակերություն, մոտ 15%-ից 19%-ը կաշառակերության դեպքերի ականատես են եղել: Հարցվողների 37%-ը համարում է կառավարությունը չափազանց կոռումպացված և միայն 7%-ը գտնում է, որ կառավարությունը չի զբաղվում կաշառակերությամբ: Ոստիկանությունը, տեղական իշխանությունները, խորհրդարանը զբաղեցնում են միջին դիրքերը՝ հարցվողների 24%-ից 26%-ը համարում են այս հաստատությունները չափազանց կոռումպացված, իսկ 7%-ից 14%-ը՝ բարեխիղճ աշխատող:

Այս արդյունքները օգնեցին վերանայել կոռուպցիայի վերաբերյալ տանվող աշխատանքները՝ ուժեղացվեց սեփականաշնորհման գործընթացների վերահսկողությունը, ակտիվացվեց պայքարը ստվերային տնտեսության դեմ, ստեղծվեց ոստիկանության նոր վարչություն ապրանքափոխանակության գործարքները հսկելու համար:

Source: Marinn, B. (1997), "A politikai közvélemény a Szokai-Tocsik-Égy évben" ("Political opinion in the year of the Szokai-Tocsik case"), in Kurtann, S. et al. (eds.), Politikai Évkönyv 1997 (Political Yearbook 1997), DKMKA, Budapest, Hungary, pp. 532-568.

Հարցման արդյունքները չէին օգտագործվում նաև դրանց նկատմամբ ունեցած անվստահության պատճառով: Անկախ կատարված հարցումների պատմությունը ցույց տվեց, որ այս կամ այն հարցումից ստացված վատ ցուցանիշները ընդունվում էին, որպես գաղտնի քաղաքական նախապատվության օրինակներ և դատապարտվում էին մամուլի կողմից: Այսպիսի միջադեպերը վնասում էին հետազոտություններ անցկացնող ընկերությունների համբավին և հեղինակությանը:

Քանի որ հասարակական կարծիքի հարցումները գնահատում են մարդկանց տվյալ ժամանակահատվածի տեսակետները, ապա ստացված արդյունքները չեն կարող օգտագործվել երկարաժամկետ նպատակներով: Ռեսուրսների սակավության պայմաններում, կազմակերպությունները մեծ դժվարությամբ են դրամական միջոցներ հայթայթում շարունակական հարցումներ անցկացնելու համար: Ստացված արդյունքները, որոշ ժամանակ անց, կորցնում են իրենց նշանակությունը և շատ դժվար է մշակել բարեփոխումների երկարատև ծրագիր, հիմնվելով այսպիսի արդյունքների վրա:

Վերջին 6-7 տարիների ընթացքում հարցումներ են պատվիրվել բոլոր նախարարությունների, տեղական իշխանությունների և պետական կառավարման ոլորտի այլ հաստատությունների կողմից, սակայն դրանց մանրամասն հաշվետվությունները չեն հրապարակվել: Հարցումներով զբաղվող խոշոր կազմակերպությունները նույնպես չէին լիազորված պահելու այս արդյունքները իրենց արխիվներում, դարձնելով դրանք հասանելի հասարակության համար: Այսպիսի իրավիճակը բարդացնում էր որոշումների կայացման գործընթացը, երկարատև քաղաքականությունների և առանձին հաստատությունների վրա հասարակական կարծիքի հարցումների ունեցած ազդեցության ուսումնասիրությունը: Տեղեկատվության միակ աղբյուրը՝ Քաղաքական տարեգրքերն էին, որտեղ ներկայացված էին պետական ոլորտի հաստատությունների աշխատանքի վերաբերյալ մարդկանց տեսակետները, կառավարության և դրա կողմից իրականացվող քաղաքականությունների վերաբերյալ կարծիքները, կուսակցական դիրքորոշումների փոփոխությունները, մարդկանց քվեարկություններին մասնակցելու վարքագծերը և նրանց կարևոր քաղաքական և տնտեսական որոշումների գնահատականները:

10. Եզրակացություններ

Այս աշխատության մեջ ուսումնասիրվել են վեց տարբեր ոլորտներում իրականացված վարչական բարեփոխումները: Ուսումնասիրվել է մարդկանց կարծիքը և գնահատականները կառավարման տարբեր ոլորտներում իշխանությունների կողմից գործադրված ջանքերի վերաբերյալ: Բոլոր ուսումնասիրված բնագավառները կարևոր նշանակություն ունեին մարդկանց առօրյա կյանքի համար:

Ուսումնասիրությունների արդյունքում արվեցին որոշ եզրակացություններ: Բյուջետային համակարգի ցանկացած փոփոխություն ուղակիորեն ազդել էր ծառայությունների և ապրանքների սպառման վրա: Տեղական ներդրումները ավելացրել էին մարդկանց աշխատանք գտնելու հնարավորությունները: Հիվանդանոցների կողմից մատուցվող ծառայությունների բարելավումը պահանջում էր իշխանությունների ավելի համակարգված աշխատանք: Մարդիկ ավելի հեշտ ընդունում էին այն փոփոխությունները, որտեղ ակնհայտորեն պարզ էին այն խնդիրները, որոնց լուծման համար կատարվում են այդ փոփոխությունները և այդ փոփոխություններից ստացված արդյունքները: Ինչպես հաստատվեց բազմաթիվ հարցումների կողմից, հունգարական հասարակության մեծ մասը պատրաստ է ժամանակավոր բարդությունների և ներկայիս պայմանների վատթարացմանը, եթե, իհարկե, կա դրա անհրաժեշտությունը:

Հասարակական կարծիքի հարցումները կարող են օգտագործվել որպես տեղեկատվական գործիք վարչական բարեփոխումներ իրականացնողների համար: Հարցումների միջոցով կարելի է պարզել մարդկանց հնարավոր արձագանքները այս կամ այն փոփոխության վերաբերյալ, շտկել տարբեր հաստատությունների կողմից տարվող աշխատանքները և տեղեկացվել հասարակության տարբեր խավերի դժգոհությունների մասին այս կամ այն խնդրի շուրջ: Հարցումներով զբաղվող և մասնագիտական որակավորման բարձր աստիճան ունեցող կազմակերպությունները երաշխավորում են տրամադրվող տեղեկատվության հուսալիությունը: Սակայն հասարակական կարծիքի հարցումների ավելի լայնատարած օգտագործումը վարչական բարեփոխումների գործընթացում կպահանջի պետական հաստատություններից դառնալ ավելի թափանցիկ, ավելի բաց հասարակության համար և ներգրավել հասարակությանը ստացված արդյունքների քննարկումների մեջ:

Հղումներ

Andorka, R., T. Kolosi, and Gy. Vukovich (eds.) (1994), *Társadalmi riport 1994* (Social Report 1994) (with contributions from Z. Fnbinn, M. Sngi, and I. Tqth), TŕRKI, Budapest, Hungary.

Andorka, R., T. Kolosi, and Gy. Vukovich (eds.) (1996), *Társadalmi riport 1996* (Social Report 1996) (with contributions from Zs. Ferge, T. Kolosi, M. Sngi, I. Szelmyi, Sz. Szelmyi, and I. Gy. Tqth), TŕRKI, Budapest, Hungary.

Biro, L., ŗ. Bokor, and Zs. Hunyadi (1994), “Fejezetek a Szonda Ipsos 1994. nvi kŔzvnlemnykutatsaibgl” (“Chapters from the public opinion surveys run by Sonda Ipsos in 1994”), in Kurtnn, S., P. Snndor, and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1994* (Political Yearbook 1994), DKMKA, Budapest, Hungary, pp. 667-688, 698-714.

Bocz, J. (1996), “Helyi hatalmi elit, polgnrmesterek ns Ŕnkormnnyzati kŕpviselők, 1994” (“Local power elite, mayors and councillors, 1994”), in Kurtnn, S., P. Snndor, and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1996* (Political Yearbook 1996), DKMKA, Budapest, Hungary, pp. 485-515.

Bokor, ŗ., ŗ. Jŕttler, and M. Karajannis (1995), “Fejezetek a Szonda Ipsos 1995. nvi kŔzvnlemnykutatsaibgl” (“Chapters from the public opinion surveys run by Sonda Ipsos in 1995”), in Kurtnn, S., P. Snndor, and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1995* (Political Yearbook 1995), DKMKA, Budapest, Hungary, pp. 532-567.

Bondnr, ŗ. and I. ŗkes (1995), *Egészségbiztosítás alulnézetben* (Health insurance from below), OEP, Budapest, Hungary.

Bruszt, L. and J. Simon (1991), “A ‘vnlasztások nve’ a kŔzvnlemny-kutatások tŕkrben” (“The ‘Year of elections’ as reflected in public opinion polls”), in Kurtnn, S., P. Snndor, and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1991* (Political Yearbook 1991), Ŕkongmia Alapŕtvny, Budapest, Hungary, pp. 607-647.

Csontos, L., J. Kornai, and I. Gy. Tqth (1996), “Az nllampolgnr, az adgk ns a jglnti rendszer reformja” (“Citizens, taxes and the reform of the welfare system”), *Századvég*, No. 4, Budapest, Hungary, pp. 1-28.

Fischer, ŗ. et al. (1992), “ŕtŕpŕtás alatt” (“Under reconstruction”), *MHB — Századvég*, Sonda Ipsos, Budapest, Hungary.

Gyekiczki, A. et al. (1991), *Hol tart a szabad gondolat* (Where does libertarian thinking stand now?); Politikai Tanulmányok Intnzete, Budapest, Hungary.

Hann, E. et al. (1994), “A politikai kŔzvnlemny a Medi nn kutatnsainak tŕkrben — 1991-1994”

(“Political public opinion as reflected in surveys run by Medinn — 1991-1994”), in Kurtnn, S., P. Snndor, and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1994* (Political Yearbook 1994), DKMKA, Budapest, Hungary, pp. 719-757.

Horvnth, ŗ. (1995), “TŔrvny ns anarchia avagy tŔrvnyes anarchia: a Szocinlis TŔrvnyrŕl ns az Ŕnkormnnyzati szocinlis rendeletekrŕl” (“Law and anarchy or lawful anarchy: on the Welfare Act and the welfare bylaws”), in Landau, E. et al. (eds.), *Az államtalanítás dilemmái: szociálpolitikai kényszerek és választások* (Dilemmas of de-nationalisation: choices and constraints in social policy), Aktŕv Tnrsadalom Alapŕtvny, Budapest, Hungary, pp. 240-261.

Horvnth, M.T. and G. Pnteri (1993), *Új változatosság* (New Variety), “Helyi demokrcia ns Ojŕtások” Alapŕtvny, Budapest, Hungary.

Horvnth, M.T. and J. Kiss (eds.) (1996), *Aréna és otthon* (Arena and home) (with contributions from Ferencz, Z., J. Kiss, M.T. Horvnth, L. Knkai and G. Pnteri), PTI, Budapest, Hungary.

Kurtnn, S., P. Snndor, and L. Vass (eds.) (1996), *Politikai Évkönyv 1996* (Political Yearbook 1996) (with contributions from Marketing Centrum, Marinn, B., Medinn, Hann, E., Modus, Lengyel, E. et al. and Sonda Ipsos, Bokor, ŗ. et al. on public opinion surveys of 1995), DKMKA, Budapest, Hungary.

Kurtnn, S., P. Snndor, and L. Vass (eds.) (1997), *Politikai Évkönyv 1997* (Political Yearbook 1997) (with

contributions from Marketing Centrum, Marinn, B., Modus, Lengyel, E. et al., and Sonda Ipsos, Csepeli, Gy., Zvecz, T. and Cs. Szabó et al. on public opinion surveys of 1996), DKMKA, Budapest, Hungary.

Linzner, G. et al. (1992), "A politikai közvélemény a Médinn kutatásainak tükrében" ("Political public opinion as reflected in Médinn polls"), in Kurtann, S., P. Sándor, and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1992* (Political Yearbook 1992), DKMKA, Budapest, Hungary, pp. 575-604.

Losonczi, P. (1997), *Utak és korlátok az egészségügyben* (Paths and barriers in health care), MTA SZI, Budapest, Hungary.

Orosz, J. (1992), *Egészségügyi rendszerek és reformtörekvések* (Health care systems and attempts to reform them), PTI, Budapest, Hungary.

Orosz, J. (1995), *Átalakulás az egészségügyben: Az önkormányzati kórházak helyzete, alkalmazkodási törekvései és privatizációs lépései* (Restructuring health care: the current situation of hospitals under local administration and their attempts for adaptation and privatisation), Aktív Társadalom Alapítvány, Budapest, Hungary.

Rabner, F. (1991), "Nyílt levél" ("Public Letter"), in Kurtann, S., P. Sándor, and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1991* (Political Yearbook 1991), Újkelet Alapítvány, Budapest, Hungary, pp. 672-675.

Simon, J. (1996), "Politika alulnézetből, avagy hogyan politizálnak a munkanélüliek?" ("Politics from below: how do the unemployed participate in politics?"), in Kurtann, S., P. Sándor, and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1996* (Political Yearbook 1996), DKMKA, Budapest, Hungary, pp. 653-665.

Sonda Ipsos "Közvéleménykutatási jelentések" ("Reports of Public Opinion Surveys") (1992), in Kurtann, S., P. Sándor, and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1992* (Political Yearbook 1992), DKMKA, Budapest, Hungary, pp. 620-671.

Szalai, J. (1986), *Az egészségügy betegségei* (Diseases of health care), KJK, Budapest, Hungary.

Szalai, J. (1995), *A helyi önkormányzatok szociálpolitikájáról* (Social policy of the local governments), in Landau, E. et al. (eds.), *Az államtalanítás dilemmái: szociálpolitikai kényszerek és választások* (Dilemmas of de-nationalisation: choices and constraints in social policy), Aktív Társadalom Alapítvány, Budapest, Hungary, pp. 240-261.

Szalai, E. (1996), *Az elitek átváltozása* (Elites in transformation), Cserepfalvi, Budapest, Hungary, 1996.

Tóth, Z. "Az 1994. évi választások igazgatási és informatikai tapasztalatai" ("Some lessons of the 1994 elections for public administration"); Tóth, Z. "Az 1994. évi választások igazgatási és informatikai tapasztalatai" ("Some lessons of the 1994 elections for public administration"), in Kurtann, S., Sándor, P. and L. Vass (eds.), *Politikai Évkönyv 1995* (Political Yearbook 1995), pp. 435-455; DKMKA, Budapest, Hungary, 1995.

Vajda, P. *Mikrohitelezési pályázó vállalkozók, 1992-1995* ("Entrepreneurs applying for loans in the 'micro-loan' programme, 1992-1995"); MVA, Budapest, Hungary, 1996.

Vajda, P. "Alapítványok, egyesületek és kormányzati intézmények" ("Foundations, associations and governmental institutions"), in Landau, E. et al. (eds.), *Az államtalanítás dilemmái: szociálpolitikai kényszerek és választások* (Dilemmas of de-nationalisation: choices and constraints in social policy), pp. 127-157; Aktív Társadalom Alapítvány, Budapest, Hungary, 1995.

Չավելված՝ Խոշոր հասարակական հարցումներ կատարող կենտրոնների հասցեները

Marketing Centrum Orszngos Piackutatg Kft.

Nagymezi utca 21.

H-1065, Budapest

Tel. (361) 1531 366; Fax (361) 3316 343

Medinn KՓzvlemmy- ns Piackutatg Intnzet

Seregnly utca 21.

H-1034, Budapest

Tel. (361) 2504 334; Fax (361) 2504 346

Modus Gazdasngi ns Tnrsadalmi Marketing Tanncsadg Kft.

Sznp utca 2.

H-1053, Budapest

Tel. (361) 1174 449; Fax (361) 1173 240

Szonda Ipsos Mndia-, KՓzvlemmy- ns Piackutatg Intnzet

Attila Ot 93.

H-1012, Budapest

Tel. (361) 1568 885; Fax (361) 1753 846

Tnrsadalomkutatnsi Informatikai EgyesՖlns (TըRKI)

Victor Hugo utca 18-22.

H-1132, Budapest

Tel. (361) 1497 531; Fax (361) 1290 470

**Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը Լիտվայի վարչական
բարեփոխումների գործընթացում
Ռասա Ալիսաուսկենե**

1. Ներածություն

Այս աշխատությունը ուսումնասիրում է հասարակական կարծիքի հարցումների դերը հետկոմունիստական Լիտվայում իրականացվող վարչական բարեփոխումների գործընթացում: Վարչակարգի փոփոխման գործընթացը և հասարակական կարծիքի հարցումների արդյունքները և եզրակացությունները վերլուծվել են քաղաքագետների, սոցիոլոգների, տնտեսագետների, լրագրողների և այլ փորձագետների կողմից: 1989թ-ից սկսած մեծ քանակությամբ հարցումներ են անցկացվել Լիտվայում, սակայն շատ քիչ տեղեկատվություն է տպագրվել քաղաքականության մշակման գործընթացում հարցումներից ստացված արդյունքների արդյունավետ կիրառման մասին:

Հետկոմունիստական շրջանում հասարակական կարծիքի հարցումները դարձել էին Լիտվայի սոցիալական կյանքի անբաժանելի մասը: Ցանկացած հասարակական կարծիքի հարցումներից ստացված արդյունքների տպագրությունը համարվում էր լուրջ իրադարձություն և ակտիվ քննարկվում էր մամուլի, քաղաքական գործիչների և հասարակության կողմից: Միառժամանակ Լիտվայի հասարակությունը մեծ եռանդով էր մասնակցում հարցումներին: Հարցումներին մասնակցելու մերժումներ գրեթե չկային, քանի որ կարևոր խնդիրների վերաբերյալ կարծիք արտահայտելու հնարավորությունը համարվում է մի նոր երևույթ է, նախկինում չլսված և նույնիսկ վտանգավոր:

Ինը տարի տևող բարեփոխումների շրջանում հասարակական կարծիքի հարցումները արդեն չէին համարվում բացառիկ երևույթ, բացառությամբ այն դեպքերի, երբ ստացված արդյունքները հակասում էին արդեն իսկ ձևավորված կարծրատիպերին: Հասարակության համար հարցումները դարձել էին սովորական և մարդիկ այլևս չէին հետաքրքրված և չէին ցանկանում մասնակցել դրանց: Արդյո՞ք սա նշանակում է, որ այսպես կոչված հեղափոխության սկզբում հասարակական կարծիքը ավելի մեծ ազդեցություն ուներ որոշումների կայացման գործընթացի և բարեփոխումների վրա քան ներկայիս: Արդյո՞ք հասարակական կարծիք ձևավորողները, որոշումներ կայացնողները և հասարակությունը մտահոգված են այս բացահայտված տեղեկատվությամբ:

Ուսումնասիրելով Լիտվայում հասարակական կարծիքի ուսումնասիրությունների պատմությունը, հասարակության համար դրանց կարևորությունը և դրանց արդյունքների կիրառումը կարելի է գտնել վերոնշյալ հարցերի պատասխանները:

2. Վարչական բարեփոխումներ

2.1. Սոցիալական փոփոխությունները Բալթիայում

1991թ-ի օգոստոսից Բալթյան երկրներում իրականացվեցին շատ կարևոր քաղաքական և սոցիալական փոփոխություններ: Այս ամենը իրականացվեց երկրի անկախության ճանաչման ժամանակներին: Ամենակարևոր փոփոխությունների թվում էին նոր քաղաքական մարմինների՝ խորհրդարանի և նախագահի, առաջին անկախ ընտրությունները: 1930-ականներից սկսած քվեարկողները իրենց ընտրությունը կատարում էին մի քանի կուսակցությունների ցանկից: Բացի այդ կատարվեցին կարևոր տնտեսական փոփոխություններ՝ նոր թղթադրամի ներկայացում և փորձնական քայլեր շուկայական տնտեսությանը անցնելու համար: 1990թ-ի մարտի 11-ին Լիտվայի Գերագույն խորհուրդը քվեարկեց Լիտվայի հանրապետության անկախության համար: Անկախության հռչակագրի հետ սկսվեց Լիտվայի նոր հետկոմունիստական շրջանը:

Երկրի պատմության մեջ պետք է նշել երկու կարևոր ժամանակահատվածներ՝ 1989-1991թթ-ը և 1992թ-ից մինձ այժմ: Այս երկու շրջանները շատ կարևոր է երկրի զարգացման գործընթացի և հասարակական կարծիքի հարցումների օգտագործման վերլուծության համար:

1991թ-ի օգոստոսին Մոսկվայի չկայացած հեղաշրջումից հետո Լիտվայում քաղաքական իրավիճակը կտրուկ փոփոխվեց: Այս շրջանը համարվում է լիտվական հասարակական կարծիքի ձևավորման շրջան: Մինչ 1991թ-ի օգոստոսը լիտվական հասարակության կարծիքը ձևավորվում էր միայն քաղաքական հարցերի շուրջ: Քաղաքական խնդիրները գերիշխում էին հասարակության գիտակցության մեջ, մարդիկ համոզված էին, որ միայն պետականության վերահաստատումից հետո կարող են իրականացվել տնտեսական և սոցիալական բարեփոխումները:

Քաղաքական դաշտում ներկայացվել էին երկու հիմնական ուղղություններ (անկախություն կամ Սովետական միության կազմում մնալու ուղղությունները)՝ անկախության ուղղությունը, որին կողմ էին լիտվացիների մեծ մասը (68%-ը) (Ժողովրդական ճակատ (Sajudis շարժում)) և Կոմունիստական կուսակցության (*Jedinstvo*) Սովետական միության կազմում մնալու ուղղությունը, որին աջակցում էին ռուս փոքրամասնությունները (6%): Sajudis-ի պատգամավորները Լիտվայի Գերագույն խորհրդում հայտարարեցին Լիտվական անկախ պետության վերականգման մասին Լիտվայի խորհրդարանի 1990թ-ի մարտի 11-ի առաջին նիստի ժամանակ: Կոմունիստական կուսակցությունը ավարտեց իր գործունեությունը Մոսկվայում չկայացած հեղաշրջումից հետո: Այս ժամանակաշրջանում Լիտվայի ձախ և աջ քաղաքական կուսակցությունների հիմնական

տարբերությունները կայանում էին անկախության ձեռքբերման և տնտեսական բարեփոխումների իրականացման տարբեր ռազմավարությունների մեջ:

2.2. Վարչական բարեփոխում

Լիտվան, ինչպես և այլ նախկին Սովետական Միության երկրները, պետք է գործադրեր կրկնակի ջանքեր իր իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման համար: Ոչ միայն հին իրավական համակարգը պետք է փոփոխվեր, այլ նաև ամբողջ օրենսդրական համակարգը պետք է նորից հիմնադրվեր: Այլ Կենտրոնական Եվրոպայի երկրներ կարող էին կատարել այս բարեփոխումները օգտագործելով անկախ պետություններում առկա համակարգերը (Չեխոսլովակիա, Յունգարիա, Լեհաստան և այլն): Լիտվայի, ինչպես նաև այլ երկու Բալթյան երկրների, օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցվածքները կազմում էին Սովետական համակարգի մի մասը:

Չետևաբար պետական ոլորտի վարչական բարեփոխումները, սկսած 1990թ-ից և մինչ այժմ ընթացող, պետք է լուծեին հետևյալ հարցերը`

- մշակեին անկախ երկրի նոր ինստիտուցիոնալ կառուցվածքը,
- մշակեին օրենսդրական համակարգի հիմնական սկզբունքները,
- ձևափոխեին սովետական համակարգից ժառանգված հաստատությունները,
- հիմնադրեին նոր իրավական և ինստիտուցիոնալ կառուցվածք այն ոլորտների համար, որոնք գտնվում էին սովետական վերահսկողության տակ (Արտաքին քաղաքականություն, պաշտպանություն):

Պետական ոլորտի վարչական բարեփոխումների գործընթացում ձեռնարկվեցին հետևյալ քայլերը`

- 1992թ-ի հոկտեմբերին մշակվեց և ընդունվեց նոր սահմանադրությունը,
- ազգային, տեղական և նախագահական ընտրությունների համար ներկայացվեց ընտրությունների նոր համակարգը,
- հիմնադրվեց և գործում է Սահմանադրական դատարանը,
- 1993թ-ին հիմնադրվեց նախագահի ինստիտուտը և ընտրվեց Լիտվայի նախագահը,
- վերահիմնադրվեց Ազգային խորհրդարանը,
- ներդրվեց բազմակուսակցական համակարգը,
- ինստիտուցիոնալ բարեփոխումները իրականացվում են Ազգային պաշտպանության նախարարության հիմնադրման և այլ նախարարությունների վերակազմավորման ուղղությամբ,

- տարածաշրջանային մակարդակով հիմնադրվեցին տարածաշրջանային իշխանությունները և իրականացվեցին տարածաշրջանային ստորաբաժանումների վարչական բարեփոխումները,
- տեղական մակարդակով վերակազմավորվեցին տեղական ինքնակառավարման մարմինները և դրանց կառավարման համակարգը,
- ընդունվեց մարդկանց իրավունքները և պարտականությունները սահմանող Քաղաքական օրենսգիրքը,
- վերանայվում է օրենսդրությունը Եվրամիության անդամակցությանը թեկնածու երկրների օրենսդրությանը համապատասխանեցնելու խնդիրը

3. Հարցումների պատմությունը

Սովետական շրջանում չեն անցկացվել ազգային նշանակություն ունեցող հարցումներ, որոնց արդյունքները կարող էին հրապարակվել: Սոցիալական հետազոտություններ իրականացվել են կրթական հաստատություններում: Սոցիալական ուսումնասիրությունների հիմնական կենտրոններն էին `Լիտվայի գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը և Վիլնյուսի համալսարանը: Այս հաստատությունների կողմից անցկացվող հետազոտությունները ուսումնասիրում էին արդյունաբերական սոցիոլոգիան, կրթությունը և երիտասարդների խնդիրները: Այս հետազոտությունների արդյունքները օգտագործվում էին արդյունաբերության կամ կրթական հաստատությունների կողմից: Հետազոտությունները ֆինանսավորվում էին կենտրոնական պետական մարմինների կողմից` օրինակ` Գիտության ակադեմիայի:

Մինչ 1990թ-ը գոյություն չունեին հասարակական կարծիքի հարցումներով զբաղվող մասնավոր ընկերություններ: 1987-1989թթ-ին սկսվեց հասարակական կարծիքի հարցումների արագ զարգացման շրջանը: Նոր ազգային քաղաքական առաջնորդները հիմնադրեցին անկախ մամուլը, արտասահմանյան կազմակերպությունները հետաքրքրվեցին նախկին սովետական պետության հասարակական կարծիքի մոնիտորինգով:

1987-1990թթ-ին, ազգային հասարակական կարծիքի ուսումնասիրությունները անցկացվում էին գիտությունների ակադեմիայի և Վիլնյուսի համալսարանի մի շարք հետազոտողների կողմից: Այս խմբերը ստեղծեցին հարցազուգավարների ցանցեր և կրկնօրինակեցին իրենց արտասահմանյան գործընկերների փորձը:

Ավելի ուշ 1991-1992թթ-րին այս ջանքերը և փորձը հիմք ստեղծեցին մասնավոր հասարակական կարծիքի ուսումնասիրմամբ և շուկայական հետազոտություններով զբաղվող ինստիտուտների հիմնադրման համար:

1987թ-ից մինչև 1990թ-ը հասարակական կարծիքի հարցումների մեծ մասը գործ ուներ քաղաքական խնդիրների հետ`

- հասարակության վերաբերմունքը Լիտվայի անկախության հարցին,
- մարդկանց վստահությունը սոցիալական ինստիտուտների և նոր քաղաքական ուժերի նկատմամբ,
- հասարակության վերաբերմունքը արտասահմանյան երկրների կողմից Լիտվային ցուցաբերվող աջակցության վերաբերյալ,
- ընտրազանգվածի վարքագիծը և մոտիվացիան:

Այս հարցումների հիմնական հովանավորներն էին` ազգային անկախ մամուլը, նոր քաղաքական կուսակցությունները, կենտրոնական և տեղական կառավարությունները, միջազգային կազմակերպությունները` ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալությունը, արտասահմանյան մամուլը, Ամերիկայի ձայնը, ամերիկյան և եվրոպական համալսարանները:

Հետկոմունիստական հարցումների պատմության մյուս ժամանակաշրջանը սկսվեց 1992թ-ին և շարունակվում է մինչ այժմ: Այս ժամանակաշրջանի հիմնական առանձնահատկություններն էին`

- Լիտվայի քաղաքական մթնոլորտի փոփոխությունը և հասարակության վարքագիծը,
- հետազոտություններով զբաղվող մասնավոր կազմակերպությունների հիմնադրումը:

1992թ-ին Լիտվայում հիմնադրվեցին երկու խոշոր հասարակական կարծիքի և շուկայական հետազոտություններով զբաղվող ընկերություններ`

- Baltic Surveys
- Vilmorus

Երկուսն էլ Շուկայական հետազոտությունների և կարծիքի եվրոպական հասարակության անդամներն էին: Baltic Surveys-ը հիմնադրվել էր Վիլնյուսի համալսարանի հետազոտական խմբի հիման վրա: Այն կազմել էր համատեղ ձեռնարկություն Gallup կազմակերպության հետ: Vilmorus-ը հիմնադրվել էր օգտագործելով Լիտվայի գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի փորձը: Միառժամանակ հիմնադրվել էին նաև մասնավոր խորհրդատվական գործակալություններ, որոնք նույնպես անցկացնում էին հասարակական կարծիքի հարցումներ:

1994-1995թթ-ին մի քանի նոր մասնավոր ընկերություններ հիմնադրվեցին, որոնք զբաղվում էին մեծ մասամբ շուկայի ուսումնասիրություններով: Այս խմբի Megapolis, Social Information centre, Fund Sociology ընկերությունները անցկացնում էին նաև հասարակական կարծիքի ուսումնասիրություններ: Թեմաները մեծ մասամբ վերաբերում էին սոցիալական խնդիրներին և

կրթությանը: 1992թ-ից սկսած հասարակական կարծիքի հարցումների մոտ 90%-ը անցկացվում է մասնավոր կազմակերպությունների կողմից:

Մինչ 1992թ-ը այս հարցումների հիմնական հովանավորներն էին Լիտվայի կենտրոնական իշխանությունները, տեղական և արտասահմանյան մամուլը և միջազգային կազմակերպությունները: 1992թ-ից հետո հիմնական հովանավորներն էին Լիտվայի մամուլը և արտասահմանյան կազմակերպությունները:

1991թ-ից սկսած Լիտվան մասնակցում է տարեկան Կենտրոնական և Արևելյան Եվրոբարոմետր ծրագրին (հարցումը անցկացվել է Baltic Surveys-ի կողմից 1991-1997թթ-ին): Այս հարցումը ուսումնասիրում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բնակիչների կարծիքների փոփոխությունները և ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից: 1990թ-ից այն ամեն տարի անցկացվում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում սկսած:

Սկսած 1992թ-ից Բալթյան բարոմետր հարցումը պարբերաբար անցկացվում էր Vilmorus-ի կողմից: Այս հարցումը նույնպես ուսումնասիրում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բնակիչների կարծիքների փոփոխությունները և ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից: Սակայն այս ուսումնասիրությունները ուղղված են ավելի շատ տնտեսական քան քաղաքական խնդիրներին:

1990-1996թթ-ին հասարակական կարծիքի հարցումների հիմնական հովանավորներն էին Եվրոպական հանձնաժողովը, ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալությունը, Ազատ Եվրոպա ռադիոն, Ազատություն ռադիոյի հետազոտությունների ինստիտուտը, Համաշխարհային բանկը, ամերիկյան և բրիտանական համալսարանները, Լիտվայի խորհրդարանը, կառավարությունը և Լիտվայի մամուլը:

Միջինում 1990-1996թթ-ին տարեկան անցկացվում էր մոտ 50 հարցում, որոնք տարբերվում էին ուսումնասիրվող թեմաներով, թիրախային խմբերով և ծավալով: Հաշվի առնելով Լիտվայում հասարակական կարծիքի հարցումների ոլորտի ակտիվ զարգացումը, կարելի էր ենթադրել, որ իշխանությունները լավ տեղեկացված են և վարժ կերպով օգտագործում են ստացված տվյալները: Սակայն ընդհանուր պատկերը այդքան էլ պարզ չէր: Ինչպես և այլ Կենտրոնական Եվրոպայի երկրներում, իշխանությունների վերաբերմունքը հասարակական կարծիքի հարցումներին վիճահարույց էր: Այդ վերաբերմունքը կախված էր ստացված տվյալներից: Բացասական արդյունքների դեպքում վերաբերմունքը ավելի շատ պաշտպանողական էր և տվյալ ուսումնասիրությունը անցկացնող հաստատությանը դեմ էր ուղղված: Սակայն եթե արդյունքները դրական էին, ապա վերաբերմունքը դրական էր:

Տեղական մամուլի դերը հարցումների պատվիրման և ստացված տվյալների հրապարակման մեջ նույնպես չպետք է թերագնահատվի: Մամուլը ապահովում է մեթոդաբանության վերահսկողությունը, հասարակության իրազեկվածությունը: Այն հասարակության ուշադրությունն է հրավիրում երկրի ամենահրատապ խնդիրների վրա: Հրապարակելով հասարակական կարծիքի հարցումներից ստացված տվյալները բարեփոխումների գնահատման վերաբերյալ, մամուլը որոշումներ կայացնողների ուշադրությունն է հրավիրում ուսումնասիրված թեմաների և բացահայտված խնդիրների շուրջ:

Քաղաքական տրամադրությունները Լիտվայում

Բնակչության տրամադրությունների փոփոխությունները բացահայտվել են սոցիալական հետազոտության միջոցով: Լիտվացիների տրամադրությունները վերջին յոթ տարիներին տեղի ունեցող սոցիալական փոփոխությունների ընթացքում (1989-1996 թթ.) կարող են ներկայացվել, որպես մտահոգության և վախի տրամադրություններ ապագայի նկատմամբ, ինչպես նաև մարդկանց տնտեսական վիճակի վատթարացմամբ: Լիտվացիները չափազանց դժգոհ էին երկրի տնտեսական իրավիճակից: Արտահայտվելով կողմ ազատ շուկային կամ խառը տնտեսությանը, նրանք ցանկանում էին տեսնել արագ փոփոխություններ: 1997թ-ի սկզբին Լիտվայում հասարակության տրամադրությունները դարձան ավելի լավատես, հատկապես տնտեսական բարեփոխումների և ֆինանսական իրավիճակի վերաբերյալ (տես Stimson 1991թ.):

Լիտվայի անկախ պետության միջազգային ճանաչումից հետո տնտեսական և քաղաքական փոփոխությունների համատեքստում նորից վերանայվեց «Ժողովրդավարությունը առաջին տեղում, տնտեսությունը՝ երկրորդ» քաղաքականությունը: Քայքայման և հեղափոխության պայմաններում, ժողովրդավարությունը համարվում էր ազատության և բարեկեցիկ կյանքի երաշխավորող: Հեղափոխությունից հետո առաջ քաշվող ամենակարևոր խնդիրներից էին կարգուկանոնի պահպանումը և տնտեսական խնդիրների լուծումը:

Բարեփոխումների իրականացումից մի քանի տարիներ անց լիտվացիները պետք է դիմակայեին սոցիալական և տնտեսական դժվարություններին, անցնելով քաղաքական խնդիրներից տնտեսական խնդիրներին:

Առաջնահերթ խնդիրներից էին՝ մարդկանց կենսամակարդակը, թոշակները, ինֆլյացիան և հանցագործությունը: Լիտվացիները գնալով դառնում էին ավելի խելամիտ իրենց դատողություններում բարեփոխումների ուղղությունների և դրանց իրականացման տեմպի վերաբերյալ:

4. Պետական կառավարման հաստատությունների, կառավարության և կառավարման ոլորտի գործողության և դրանց ճանաչման մոնիտորինգ

4.1. Տնտեսական, քաղաքական և սոցիալական ինստիտուտներ

Լիտվայի հետկոմունիստական ժամանակաշրջանից սկսած քաղաքական և տնտեսական ինստիտուտներում հասարակության վստահության մոնիտորինգը անցկացվել է Baltic Surveys-ի և Vilmorus-ի կողմից:

1989-1992թթ-ին Վիլմորուսի համալսարանի սոցիոլոգիական լաբորատորիան կատարեց հասարակության վստահության գնահատում սոցիալական հաստատություններում: Գնահատումները կատարվում էին եռամսյակային կտրվածքով, իսկ սկսած 1992թ-ից՝ ամսական երկու անգամ:

1992թ-ից սկսած Baltic Surveys-ի կողմից անցկացվում էր հասարակության կարծիքի մոնիտորինգը պետական հաստատությունների աշխատանքի վերաբերյալ: Գնահատվում էին հասարակության վստահությունը խորհրդարանի, նախագահի, կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, ազգային բանակի, ոստիկանության, դատարանների, կենտրոնական բանկի, մամուլի և եկեղեցու նկատմամբ: Այս հարցումները ֆինանսավորվում էին «Respublika» ազգային թերթի կողմից: Արդյունքները տպագրվում էին ամսական կտրվածքով:

1992թ-ից տարին մի քանի անգամ Vilmorus-ը կատարում էր հասարակության վստահության գնահատում: Այս ուսումնասիրությունները հովանավորվում էին քաղաքական կուսակցությունների, մամուլի և միջազգային կազմակերպությունների կողմից:

Հասարակության վստահության մոնիտորինգը սոցիալական հաստատություններում

Լիտվական բարոմետրը անցկացվում էր Baltic Surveys-ի կողմից սկսած 1992թ-ից: 1993թ-ից հասարակության վստահությունը գնահատվում էր ամիսը մեկ անգամ: Գնահատվում էր հասարակության վստահությունը հաստատությունների, քաղաքական գործիչների և քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Ուսումնասիրությունները ֆինանսավորվում էին «Respublika» ազգային թերթի կողմից, արդյունքները տպագրվում էին ամեն ամիս: Ընտրանքը կազմված էր 15-74 տարեկան 1000 հարցվողներից, տվյալները հավաքագրվում էին հարցազրույցների միջոցով:

Արդյունքները ցույց տվեցին, որ վերջին վեց տարիների ընթացքում միայն զանգվածային լրատվամիջոցներն են արժանացել հասարակության վստահության աճին: 1997թ-ի վերջերին լիտվացիների 70%-ից ավելին վստահում էին լիտվական զանգվածային լրատվամիջոցներին:

Երկրորդը նշվել էր եկեղեցին (55%): Մնացած հաստատությունները՝ խորհրդարանը,

նախագահի աշխատակազմը, կենտրոնական և տեղական կառավարությունները, ազգային պաշտպանությունը, ոստիկանությունը, դատարանները, կենտրոնական բանկը կորցրել էին իրենց քաղաքական իմիջը:

Ստացված տվյալները օգտագործվել էին կառավարության, նախարարությունների և մանուլի կողմից: Այս տվյալները բազմիցս մեջ են բերվել քաղաքական գործիչների և պետական կառավարման ներկայացուցիչների կողմից Լիտվայի ժողովրդավարական հասարակության զարգացման գործընթացը վերլուծելիս:

4.2. Կառավարություն, պետական ոլորտ և պետական կառավարում

Կառավարության և պետական կառավարման վարկանիշերը շատ հաճախ են գնահատվում սոցիալական հաստատությունների նկատմամբ մարդկանց վստահության ցուցանիշը պարզելու հետ մեկտեղ: Այս հարցումները թույլ են տվել պարզել հետևյալ միտումը՝ մարդկանց վստահությունը կառավարության նկատմամբ նվազում է: Ազգային ընտրությունների ժամանակ Լիտվայում նկատվում է կառավարության վարկանիշի կտրուկ անկում, ընտրություններից հետո մարդկանց ակնկալիքները նորից աճում են և կառավարության վարկանիշը նորից աճում է, մնալով անփոփոխ մի քանի ամիս:

Մի այլ տիպի ուսումնասիրություններ են իրականացվել, գնահատելու կառավարության գործունեությունը, պետական կառավարումը և պետական սեկտորը, որոնք պատվիրվել են կառավարության, նախարարությունների և միջազգային կազմակերպությունների կողմից:

1992-1993թթ-ին և 1995թ-ի վերջում Baltic Surveys-ի կողմից կատարվել է պետական կառավարման և կառավարության գործունեության վերաբերյալ հասարակության կողմից տրված գնահատականների մոնիտորինգ: Արդյունքները օգտագործվել են կառավարության կողմից և չեն հրապարակվել:

1997թ-ի փետրվարին և մարտին կառավարության պատվերով Vilmorus-ի կողմից կատարվել են մի քանի ուսումնասիրություններ: Այս ուսումնասիրությունների արդյունքում գնահատվել էր հասարակության վերաբերմունքը կառավարության կողմից ձեռնարկված բարեփոխումների վերաբերյալ: Այս դեպքում էլ շատ քիչ տեղեկատվություն էր հրապարակվել, սակայն կառավարությունը օգտագործել էր ստացված տվյալները հասարակության իրազեկման քարոզարշավի ընթացքում, բացատրելով այն միջոցառումները, որոնք հասարակության մտահոգություններն էին առաջացրել:

Երկու դեպքերում էլ ուսումնասիրությունները ֆինանսավորվում էին կառավարության կողմից, որն էլ հանդիսանում էր ստացված տեղեկատվության օրինական օգտագործողը:

5.Քաղաքականության առաջնահերթ խնդիրները

1992թ-ից անցկացվել են մի շարք հարցումներ Լիտվայի էլիտայի շրջանակներում: 1993թ-ի սեպտեմբերին Baltic Surveys-ի կողմից կատարվել է Լիտվայի քաղաքական գործիչների, պետական և մասնավոր ընկերությունների ղեկավարների և մամուլի ղեկավարների հարցում: Հարցմանը մասնակցել են 136 մարդ: Նույն հարցերի ցանկը ուղղվել է նաև հասարակությանը: Ստացված արդյունքները թույլ են տվել համեմատել հասարակության և էլիտայի կարծիքները երկրի զարգացման միտումների, տնտեսական բարեփոխումների, տնտեսական միջավայրի փոփոխությունների և սոցիալական հաստատությունների նկատմամբ մարդկանց ունեցած վստահության վերաբերյալ:

Էլիտայի ներկայացուցիչների 88%-ը և հասարակության 62%-ը կողմ էին ազատ շուկայական տնտեսությանը: Երկրի տնտեսական վիճակը վերլուծելիս էլիտան ավելի հոռետեսական էր տրամադրված քան հասարակությունը: Լիտվայի էլիտայի վստահության ցուցանիշը բոլոր հաստատությունների նկատմամբ, բացառությամբ կառավարության և արդարադատության դատարանների, ավելի ցածր էր քան հասարակության վստահության ցուցանիշը:

Մի այլ ուսումնասիրություն, որում մասնակցել էին Լիտվայի էլիտայի ներկայացուցիչները, անցկացվել էր Նորվեգիայի հետազոտությունների խորհրդի կողմից: Այն առնչվում էր Բալթյան խորհրդարաններին: 1992թ-ին Լիտվայի խորհրդարանի անդամների 90%-ը մասնակցել էր Baltic Surveys-ի կողմից անցկացվող հարցմանը, որը ուսումնասիրում էր քաղաքական գործիչների արժեքները, դիրքորոշումները և կարծիքները: Արդյունքում պարզվել է, որ Լիտվայի քաղաքական գործիչների համոզմամբ երկրի ամենակարևոր խնդիրներն են տնտեսական բարեփոխումները և ազգային անվտանգության ուժեղացումը:

Երկրորդ ուսումնասիրությունը, որը անցկացվել էր Baltic Surveys-ի կողմից 1993թ-ին կրկնվել էր 1997թ-ին, ընդգրկելով քաղաքական, վարչական, բիզնեսի, մամուլի և մտավոր էլիտայի 300 ներկայացուցիչների:

Երկու ուսումնասիրություններն էլ ֆինանսավորվել են արտասահմանյան կազմակերպությունների կողմից, ստացված տվյալները չեն տպագրվել մամուլում և չեն հրապարակվել Լիտվայում: Եզրակացությունները ներկայացվել են Լիտվայի քաղաքական գործիչներին:

6. Եվրամիության ինտեգրման վերաբերյալ տեսակետները

1991թ-ից սկսած Կենտրոնական և Արևելյան Եվրոբարոմետր հարցումը ամեն տարի անցկացվում է Լիտվայում Baltic Surveys-ի կողմից Եվրոպական հանձնաժողովի պատվերով: Այս հարցման նպատակն է ուսումնասիրել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բնակիչների կարծիքը Եվրամիության, միջազգային հարաբերությունների և Լիտվայի զարգացման վերաբերյալ: Այս հարցմանը մասնակցել են 15 տարեկանից բարձր տարիք ունեցող բնակիչները:

Սեփականաշնորհումը Լիտվայում և Էլիտայի և հասարակության կողմից նշված առաջնահերթ խնդիրները

Այս ծրագիրը ուսումնասիրում է հասարակության և Էլիտայի կարծիքները սեփականաշնորհման գործընթացի վերաբերյալ: Ծրագիրը ֆինանսավորվել է Phare Programme-ի կողմից: Հարցումը անցկացվել է 1998թ-ի հունվարին Baltic Surveys-ի կողմից: Ընտրանքը կազմված էր 15-74 տարեկան 1007 հարցվողներից: Տվյալները հավաքագրվել են հարցազրույցների միջոցով: Հարցմանը մասնակցել են 103 քաղաքական, վարչական և մամուլի Էլիտայի ներկայացուցիչներ:

Հասարակության 34%-ը և Էլիտայի 74%-ը կողմ էին խոշոր ձեռնարկությունների վաճառքին արտասահմանյան ընկերություններին, իսկ հասարակության 52%-ը և Էլիտայի 14%-ը՝ դեմ: Լիտվական հասարակությունը պատրաստ էր փոխել իր բացասական կարծիքը միայն այն դեպքում, եթե արտասահմանցիներին վաճառված ընկերություններում կստեղծվեն նոր աշխատատեղեր տեղացիների համար: Միայն այս պայմանով Լիտվացիների 68%-ը կողմ կլինի խոշոր ձեռնարկությունների վաճառքին արտասահմանյան ընկերություններին:

Լիտվական Էլիտայի մեծ մասը կարծում էր, որ պետությունը պետք է հանդես գա որպես երկաթուղու և էներգետիկայի ոլորտի ձեռնարկությունների սեփականատեր: Այլ ոլորտներում թույլատրելի է պետական և մասնավոր սեփականությունների միաձուլումը (առողջապահություն, զանգվածային լրատվամիջոցներ, բանկային համակարգ) կամ միայն մասնավոր սեփականության գերիշխումը (թեթև արդյունաբերություն, ծանր արդյունաբերություն, գյուղատնտեսություն):

Հասարակության մեծ մասը նշել էր մասնավոր սեփականության համար հարմար ոլորտների ցանկում հանրային սնունդը, մանրածախ առևտուրը և գյուղատնտեսությունը: Երկաթուղին, էներգետիկայի համակարգը, հեռահաղորդակցությունը, ավիաուղիները և նավթի վերամշակման ձեռնարկությունները պետք է գտնվեն պետության վերահսկման տակ:

Այս հարցման արդյունքները օգտագործվել են Լիտվայի իշխանությունների կողմից հասարակության իրազեկման քարոզարշավի ժամանակ մարդկանց սեփականաշնորհման վերաբերյալ պետության քաղաքականությունը բացատրելու համար:

1996թ-ին Կենտրոնական և Արևելյան Եվրոբարոմետր հարցմանը մասնակցեցին էլիտայի 150 ներկայացուցիչ: Հարցազրույցների միջոցով ուսումնասիրվել էր էլիտայի կարծիքը Լիտվայի Եվրամիությանը և ՆԱՏՕ-յին անդամակցելու վերաբերյալ: Նույն հարցերը տրվել էին հասարակությանը: Համաձայն ստացված արդյունքների երկրի քաղաքական էլիտան շատ է կարևորում Լիտվայի անդամակցությունը Եվրամիությանը և ՆԱՏՕ-յին, մինչ դեռ հասարակությունը չունի հստակ կարծիք այս հարցի շուրջ: Ստացված արդյունքները տպագրվել էին:

Լիտվայի քաղաքական գործիչները քննադատել են ստացված տվյալները: Լիտվացիների 70%-ը մտահոգություններ էին արտահայտել երկրում մարդու իրավունքների պաշտպանման վերաբերյալ: Համեմատած մյուս հարևան երկրների հետ Լիտվայի այս ցուցանիշը ավելի բարձր էր, որի պատճառով Լիտվան հայտնվեց ոչ այդքան էլ շահական դիրքում:

Հարցման արդյունքները առաջացրեցին քաղաքական թեժ քննարկումներ և բացահայտեցին քաղաքական գործիչների և հասարակության տարբեր մոտեցումները մարդու իրավունքների խնդրին:

1996թ-ի նոյեմբերի հարցումը ցույց տվեց, որ Լիտվայի հասարակությունը վատ է իրազեկված Եվրամիությանը անդամակցելու հնարավոր հետևանքների և Եվրամիության քաղաքականությունների և կառուցվածքի վերաբերյալ: Հենց այս պատճառով Լիտվայի իշխանությունները նախաձեռնեցին հասարակության իրազեկման քարոզարշավ:

7. Հասարակական կարծիքի հարցումների օգտագործումը քաղաքական ցիկլում

7.1. Քաղաքականության ընդունումը

1990-1991թթ-րին Լիտվայի գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի կողմից անցկացվեց 6 ուսումնասիրություն: Ընտրանքը կազմված էր 1000 հարցվողներից, տվյալները հավաքագրվել էին հարցազրույցների միջոցով: Ուսումնասիրվել էր հասարակության վերաբերմունքը մանրածախ առևտրի համակարգի բարեփոխումների, Լիտվայում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունների, սոցիալական ապահովության, կրթության, առողջապահության նկատմամբ: Ստացված արդյունքները ներկայացվել են

կառավարությանը: Պարզվել էր, որ ոչ միայն թոշակառուները, այլ նաև երիտասարդ ընտանիքները և ուսանողները հայտնվել են ծանր տնտեսական վիճակում:

1991թ-ին Վիլնյուսի համալսարանի սոցիոլոգիական լաբորատորիայի կողմից անցկացվեց մի հարցում, որի նպատակն էր ուսումնասիրել վարչապետի կաբինետի կողմից իրականացված բարեփոխումները: Հարցմանը մասնակցել էին վարչապետի կաբինետի անդամները և այդ կաբինետի քաղծառայողները: Ուսումնասիրությունը ֆինանսավորվել է կառավարության կողմից: Ստացված արդյունքները օգտագործվել են բարեփոխումների մշակման գործընթացում:

1990-1991թթ-րին Վիլնյուսի համալսարանի սոցիոլոգիական լաբորատորիան անցկացրեց մի շարք հետազոտություններ Ազգային պաշտպանության վարչության ֆինանսավորմամբ, որի նպատակն էր ուսումնասիրել հասարակության և պաշտոնյաների դիրքորոշումները ազգային զինված ուժերի և պաշտպանության նախարարության ստեղծման և դրանց կառուցվածքի վերաբերյալ: Ստացված արդյունքները օգտագործվել են համապատասխան նախարարության կողմից:

Ներքին գործերի նախարարությունը նույնպես անցկացրել էր մի շարք հարցումներ՝ ոստիկանության իմիջը և աշխատակիցների գոհունակության աստիճանը գնահատելու նպատակով:

Baltic Surveys-ը անցկացրել է մի շարք հարցումներ մարդկանց դիրքորոշումները և նախասիրությունները առողջապահության ոլորտի (1992, 1994, 1995), սոցիալական ապահովության համակարգի (1995) և աշխատուժի շուկայի (1994-1995) բարեփոխումների վերաբերյալ ուսումնասիրելու նպատակով: Ստացված արդյունքները և եզրակացությունները օգտագործվել են այդ ուսումնասիրությունը պատվիրող հաստատությունների կողմից:

1995թ-ին Vilmorus-ի կողմից անցկացվեց առողջապահության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ հասարակության դիրքորոշումների ուսումնասիրություն: Ընտրանքը կազմված էր 1000 հարցվողներից: Ստացված արդյունքները օգտագործվել են առողջապահության նախարարության կողմից համապատասխան բարեփոխումների մշակման գործում: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ լիտվացիների մեծ մասը դժգոհ են առողջապահության համակարգի կառուցվածքից և գյուղական վայրերում գտնվող բժշկական հաստատությունների անարդյունավետ աշխատանքից:

7.2. Քաղաքականության կիրառումը

1994թ-ին Baltic Surveys-ի կողմից անցկացվեց մի ուսումնասիրություն, որը ֆինանսավորվում էր ՄԱԶԾ-ի կողմից: Հարցմանը մասնակցեցին բոլոր նախարարությունների նախարարները և փոխնախարարները, ինչպես նաև Լիտվայի հասարակությունը: Այս ուսումնասիրությունը ցույց

տվեց, թե ինչպես ուսումնասիրությունները կարող են կիրառվել բարեփոխումների իրականացումից առաջ, դրանց ընդհանուր համատեքստը և առաջնահերթ խնդիրները ուսումնասիրելու համար:

7.3. Քաղաքականության գնահատումը

Պետական կառավարման ոլորտի բարեփոխումների վերաբերյալ այս աշխատությունում նշված հարցումը բարեփոխումների գործընթացում հասարակական կարծիքի ուսումնասիրությունների օգտագործման օրինակներից մեկն է: Նման ուսումնասիրություններ ֆինանսավորվել են կառավարության կողմից 1992 և 1995թթ-ին: 1995թ-ին Baltic Surveys-ը անցկացրեց հասարակության կարծիքի մոնիտորինգ վարչապետի կաբինետի և բանկային համակարգի ճգնաժամի վերաբերյալ: Յուրաքանչյուր շաբաթ հարցմանը մասնակցում էին 200 քաղաքացի: Տվյալները հավաքագրվում էին հեռախոսային հարցազրույցների միջոցով: Յուրաքանչյուր շաբաթվա ցուցանիշները որոշվում էին վարչապետի կաբինետի պաշտոնյաների և հետազոտողների կողմից: Տվյալները փոխանցվում էին վարչապետի կաբինետին հետագա քննարկումների համար: Նման մոնիտորինգի միջոցով կարելի է տեղականալ հասարակության արձագանքների մասին այս կամ այն իրականացվող բարեփոխումի վերաբերյալ և ժամանակին կատարել համապատասխան փոփոխություններ թե բարեփոխումների գործընթացում, թե հասարակության իրազեկման քարոզարշավների ծրագրում: Սակայն նման ուսումնասիրությունների կատարումը պահանջում է մեծ ֆինանսական միջոցներ:

Աղյուսակ 3 Պետական կառավարման ոլորտի բարեփոխումների ուսումնասիրություն

Ուսումնասիրության նպատակն է պարզել պետական կառավարման ոլորտի առաջնորդների կարծիքը և դիրքորոշումները Լիտվայի պետական կառավարման ոլորտի բարեփոխումների և քաղաքացիների մասնագիտական վերապատրաստման վերաբերյալ:

Բոլոր նախարարները և փոխնախարարները մասնակցեցին Baltic Surveys-ի կողմից անցկացված հարցազրույցներին:

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվեցին պետական կառավարման ոլորտի բարեփոխումների հետ կապված հետևյալ խնդիրները`

- բարձր որակավորում ունեցող մասնագետների պակասը,
- ամենօրյա վարչական աշխատանքների մեծ ծավալները,
- անարդյունավետ ներքին, հորիզոնական և ուղղաձիգ հաղորդակցությունը,

Պետական կառավարման ոլորտի առաջնորդների կարծիքի համաձայն բացահայտված խնդիրները դժվար կլինի լուծել ներկայիս ժամր տնտեսական վիճակի պայմաններում:

Այնուամենայնիվ հարցվողների կողմից ներկայացվել են պետական ոլորտի հաստատությունների աշխատանքը բարելավող մի քանի հնարավոր միջոցներ՝

- ստեղծել տեղեկատվության փոխանակման ցանց նախարարությունների, վարչապետի կաբինետի և խորհրդարանի միջև,
- բարելավել պետական կառավարման ոլորտի ծառայողների կրթական համակարգը,
- ներկայացնել քաղծառայողների պարտականությունները և իրավունքները սահմանող Քաղծառայության օրենքը:

Հարցվողների մեծամասնության կողմից նշվել էր նաև քաղծառայողների վերաբերյալ հասարակության կողմից ունեցած բացասական կարծիքը և առաջարկվել ներկայացնել հասարակությանը քաղծառայողների գործունեության ոչ միայն բացասական, այլ նաև դրական կողմերը: Նման բացասական վերաբերմունքը դժվարեցնում է որակյալ մասնագետների ներգրավումը պետական հիմնարկներ: Նման իրավիճակը կարող է սպառնալ անկախ պետության կայունությանը:

Միառժամանակ նույն թեմայով կատարվել է նաև հասարակության հարցումը: Ընտրանքը կազմված էր 15 տարեկանից բարձր տարիք ունեցող 1000 հարցվողներից: Ուսումնասիրվել էին լիտվացիների կարծիքը պետական կառավարման ոլորտի աշխատողների մասին, մարդկանց քաղծառայողների հետ ունեցած աշխատանքի կամ շփման փորձը և դժգոհությունները: Համաձայն ստացված տվյալների հասարակության 40%-ը ունեին դրական կարծիք, իսկ 50%-ը՝ բացասական:

Լիտվայի ներդրումների հետ կապված միջավայրի ուսումնասիրությունը

Ուսումնասիրության նպատակն էր պարզել արտասահմանյան ներդրողների կարծիքը Լիտվայի քաղաքական, օրենսդրական և տնտեսական միջավայրի, դրանց հիմնական խնդիրների և այդ խնդիրների լուծման միջոցների մասին:

1995թ-ից սկսած այս հարցումը ամեն տարի է անցկացվում: Մոտ 50 խոշոր ներդրողներ լրացնում են հարցաթերթիկները, գնահատելով Լիտվայում իրենց բիզնեսին խոչընդոտող հիմնական հարցերը: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ ներդրողները գոհ են ստեղծված պայմաններից և եթե նորից ընտրություն կատարելիս լինեին, ապա կրկին կընտրեին Լիտվան: Հիմնական բարդությունների ցանկում նշվել էին՝ փոփոխվող օրենսդրությունը, բյուրոկրատիան և որոշումներ կայացնողների հետ կապի բացակայությունը:

Այս ուսումնասիրության արդյունքում 1996թ-ին ստեղծվեց արտասահմանյան ներդրողների ներկայացուցիչների և Լիտվայի իշխանությունների աշխատանքային հանձնաժողով, որի հանդիպումների ժամանակ քննարկվում էին տարբեր խնդիրներ: Արտասահմանյան ներդրողների

կարծիքները և առաջարկությունները հաշվի էին առնվում հարկային դաշտի, տեղեկատվության փոխանակման և մաքսային մարմինների աշխատանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու:

7.3.1 Գոհունակության գնահատումները

Նման տիպի ուսումնասիրությունները պատվիրվում են նախարարությունների կամ տեղական ինքնակառավարման իշխանությունների կողմից: Լիտվայում անցկացվող այս տիպի ուսումնասիրությունների մեծ մասը վերաբերում է կրթության, սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտների բարեփոխումներին:

1991թ-ից 1997-ը Վիլնյուսի համալսարանի սոցիոլոգիական լաբորատորիան անցկացրեց մի շարք ուսումնասիրություններ դպրոցներում և համալսարաններում, կրթական համակարգը և կրթական ծրագրերը գնահատելու նպատակով: Այս ուսումնասիրության արդյունքները օգտագործվել էին դպրոցների և համալսարանների ուսումնական պլանների մշակման համար:

Լիտվայի երիտասարդության հարցումը

Այս ուսումնասիրությունը անցկացրել էր 1997թ-ին Վիլնյուսի համալսարանի սոցիոլոգիական լաբորատորիան երիտասարդների հարցերով պետական խորհրդի պատվերով: Ընտրանքը կազմված էր 15-29 տարեկան 1000 երիտասարդներից: Ուսումնասիրությունը տարվել էր հետևյալ թեմաներով՝ երիտասարդների քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքը, երիտասարդների կյանքի հիմնական խնդիրները, պլանները և հեռանկարները: Ուսումնասիրվել և գնահատվել էր նաև տարբեր հաստատությունների աշխատանքը երիտասարդության հետ: Ըստ երիտասարդների Լիտվայի ամենակարևոր խնդիրներից են՝ մարդկանց ցածր կենսամակարդակը, հանցագործությունը և գործազրկությունը: Երկրի տնտեսական զարգացումը նշվել էր որպես ամենաառաջնահերթ խնդիր:

Երիտասարդների 50%-ը անտեղյակ էին երիտասարդների հարցերով զբաղվող հաստատությունների գոյության մասին: Երիտասարդների հարցերով զբաղվող հաստատությունների գործունեությունը երիտասարդները գնահատել էին անբավարար, նշելով դրանց պասսիվ աշխատանքային ոճը: Միայն հարցվողների 3%-ը անդամագրված էին որևէ երիտասարդական կազմակերպությանը: Լիտվայի երիտասարդները կցանկանային ավելի շատ շփվել այլ երկրների երիտասարդների հետ: Երիտասարդների միջազգային շփումներին խոչընդոտում էր ֆինանսական միջոցների պակասը: Դպրոցներում ստացված գիտելիքների մակարդակը երիտասարդների կողմից գնահատվել էր ոչ բավարար հետագա ուսումը բարձրագույն կրթական հաստատություններում շարունակելու համար: Ըստ երիտասարդների ուսումնական պլանները և մեթոդները պետք է վերամշակվեն, որպեսզի նպաստեն անկախ մտածելակերպ ունեցող երիտասարդների ձևավորմանը:

Այս ուսումնասիրության արդյունքները ներկայացվել էին Լիտվայի խորհրդարանին, մամուլին և օգտագործվել էին Երիտասարդների հարցերով պետական խորհրդի կողմից կրթական բարեփոխումների ծրագրերի մշակման համար:

Առողջապահության ոլորտի բարեփոխումների ժամանակ Vilmorus-ի, Baltic Surveys-ի և Վիլնյուսի համալսարանի սոցիոլոգիական լաբորատորիայի կողմից անցկացվել են մի շարք հասարակական կարծիքի հարցումներ, որոնց նպատակն էր ուսումնասիրել և գնահատել այդ ոլորտում առկա խնդիրները: Հատկապես ուսումնասիրվել էր մարդկանց կարծիքը որոշ պետական առողջապահական հաստատությունների սեփականաշնորհման վերաբերյալ: Ուսումնասիրությունները ֆինանսավորվել էին առողջապահության նախարարության կողմից: Այդ ուսումնասիրությունների արդյունքները չեն տպագրվել մամուլում և չեն հրապարակվել:

Պետական կառավարման ոլորտի էլիտայի և անձնակազմի գոհունակության գնահատման հարցումների արդյունքները նույնպես չեն հրապարակվել: Մեծ մասամբ դրանք իրականացվել են պետական հաստատության սեփական ռեսուրսների հաշվին:

Baltic Surveys-ի կողմից անցկացվել էր նման հարցում Եվրոպական հանձնաժողովի պատվերով:

Պետական ոլորտի էլիտայի իրազեկվածության մակարդակի գնահատումը

1996թ-ին Baltic Surveys-ի կողմից անցկացվեց մի հարցում, որին մասնակցեցին Եվրոպայի ինտեգրման գործընթացին մասնակցող պետական ոլորտի աշխատակիցները, քաղաքական գործիչները, խոշոր ձեռներեցները և մամուլի ղեկավարները: Ուսումնասիրության նպատակն էր պարզել այս խմբերի իրազեկվածության աստիճանը Եվրամիության գործընթացների, դրանց վերաբերող տեղեկատվության աղբյուրների վերաբերյալ: Հարցվողների մեծ մասը ցանկանում էին ստանալ ավելի շատ տեղեկատվություն Եվրամիության մասին և կողմ էին Լիտվայում Եվրամիությանը վերաբերող ամսագրի տպագրմանը: Արդյունքում 1996թ-ին Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպվեց «European Dialog» ամսագրի տպագրությունը 2000 տպաքանակով, որը տարածվում է Լիտվական էլիտայի շրջանակներում:

8. Պետական կառավարման հաստատությունների իմիջը

Սոցիալական հաստատությունների ուսումնասիրությունների մեծ մասը ուղղված էր կառավարության գործունեության գնահատման վրա: Շատ քիչ ուսումնասիրություններ են անցկացվել այլ պետական հաստատությունների գործունեությունը ուսումնասիրելու նպատակով:

1996թ-ին նման մի ուսումնասիրություն անցկացվել էր Baltic Surveys-ի կողմից, որը գնահատում էր Երիտասարդության հոգեբանական աջակցության կենտրոնի իմիջը և կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունները: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, թե ինչպիսի

աջակցություն պետք է ցուցաբերվի և որոնք են կենտրոնի գործունեությանը խոչընդոտող կարծրատիպերը և նախապաշարմունքները: Ստացված արդյունքները փոխանցվել էին կենտրոնին: Նման ուսումնասիրություններ շատ քիչ են անցկացվում Լիտվայում, ինչը պայմանավորված է ԶԿ-րի հասարակական կարծիքի հարցումների օգտագործման վերաբերյալ ցածր իրազեկվածությամբ և ֆինանսական միջոցների սակավությամբ: Ենթադրվում է, որ ԶԿ-րի սեկտորի արագ զարգացման հետ մեկտեղ նման հարցումների քանակը կավելանա:

9. Վարչական համակարգում հասարակական կարծիքի հարցումներից ստացված տեղեկատվության տեղադրումը

Չնայած նրան, որ հասարակական կարծիքի հարցումները ակտիվորեն օգտագործվում են Լիտվայում, չկա որևէ կենտրոնացված արխիվ, որտեղ կարող է պահվել ստացված տեղեկատվությունը: Յուրաքանչյուր հետազոտական ինստիտուտ պատասխանատու է իր կողմից ստացված տվյալների պահման համար:

Արտասահմանյան կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող հարցումների տվյալները պահվում են այդ կազմակերպություններում և չեն փոխանցվում Լիտվային:

Մի քանի հարցումների տվյալները, մասնավորապես Կենտրոնական և Արևմտյան Եվրոբարոմետրերի տվյալները, հասանելի են Լիտվայի հասարակության համար, քանի որ պահվում են Արևմտյան Եվրոպայի արխիվներում: Դրանցից կարելի է օգտվել կապվելով Եվրոպայի հանձնաժողովի Գլխավոր տնօրինության հետ: Ամերիկյան կազմակերպությունների կողմից անցկացված տվյալները պահվում են ԱՄՆ-ի արխիվներում: Լիտվայում գործում է ամերիկյան Gallup կազմակերպության մասնաճյուղը:

Լիտվայի կառավարության կամ պետական հաստատությունների կողմից անկացված հարցումների տվյալները հաշվետվությունների տեսքով պահվում են այդ հաստատություններում: Դրանք գրեթե հասանելի չեն այլ կազմակերպությունների համար: Շատ հաճախ այդ հաշվետվությունները անհայտանում են անձնակազմի փոփոխման հետ կապված:

10. Եզրակացություններ

Լիտվայում հասարակական կարծիքի հարցումների զարգացման և դրանցից ստացված տվյալների կիրառման ուսումնասիրությունը թույլ տվեց անել հետևյալ եզրակացությունները՝

- Լիտվայում հասարակական կարծիքի հարցումները սկսեցին արագ զարգանալ 1987թ-ից,
- հասարակական կարծիքի առաջին ազգային հարցումը անցկացվել էր 1989թ-ին, որից հետո այն դարձավ երկրի սոցիալական և քաղաքական կյանքի անբաժանելի մասը,

- մինչ 1992թ-ը՝ հետկոմունիստական ժամանակաշրջանի առաջին փուլում, Լիտվայի հասարակությունը ստացավ ազատ կարծիք հայտնելու հնարավորությունը; այդ ժամանակահատվածում հասարակության կողմից հարցումները ընդունվում էին մեծ պատրաստականությամբ, հարցումները օգտագործվում էին կառավարության և քաղաքական գործիչների կողմից վարչական և տնտեսական բարեփոխումների բոլոր փուլերում,
- 1992թ-ից սկսած հասարակության տրամադրությունները դարձան ավելի հոռետես, սոցիալական հաստատությունների նկատմամբ հասարակության վստահությունը նվազեց, հասարակության ուշադրությունը կենտրոնացավ սոցիալական խնդիրների վրա, հարցումների ֆինանսավորման կառուցվածքը փոփոխվեց՝ նվազեց ֆինանսավորումը Լիտվայի կառավարության կողմից, ավելացավ ֆինանսավորումը մամուլի և միջազգային կազմակերպությունների կողմից,
- Լիտվայում վերջին 6 տարիներին անցկացվող վարչական բարեփոխումների ընթացքում իրականացվող հասարակական կարծիքի հարցումների օգտագործման վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք հասարակության տարբեր խմբերի կարիքների, նախասիրությունների և գոհունակության գնահատման ամենակարևոր գործիքներից մեկն են; պարզվեց ,որ Լիտվայի հետկոմունիստական պատմությունը ունի վարչական բարեփոխումների ընթացքում հասարակական կարծիքի հարցումների կիրառման շատ հաջողված օրինակներ,
- հարցումների արդյունավետության բարձրացման և լայն կիրառման հարցում որոշիչ դեր ունեին հետազոտողների և որոշումներ կայացնողների ջանքերը,
- տեղեկացնելով որոշումներ կայացնողներին հարցումների հնարավորությունների, կիրառման շրջանակների և արդյունավետության վերաբերյալ, հետազոտողները ավելի ակտիվ են ներգրավվում հետկոմունիստական շրջանի բարեփոխումների պլանավորման և կիրառման գործընթացներին,
- ավելի շատ ուշադրություն պետք է հատկացվի շարունակական ծրագրերին՝ բարեփոխումների գործընթացը մոնիտորինգ անելու նպատակով,
- հասարակական կարծիքի հարցումների մեթոդաբանությունը պետք է դասավանդվի համալսարաններում, քանի որ սոցիոլոգիան դեռ հանդիսանում է Լիտվայի կրթական համակարգի թույլ կողմերից մեկը;

Հղումներ

- Alisauskas, J., R. Alisauskiene, and R. Bajaruniene (1993), “Newly Created States in East Central Europe: Expectations and Reality. Case of Lithuania”, *Focus*, Bratislava, Slovak Republic.
- Alisauskiene, R. and R. Bajaruniene (1993), “Public Support for the Closer Baltic Co-operation”, *The Baltic Review*, Vol. 4, No. 4.
- Alisauskiene, R., R. Bajaruniene, and B. Sersniova (1993a), “Economic Values and Activities of Lithuanian People (1990-1993)”, *Formation of the Middle Class in Transition Societies*, Tallinn, Estonia.
- Alisauskiene, R., R. Bajaruniene, and B. Sersniova (1993b), “Policy Mood and Socio-Political Attitudes in Lithuania”, *Journal of Baltic Studies*; Vol. XXIV, No. 2, Summer.
- Horichter, J. and I. Weller (1993), *On the Application of the Left-Right Schema in Central and Eastern Eurobarometer Surveys*, Mannheim, Germany, April.
- “Public Opinion About the European Community”, *Central and Eastern Eurobarometer*, No. 2-7, Brussels, Belgium, 1992-1997.
- Sociological Laboratory of Vilnius University (1991), *The Features of the Political Consciousness of Lithuanian People*, Survey report, March. In Lithuanian.
- Sociological Laboratory of Vilnius University (1997), *The Portrait of Lithuanian Youth – 1997*, Analytical report. In Lithuanian.
- Stimson, J.A. (1991), *Public Opinion in America. Moods, Cycles and Swings*, Westview Press, Oxford, England.

**Չավելված՝ Լիտվայում խոշոր հասարակական կարծիքի հարցումներ կատարող
ինստիտուտների հասցեները**

Baltic Surveys Ltd.: Lithuanian-British joint venture, member of Gallup and ESOMAR

47 Didlaukio str., LT-2057 Vilnius, Lithuania

Tel. (370 2) 76 27 90; Fax (370 2) 76 26 81

e-mail: baltic_surveys@post.omnitel.net

Director: Dr. Rasa Alisauskiene

Vilmorus: Member of ESOMAR

4, Tilto str., LT-2001 Vilnius, Lithuania

Tel. (370 2) 62 40 83; Fax (370 2) 61 09 89

Director: Dr. Vladas Gaidys

Sociological Laboratory of Vilnius University

3, Universiteto str., LT-2600 Vilnius, Lithuania

Tel. (370 2) 76 24 62; Fax (370 2) 65 21 02

Sociologija Fund

47, Didlaukio str., LT-2057 Vilnius, Lithuania

Tel./Fax (370 2) 65 21 02

President: Dr. Laima Zilinskiene

Lithuanian Free Market Institute

56 Birutes str., LT-2004 Vilnius, Lithuania

Tel. (370 2) 72 25 84; Fax (370 2) 72 12 79

President: Dr. Elena Leontjeva

Institute of Philosophy And Sociology, Lithuanian Academy of Science

58, Saltoniskiu str. LT-2600 Vilnius, Lithuania

Tel. (370 2) 75 18 98; Fax (370 2) 75 18 98

Director: Dr. V. Bagdonavicius